

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

№ 18-19

2017

ԵՐԵՎԱՆ 2017

Գլխավոր խմբագիր՝ Արա ԻՍՊԻԲՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Լևոն ՄԿՐՏՉՅԱՆ - ԿԳ նախարար
Մանուկ ՍԿՐՏՉՅԱՆ - ԿԳ փոխնախարար
Արա ԻՍՊԻԲՅԱՆ – ԳԹԿ տնօրեն
Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն
Ալեքսան ԵՍՍՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի պետ
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ
Աշոտ ԴԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր
մասնագետ


Խմբագրական կազմ՝

Լիանա ՎԱՐԴԱՆՅԱՆ
Սիքայել ԽՈՍՐՈՎՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4
Հեռ. (+374 10) 55-32-65
E-mail: gtk2005@web.am
www.atc.am

ՀՈՒՎԱԾՆԵՐ



ՀՀ հանրակրթության զարգացման հեռանկարները*

Նախաբան

Ինչպես բազմիցս նշել ենք՝ հանրակրթությունը վերջին հարյուրամյակին բնորոշ երևույթ է: Հանրակրթության կայացումը որպես մտագոծունեության ինքնակա ոլորտ պայմանավորված է նրանով, որ դրվում է հանրության ընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի խնդիր: Ընդ որում՝ միաժամանակ առաջ է գալիս այդ ընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի բովանդակության սահմանման խնդիրը: Ի տարբերություն որակյալ մասնագետի պատրաստման խնդրի, որտեղ ուսուցման բովանդակությունը կազմում են մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները, հանրակրթության բովանդակությունը ներառում է այնպիսի ունիվերսալ ու վերառարկայական բնույթի բաղադրիչներ, ինչպիսիք են մտածողության ընդհանուր մեթոդները, մտահաղորդակցության ընդհանուր ունակությունները, արժեքային համակարգը և, իհարկե, աշխարհայացքային ամբողջություն ներկայացնող գիտելիքների համակարգը: Հանրակրթության բովանդակությունն այն գրավականն է, որն ապահովում է հանրության ինքնավերարտադրումը: Սակայն հանրության հարատևումը ենթադրում է վերարտադրման գործընթացներին զուգընթաց զարգացման գործընթացների առկայություն: Հանրության զարգացումը ինքնըստինքյան ընթացող երևույթ չէ, այն ենթադրում է առանձնահատուկ կառավարման մեթոդներ ու ներհանրային մեխանիզմներ: Սակայն վերջիններս կարող են ապահովել ընդհանուր զարգացում, եթե առկա են հանրության համընդհանուր գաղափարական հիմքերը: Հենց գաղափարակա հիմքերն են սահմանում հանրակրթության

* Առաջին տպագրությունը տես Մկրտչյան Մ., «ՀՀ հանրակրթության զարգացման հեռանկարները // Բարունի ՍՊԸ, Երևան, 2016թ. – 30 էջ:

նպատակներն ու բովանդակությանը օժտում տվյալ հանրությանը բնորոշ յուրահատկություններով:

1. Ազգային գաղափարախոսությունը և հանրակրթությունը

Ազգային գաղափարախոսության հարցը վերջին տարիներին անընդհատ քննարկվող և անչափ շատ շահարկվող հարցերից է: Գաղափարախոսության ելակետային հիմքերի որոշման վերաբերյալ հիմնական քննարկվող մոտեցումներն են¹.

- քրիստոնեությունը և Հայ առաքելական սուրբ եկեղեցու վարդապետությունը,
- ազգային մշակութային արժեքների, ավանդույթների ու սովորույթների պահպանումը,
- ցեղակրոնությունը,
- ժողովրդավարական արժեքների յուրացումն ու ինտերգրումը արևմտյան քաղաքակրթական հանրությանը:

Թեև այսօր առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ, գիտական ու քաղաքական աշխատություններ՝ հարցը դեռ մնում է չլուծված:

Սակայն նկատենք մի շատ կարևոր հանգամանք. մեզանում հանրակրթության բարեփոխման և զարգացման ծրագրերի մշակման խնդիրները լուծվում են անկախ այս հիմնահարցից: Լավագույն դեպքում հայտարարվում ու մատնանշվում է հանրակրթության կազմակերպման հարցերում ազգային առանձնահատկությունները հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Ազգային գաղափարախոսության հիմնադրույթները: Մեր խորին համոզմամբ՝ «ազգային գաղափարախոսություն» հասկացությունը նախ պետք է ածանցվի ավելի լայն հասկացությունից, նրա բովանդակությունը պետք է ներառի այն գաղափարները, որոնք ուղղված են ապագային՝ լինելով ազգային պատմությանը համահունչ, ազգային ոգուն հոգեհարազատ, ազգային խնդիրներին ներդաշնակ:

¹ Տե՛ս, օրինակ, Խոդինյան Գ. Ազգային և Ազգային-պետական գաղափարախոսություն // «Նորավանք» գ/կ հիմնադրամ, Երևան, 2003 թ.- 96 էջ; Լալայան Մ. Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ // «Նորավանք» Գ/կ հիմնադրամ, Երևան, 2003 թ. – 68 էջ; Հովականյան Յ. Հ. Հայ մտավորականությունը և ազգային գաղափարախոսությունը // Երևան, «Տնտեսագետ», 2005 թ.- 160 էջ:

Էդվարդ Ղազարյանը մի առիթով նշում է. «Հայ ժողովրդի պատմությունը լի է առեղծվածներով. ամենաձանր ժամանակներում, երբ դրված էր հայի լինել չլինելու խնդիրը, ժողովրդի հոգևոր կենտրոնացումը սկզբավորում էր մշակութային զարթոնք, որն այնուհետև դառնում էր ազգային գոյատևման կարևոր կովան»²:

Երրորդ հազարամյակի առանձնահատկությունն այն է, որ համամարդկային համակեցության սուբյեկտները միմյանց հասանելի են անմիջական փոխազդեցության և փոխգործունեության համար (այլ կերպ ասած՝ բոլորը բոլորին հարևան են):

Այս իրավիճակում յուրաքանչյուր սուբյեկտի հիմնական խնդիրը նրա հետագա գոյատևումն է որպես պատմահասարակական զարգացման կարևոր սուբյեկտի: Հայ ժողովրդի համար այդ մարտահրավերը կոնկրետանում է յուրահատուկ հիմնահարցով. ապահովել հետագա գոյատևումն այնպես, որ մի կողմից այն չհանգեցնի ձուլվելու առավել հզոր էթնոմշակութային հասարակարգերին, մյուս կողմից՝ հայությունը աննկատելիորեն չվերածվի «ֆոլկլորային» հանրույթի՝ իր յուրահատուկ պատմական անցյալով:

Այդ խնդրի գոյությունը պարտադրում է գրավել սեփական ապագան կերտողի կոշտ դիրք՝ համաշխարհայնացման գործընթացների սուբյեկտի ինքնագիտակցությամբ:

Ի՞նչ է նշանակում սեփական ապագան կերտողի կոշտ դիրքորոշում: Դա նշանակում է հետևողականորեն կառուցել պետական ու հասարակական կյանքի կազմակերպման սեփական տարբերակը՝ համարձակվելով հանդես գալ որպես ինքնուրույն քաղաքակրթական կենտրոն:

Ի՞նչ է նշանակում համաշխարհայնացման գործընթացների սուբյեկտի ինքնագիտակցում: Դա նշանակում է գիտակցել ու համարել հնարավոր, որ սեփական նվաճումները կարող են արժեք ներկայացնել այլոց համար և փոխառվել այլոց կողմից:

Հետևաբար, սեփական ապագան կառուցողի գործունեությունը ենթադրում է նորարարական ոգու անընդհատ ներշնչում ու ամրապնդում, սոցիալական իրողության նոր դրվագների և ապագա կենսակերպի նախատիպերի ստեղծման արժեվորում:

² Ղազարյան է. Ազգային հպարտության ստեղծարար ուժը // «Մանկավարժություն» գիտամեթոդական ամսագիր, 2007 թ., N3-4, էջ 90-100:

Նման գաղափարի իրականացումը պետք է լինի համազգային խնդիր, այլ ոչ առանձին անհատների ապրելակերպ: Դրա համար պետք է ապահովել ներքին կյանքի կազմակերպման յուրահատուկ ձևեր՝ հետևյալ անհրաժեշտ առանձնահատկություններով.

- նորարարություն, ստեղծագործության համընդհանուր գերակայություն,
- կարևորագույն պրոբլեմների լուծման և կառավարման գործընթացներում բարձր արդյունավետությամբ օժտված կոլեկտիվ մտագործունեական միջոցառումների գերակայություն,
- համակարգային բարեփոխումներ իրականացնող սուբյեկտների քանակական գերիազեցվածության ապահովում:

Հանրակրթության խնդիրները ազգային գաղափարախոսության համատեքստում: Վերոհիշյալ գաղափարախոսությունը ազգային առանձնահատկություն դարձնելու խնդրում առաջնային դերը հանրակրթությանն է: Նախ կրթության բովանդակության կարևորագույն բաղադրիչ պետք է դարձնել համամարդկային մշակույթը: Առանց յուրացնելու այն, անհնար է արժեք ներկայացնող որևէ նորարարություն: Հաջորդ կարևորագույն բաղադրիչը պետք է լինեն ստեղծագործական ունակություններն ու կարողությունները: Մտեղծագործական ունակություններն ու կարողությունները հանրակրթության բովանդակային բաղադրիչ դարձնելը, փաստորեն, նշանակում է հանրության յուրաքանչյուր անդամի դարձնել ստեղծագործող ու արարող: Սակայն նշենք շատ կարևոր մի հանգամանք. ինքնուրույն քաղաքակրթություն կառուցելը ենթադրում է կոլեկտիվ մտածողություն և կոլեկտիվ գործելակերպ: Հետևաբար, կոլեկտիվ մտածողության տեխնոլոգիաներն ու համագործակցային աշխատանքի նորմերը անհրաժեշտաբար պետք է ներառվեն հանրակրթության բովանդակության բաղադրիչների ցանկում: Նկատենք, որ հանրակրթության բովանդակության նման շրջադարձային վերակառուցումը զիտական աշխարհայացքի ձևավորման փոխարեն առաջին պլան կմղի վերոհիշյալ որակներով օժտված յուրաքանչյուր անհատի և հանրության ձևավորման խնդիրը, ինչը ենթադրում է նաև ուսումնադաստիարակչական գործընթացների բնույթի արմատական վերափոխում: Հանրակրթական հաստատություններն իրենց ներքին կառուցվածքով ու գործունեության կազմակերպման ձևերով պետք է լինեն ազգային գաղափարախոսությունն իրականացնող և առաջանցիկ տարածքներ:

2. Համակարգային բարեփոխումների մեթոդաբանությունը

Հայաստանի Հանրապետության անկախացումից հետո առաջացան պետականության կերտման և հասարակական կյանքի ինքնուրույն կազմակերպման բավական լուրջ ու դժվար խնդիրներ: Միալված չենք լինի, եթե ասենք, որ Հայաստանի Հանրապետության վերջին տասնամյակի ներքաղաքական ու հասարակական կյանքի երևույթներից մեկը անընդհատ բարեփոխումների ու պետականակերտման գործընթացների առկայությունն է: Դրանց թվում կարևորագույններից մեկը կրթության ոլորտի կազմակերպման, կառավարման, ինչպես նաև ներուլորտային և արտուլորտային հարաբերությունների կարգավորման խնդիրն է: Այդ խնդրի բարդությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով.

- Խորհրդային Հայաստանում գործում էր արդեն կայացած և արմատավորված կրթական համակարգ, որի իներցիոն ընթացքի հաշվին հնարավոր եղավ հետխորհրդային շրջանում պահպանել ու ապահովել կրթության ոլորտի գործառնությունը: Սակայն նոր պայմաններին հարմարեցված այդ համակարգը իր բնական դիմակայությամբ արդեն խոչընդոտում է համակարգային փոփոխություններին:
- Տնտեսապես զարգացած երկրները ստեղծել են նաև զարգացած կրթական համակարգեր, որոնք թյուրիմացաբար ընկալվում են որպես ընդօրինակման գալթակղիչ նմուշներ:
- Պետական, քաղաքական ու հասարակական գործիչների շրջանում համատարած է այն թյուր կարծիքը, թե նոր զարգացող կամ, այսպես կոչված, անցումային շրջանում գտնվող երկրների համար գոյություն ունեն ընդհանուր օրինաչափություններ, որոնք էլ պետք է լինեն այդ երկրների զարգացման ուղեցույցները: Կրթության ոլորտում այս հանգամանքը դրսևորվում է նրանով, որ կրթական նոր համակարգի ստեղծման հարցը վերածվում է առաջավոր երկրների փորձի տեղայնացման ու ներդրման խնդրի:

Ցավոք, առայժմ հասարակական վերակառուցումների բարդ խնդիրներ լուծվում են ապրիորի մոտեցումներով, որի հետևանքով տիրում է մեթոդաբանական անարխիա:

Սակայն մի բան է բարեփոխումների հայեցակարգերի ու ծրագրերի մշակման հարցը և բոլորովին այլ բան՝ հասարակական իրողության համակարգային փոփոխությունների իրականացումը:

Նորից անդրադառնանք մեզանում ընդունված ու հաճախակի կիրառվող մոտեցմանը. ստեղծվում է աշխատանքային խումբ, որը մշակում է անհրաժեշտ հիմնադրույթները և կազմում համապատասխան փաստաթղթի նախագիծը: Նախագիծը դրվում է հանրային քննարկման, այնուհետև վերամշակվում է և ներկայացվում հաստատման: Դրանից հետո մշակվում ու հաստատվում է փաստաթղթի հիմնադրույթների իրականացման միջոցառումների պլանը և ժամանակացույցը:

Անկասկած, հանրության կարծիքն ու վերաբերմունքը վճռորոշ նշանակություն ունեն նախատեսված բարեփոխումների համար: Մակայն չէրկնչենք նորից պնդելու, որ կարևորագույն նշանակություն և խորը մասնագիտական բնույթ ունեցող հարցերում հասարակական գիտակցության ձևավորման խնդիրը դառնում է ավելի առաջնային ու կարևոր, քան հանրային կարծիքը հաշվի առնելը: Այլ խոսքով՝ հանրային կարծիքին պետք է դիմել այն ժամանակ, երբ հանրության հավաքական գիտակցությունը պատրաստ ու ընդունակ է պատկերացնելու և ընկալելու առաջարկվող փոփոխությունների իմաստն ու նշանակությունը:

Հանրային գիտակցության ձևավորումը չի սահմանափակվում հարցի պարզաբանմամբ ու քարոզությամբ: Այն ենթադրում է նաև համապատասխան իրողության առկայություն: Այսինքն՝ հայեցակարգային պատկերացումների ձևավորումը պետք է զուգակցվի հասարակական միջավայրում համապատասխան իրողություն ստեղծելու հետ: Դա ոչ միայն հիմք կհանդիսանա հանրային պատկերացումների ձևավորման համար, այլ նաև հնարավորություն կտա ստեղծելու հասարակական փոփոխություններ կատարելու մեխանիզմներ:

Սա արդեն հասարակական համակարգային փոփոխությունների իրականացման այլ մեթոդաբանություն է: Առանձնացնենք այդ մեթոդաբանության կարևորագույն պահերը:

- Համընդհանուր մտահաղորդակցման միջոցառումներ՝ հարցի քննարկման (նկատենք՝ հարցի, այլ ոչ թե նախագծի) ու հայեցակարգային հիմնադրույթների մշակման համար:
- Նախատեսվող փոփոխությունների իրականացման համար հատուկ տարածքների ստեղծում և գործնական կառուցումների իրագործում: Սրանք, փաստորեն, առաջանցիկ տարածքներն են, որոնք հանդես են գալու որպես ապագա իրողության նմուշօրինակներ (նկատենք սրանք հայտնի փորձարարական տարածքները չեն: Այստեղ ոչ թե փորձարկում, այլ կառուցում են):

- Հայեցակարգային պատկերացումների ձևակերպում և իրավական դաշտի ստեղծում առաջանցիկ տարածքների նվաճումների համընդհանուր տարածման համար:
- Կադրերի վերապատրաստում և հայեցակարգային հիմնադրույթների համատարած իրականացում:

3. Հանրակրթության զարգացման հիմնախնդիրները:

Հանրակրթության բովանդակության վերակառուցման հիմնախնդիրը

Արդեն բազմիցս նշել ենք, որ հանրակրթության բովանդակության վերակառուցման հարցը վերաբերում է բովանդակության միավորին: Ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը:

Ներկայիս հանրակրթության բովանդակության միավորը գիտելիքներն ու տեղեկություններն են: Որպես դրա անմիջական հետևանք, հանրակրթության բովանդակությունը կազմում են գիտության տարբեր ոլորտները ներկայացնող ուսումնական առարկաները: Ընդ որում, առարկայական ծրագրերը և համապատասխան դասագրքերը գիտելիքների ու տեղեկությունների համակարգված ամբողջությունն են, իսկ դասընթացը կառուցվում է որպես այդ գիտելիքների ու տեղեկությունների ամբողջության աստիճանական յուրացման գործընթաց: Ենթադրվում է, որ հանրակրթական այլ որակական հատկանիշներ, օրինակ՝ մտավոր ունակությունների զարգացումն ու կարողությունների ձեռքբերումը, ապահովվում են ինքնըստինքյան, որպես գիտելիքների յուրացման գործընթացի հետևանք, որպես ուսուցման գործընթացի օժանդակ արդյունք:

Վերջերս հանրակրթության բովանդակության վերակառուցման խնդրում հաջողվեց կատարել շատ կարևոր մի քայլ՝ կրթակարգում ներմուծվել է <<հանրակրթության բովանդակության բաղադրիչներ>> հասկացությունը և առանձնացվել են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են գիտելիքների համակարգը, հաղորդակցման, համագործակցային, ինքնակազմակերպման և ստեղծագործական կարողություններն ու հմտությունները, արժեքային համակարգը:

Մակայն դեռ լուծված չէ առանձնացվածները իսկապես բաղադրիչներ դարձնելու խնդիրը: Առայժմ ուսումնական առարկաների ծրագրերը կազմվում են գիտելիքների համակարգի վրա, իսկ դասընթացները ենթադրվում է կազմակերպել այնպես, որ գիտելիքների յուրացման ընթացքը նպաստի որպես բաղադրիչներ առանձնացված որակների ձևավորմանը: Ինչպես նկատում են Գ. Մելիքյանն ու Ս. Գալոյանը՝

<<Մենք, պետական գերակայությունները կրթական համակարգում արտացոլելիս, ղեկավարվում ենք գիտելիքային-տեղեկատվական մոտեցման կարծրատիպով, յուրաքանչյուր գերակայության համապատասխան դպրոց ենք ներմուծում առարկաներ, ենթագիտակցաբար տեղի տալով այն մտայնությանը, թե միայն գիտելիքն է ստեղծում ամեն մի որակ>>³:

Հենց սրանով էլ թե ինչն է կազմում ուսումնական ծրագրի հիմքը, ինչին է նվիրված ուսումնական գործընթացը, ինչի յուրացումն է հսկվում ու գնահատվում, որոշվում է, թե ինչն է հանդիսանում բովանդակության բաղադրիչ:

Քաղաքացիական կրթությունը: Կրթության ոլորտում (և ոչ միայն այդ ոլորտում) շատ հաճախ քննարկում են սահմանադրության և օրենսդրական համակարգի ժողովրդավարության հարցերը, բայց շատ քիչ են անդրադառնում ժողովրդավարական հասարակության անհատին անհրաժեշտ որակի և վարվելակերպի ձևավորման խնդիրներին:

Բազմիցս նշվել է, որ ժողովրդավարական հասարակությունը դրսևորվում ու ներկայանում է

- պետական մակարդակով, որը բնորոշվում է սահմանադրությամբ և օրենսդրական համակարգով,
- հասարակական միջավայրի մակարդակով ներկայացվում է ժողովրդավարական կաթուղիներն ու ապրելակերպը,
- անհատական մակարդակով, որը ենթադրում է ժողովրդավարական հասարակությանը համապատասխան անձի հատուկ որակ և վարվելակերպ:

Հենց այս ամբողջությամբ է որոշվում քաղաքացիական կրթության իմաստն ու նշանակությունը, որոնք էլ պայմանավորվում են ինչպես նրա բովանդակությունն ու ուսումնադաստիարակչական ծրագրերը, այնպես էլ կրթության կազմակերպումն ու ուսումնադաստիարակչական գործընթացների բնույթը:

Ժողովրդավարական հասարակարգի քաղաքացի լինելու ամենանհրաժեշտ պայմանը հասարակական կյանքի կազմակերպման ու կառավարման գործուն մասնակից լինելն է, որը ենթադրում է հասարակական **երևույթների վերլուծություն**, հասարակական **գործընթացների կառավարման**, հասարակական **իրադարձություններում կողմնորոշվելու** և հասարակական **իրադրությունների վրա ազդելու** յուրատեսակ գիտելիքների ու կարողությունների ձեռքբերում:

³ Մելիքյան Գ., Գալոյան Ս. Չափորոշչափեն կրթությունը Հայաստանի Հանրապետությունում // <<Մանկավարժություն>> գիտամեթոդական հանդես, 2011 թ., N 5, էջ 5-12:

Սակայն այստեղ զգացնել է տալիս այն, որ հասարակական իրադրություններում կողմնորոշվելու ու գործելու մեթոդներն ու միջոցները ոչ միայն բավարար չափով չեն մշակված, այլ նաև ընդգրկված չեն ինչպես հանրակրթական, այնպես էլ մանկավարժական կադրերի պատրաստման և վերապատրաստման ծրագրերում:

Այդ առումով, մեր խորին համոզմամբ, բավական լուրջ առաքելություն ունեն «Քաղաքացիական կրթություն», «Կյանքի հմտություններ» և նմանատիպ այլ ուսումնական առարկաները: Այս առարկաների նպատակների, բովանդակության ու ծրագրերի մշակման և ուսուցիչների վերապատրաստման գործընթացներում էլ հենց կարելի է ստեղծել և աստիճանաբար կատարելագործել նոր դարաշրջանին համապատասխան կրթության կազմակերպման նմուշներ:

Սակայն նկատենք մի շատ կարևոր հանգամանք. որպեսզի քաղաքացիական կրթությունը աշակերտի համար չդառնա խաղի ու ժամանցի առարկա, անհրաժեշտ է, որ հենց դպրոցական կյանքն իր ամբողջությամբ դառնա նրա համար ժողովրդավարական հասարակության գաղափարախոսության ընկալման, յուրացման և իրագործման դաշտ:

Ավելին, կրթության ոլորտն իր կառուցվածքով, ներուլորտային փոխհարաբերություններով, գործունեության կազմակերպման մեթոդներով ու միջոցներով կարող է ու պետք է հանդիսանա առաջանցիկ հետազոտությունների ու հասարակարգային կառուցումների տարածք, որտեղից էլ կփոխառվեն, կյուրացվեն ու հասարակության այլ ոլորտներում կտարածվեն ժողովրդավարության կարևորագույն սկզբունքներն իրականացնող կենսակերպեր:

Մանկավարժական կադրերի պատրաստման հիմնախնդիրը:

Մանկավարժական կադրեր պատրաստում են հիմնականում պետական մանկավարժական բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք պատրաստում են ուսուցիչներ, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի մանկավարժության մագիստրատուրան, որը կոչված է պատրաստելու կրթության կազմակերպիչների: Ցավոք, այս հաստատություններում գործում է ավանդական դասախոսություն-սեմինարային համակարգը, որը հիմնականում ծառայում է մանկավարժական տեղեկությունների հաղորդմանը: Մանկավարժական գործունեության յուրացումն իրականում տեղի է ունենում հետբուհական աշխատանքային կյանքում: Լինելով ուսումնական մանկավարժական հաստատությունները ուսանողների համար

չեն հանդիսանում մասնագիտական կարողությունների ձեռքբերման գործունեական դաշտեր:

Մանկավարժական կադրերի անընդհատ (շարունակական) կրթության հիմնախնդիրը: Կարելի է վստահորեն համարել, որ մանկավարժական կադրերի վերապատրաստման ու մասնագիտական որակի կատարելագործման աշխատանքները տապալված են: Կրթության ու գիտության նախարարությունը դեռ չի կարևորել կադրային քաղաքականության մշակման ու իրականացման հարցը: Կրթության ազգային ինստիտուտը չունի մանկավարժական կադրերի վերապատրաստման ու մասնագիտական որակի կատարելագործման հայեցակարգ: Մարզային կրթության բաժիններում բացարձակորեն անտեսված են կրթության զարգացման ռազմավարության, մասնավորապես՝ կադրային քաղաքականության հարցերը: Առանձնակի արդյունավետություն չի նկատվում նաև բազմաթիվ հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող դրամաշնորհային միջոցառումներում:

Բավական դժվար է ուսուցիչների վերապատրաստումը: Դա պայմանավորված է նրանով, որ ուսուցիչը ոչ միայն պետք է լինի համապատասխան գիտելիքների կրողը, տիրապետի դասապրոցեսի կազմակերպման մեթոդիկային, այլև հանդիսանա ժողովրդավարական հասարակությանը համապատասխան անձնավորություն՝ այդ հասարակության անդամին բնորոշ վարվելակերպով ու աշխարհայացքով, մարդկանց նկատմամբ ունեցած վերաբերմունքով, հասարակական կյանքի կատարելագործման գործընթացներին ակտիվ մասնակցությամբ և այլն: Խնդիրը ոչ թե այդպիսի ուսուցիչների հայտնաբերումն է, այլ ուսուցիչներին այդպիսին դարձնելը: Հետևաբար, հենց ուսուցիչների վերապատրաստման դասընթացներն էլ պետք է լինեն փորձարկման և վարժանքի այդ դաշտը, որտեղ ուսուցիչը կկարողանա նպատակատու դրված իրագործել ինքնավերլուծության, ինքնաճանաչման և ինքնավերափոխման խնդիրները:

Մանկավարժական նորարարության կազմակերպումը: Նոր կրթական պրակտիկայի ստեղծմանն ողոված հետազոտությունները կարող են կազմակերպվել միայն այդ նոր պրակտիկայի ստեղծման գործընթացում՝ որպես վերջիններիս անհրաժեշտ բաղադրիչ մաս: Այս սկզբունքը ենթադրում է մանկավարժական նորարարական տարածքների համալիրի առկայություն, որը ներառում է

ա) որոնողական, նորը ստեղծող տարածքներ (այստեղ ստեղծվում և գործում են որպես նորույթ ներկայացվող ապագա մանկավարժական պրակտիկայի դրվագները),

բ) նորաներդրողական-հետազոտական տարածներ (այստեղ հետազոտվում ու կառուցվում են որոնողական տարածքներում ստեղծված նորույթների վերարտադրման ձևերն ու միջոցները),

գ) մանկավարժական նոր ավանդույթը ներկայացնող տարածքներ (սրանք նորույթի զանգվածային կիրառման տարածքներ են):

Մի կողմից նման նորարարական տարածքների համալիրը տարբեր մասնագետների՝ մեթոդաբան-փիլիսոփաների, տեսաբան-գիտնականների, կառավարիչների, պրակտիկ-մանկավարժների, մեթոդիստների և այլոց համագործունեության դաշտ է, մյուս կողմից՝ այն հնարավորություն է տալիս ստեղծելու նոր մանկավարժական պրակտիկայի սուբյեկտներ ձևավորող իրադրություններ:

4. Հանրակրթությունը երրորդ հազարամյակում

Երրորդ հազարամյակ թևակոխած մարդկության և յուրաքանչյուր մարդու մանկավարժական աշխարհայացքն այնքան խիստ է կադապարված դաս, դասարան, դասացուցակ, դասամատյան, դասագիրք, ուսումնական առարկա, ուսուցիչ, դպրոց, բուհ, դասախոս և նման այլ հասկացություններով, որ կրթության կազմակերպումն այս ձևերից դուրս ոչ միայն չի պատկերացվում, այլև նույնիսկ այդ մասին քննարկումները համարվում են անհեթեթ:

Անհնար է չնկատել, որ մանկավարժական պրակտիկայի նորարարների և ստեղծագործ ուսուցիչների հնարամտություններն ու հայտնագործությունները քիչ թե շատ արդյունավետ են դառնում միայն այն դեպքում, երբ ինչ-որ չափով վերափոխվում է ներկայիս դաս-դասարանային համակարգի անքակտելի մաս համարվող այս կամ այն սկզբունքը:

Սա պատահական չէ: Թեպետ ներկայումս գործող ուսուցման գործընթացում ենթադրվում են աշակերտների ազատ մրցակցային փոխհարաբերություններ, իրականում նրանք հայտնվում են շահերի հակադրման իրավիճակում: Հանրակրթության պայմաններում սա ոչ այնքան նպաստում է յուրաքանչյուրի զարգացմանը, որքան պատճառ է

դառնում ուսուցման նկատմամբ համընդհանուր անտարբերության ձևավորմանը:

Համագործակցային հարաբերությունների վրա կառուցվող ուսումնա-դաստիարակչական գործընթացները վաղ թե ուշ հանգեցնելու են կրթության կազմակերպման ավանդական ձևերի վերանայմանը:

Ակնհայտ է, որ կլինեն ուսումնական պարապունքները, բայց դրանք չեն լինի դասերի ձևով և, այսպես կոչված, ընդհանուր ճակատով կազմակերպված:

Անշուշտ, կլինեն կրթական հաստատություններ, բայց անհնար կլինի դրանք տարանջատելը միջնակարգ, միջին մասնագիտական կամ բարձրագույն տեսակների:

Ակներև է, որ կլինեն հատուկ կազմակերպված ուսումնադաստիարակչական գործընթացներ, բայց դրանք ոչ թե կմեկուսացվեն այս կամ այն կրթօջախում, այլ կհամատեղվեն ու կգուգակցվեն գիտահետազոտական, արտադրական և այլ տեսակի գործընթացների հետ:

Իհարկե, կտրվեն մասնագիտական որակավորման վկայականներ, բայց դրանք կարձանագրեն ոչ թե որևէ կրթական հաստատության ծրագրի յուրացման, այլ շարունակական բնույթի **անհաստականացված** կրթական ծրագրի հերթական աստիճանի նվաճման փաստը:

Կրթության կառավարման վերադաս մարմինների փոխարեն երևան կգան տարածքային և միջտարածքային տեղեկատվական, վերլուծական, նախագծային, փորձագիտական, ինչպես նաև անընդհատ գործող մտահաղորդակցական կենտրոններ:

Կրկնենք, որ հասարակական կյանքի կազմակերպման այսպիսի արմատական վերափոխությունները ենթադրում են կրթության ոլորտի **վերափմաստավորման** և կրթության կազմակերպման **նորագույն ձևերի կառուցման** հիմնախնդիրներ, որոնք պահանջում են ոչ այնքան լուրջ ֆինանսական, որքան ինտելեկտուալ ներդրումներ: **Եվ, անկասկած, մարդկության ապագան կստորինեն հենց այն երկրներն ու ազգերը, որոնց կհաջողվի հատկապես այս տիրույթում մասնակցել համամարդկային ստեղծագործության գործընթացներին և ունենալ որոշակի նվաճումներ անկախ իրենց ներկա կարգավիճակից:**

Մերի ԹՎԳԵՎՈՍՅԱՆ

ԳԹԿ կազմակերպական բաժնի առաջատար մասնագետ

ՀՀ հանրակրթության գնահատման համակարգը

Հանրակրթական հաստատություններում գնահատումը իրականացվում է տարբեր մակարդակներում, տարատեսակ և տարբեր նպատակներով: Գնահատմամբ պարզվում է սովորողների և դպրոցների կողմից առարկայական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարումը: Գնահատման նպատակն է.

- սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը,
- արժեքային որակների ձևավորման ապահովումը:

Ըստ էության, գնահատումը սովորողի գիտելիքների չափումն է, որի արդյունքում սովորողը (դրական գնահատական ստանալու դեպքում) փոխադրվում է հաջորդ դասարան կամ ավարտում է դպրոցը:

Տարրական դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողության և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը⁴: Տարրական դպրոցն ավարտելու համար իրականացվող գիտելիքների ստուգման նպատակն է պարզել՝ արդյո՞ք սովորողը ունի բավարար տրամաբանություն, լեզվամտածողություն, որպեսզի ուսումը շարունակի միջին դպրոցում: Միջնակարգ կրթության առաջին աստիճանը՝ չորրորդ դասարանը ավարտելու համար կատարվում է աշակերտի գիտելիքների ստուգում. «Մայրենի» առարկայից՝ թելադրություն և «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր աշխատանք

⁴ՀՀ օրենքը կրթության մասին, գլուխ 2, հոդված 18, կետ 4:

Միջին դպրոցում ուսուցումը նպատակաուղղվում է առողջ ապրելակերպի, աշխարհի և բնության վերաբերյալ սովորողի գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության և հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը⁵: 9-րդ դասարանում աշակերտները հանձնում են ավարտական քննություններ. «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ փոխադրություն, «Գրականություն» և «Հայոց պատմություն» առարկաներից՝ բանավոր, «Մաթեմատիկա» առարկայից՝ գրավոր, «Բնագիտություն» առարկայից՝ գրավոր՝ սովորողի ընտրությամբ, «Օտար լեզու» առարկայից՝ բանավոր՝ սովորողի ընտրությամբ, «Ֆիզիկուլտուրա» առարկայից՝ նորմատիվների հանձնում: Գրանց հիման վրա սովորողը ստանում է ավարտական վկայագիր, որով կարող է ընդունվել ավագ դպրոց:

Առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման ու կատարելագործման նպատակով հանրակրթական դպրոցներում օգտագործվում են միավորային (նիշային) և ուսուցանող (ոչ նիշային) գնահատման արդյունքները: Ներքին ընթացիկ գնահատումը կատարվում է ուսուցչի կողմից դասի ընթացքում: Ընթացիկ գնահատում ասելով՝ հասկանում ենք ուսումնառության ընթացքում ուսուցչի կողմից աշակերտների ձեռքբերումների մասին կանոնակարգված քանակական և որակական տվյալների հավաքում, գրանցում, ամփոփում, հետադարձ կապ, վերլուծական հաշվետվություն և գնահատման աշխատանքների կառավարում⁶: Միավորային գնահատումն ունի սովորողների կրթական ձեռքբերումների մակարդակը վերահսկելու դեր, նպատակն է թվանշանի միջոցով գնահատել, չափել ուսումնական գործընթացում նրանց ձեռք բերած գիտելիքները: Գնահատման երկրորդ ձևը՝ ուսուցանող գնահատումը, նախատեսում է գնահատումների կամ արժևորումների օգտագործում՝ սովորեցնելու նպատակով:

Տարրական և հիմնական դպրոցում ԳԹԿ-ի կողմից իրականացվում են ազգային՝ ՀԱԱՍ (հայագիտական առարկաներից), ԲԱԱՍ (բնագիտական առարկաներից), ՏՀԳԹ (տեղեկատվական-հաղորդակցական գրագիտության թեստավորում) և միջազգային (TIMSS) ստուգատեսներ: Ստուգատեսները իրենց առջև դրված խնդիրներով և նպատակներով տարբերվում են թեստավորման այլ միջոցառումներից: Ստուգատեսների հիմնական նպատակն է պարզել տվյալ ոլորտից գիտելիքների, հմտությունների և ունակությունների այն նվազագույն պաշարը, որը թույլ կտա մեր աշակերտներին հետագայում դառնալ լավ մասնագետներ իրենց ընտրած ոլորտում: TIMSS միջազգային ստուգատեսը իրականացվում է բնագիտական առարկաներից 4-րդ և 9-րդ դասարաններում: Հիմնական նպատակը մասնակից երկրների կրթական համակարգերի համեմատությունն է տվյալ

⁵ՀՀ օրենքը կրթության մասին, գլուխ 2, հոդված 18, կետ 5:

⁶Միքայելյան Օ, Միքայելյան Ս, Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան, Երևան, 2010, էջ 12:

հանրակրթական առարկաներից (մաթեմատիկա և բնագիտական առարկաներ):

Ավագ դպրոցում ուսուցումը նպատակաուղղված է հենքային հանրակրթական պատրաստությունն ապահովող գիտելիքների յուրացմանը: Այստեղ սովորողների հակումներին, կարողություններին և ընդունակություններին համապատասխան կարող է լրացուցիչ կրթական ծրագրերով իրականացվել տարբերակված (հոսքային) ուսուցում⁷: Ավագ դպրոցում, բացի ներքին ընթացիկ գնահատումներից և տեսչական ստուգումներից, իրականացվում են նաև արտաքին ընթացիկ գնահատումներ:

2008-2009 ուսումնական տարվանից սկսած Գնահատման և թեստավորման կենտրոնը իրականացնում է իր գլխավոր գործառնություններից մեկը՝ արտաքին ընթացիկ գնահատման գործընթացների կազմակերպումը: Այն նպատակաուղղված է պարզելու տվյալ հաստատությունում կրթության որակի օբյեկտիվ պատկերը, հսկելու յուրաքանչյուր աշակերտի ուսումնական առաջընթացը և բացահայտելու հանրակրթության ոլորտի խնդրահարույց հանգամանքները: Արտաքին ընթացիկ գնահատման գործընթացները մի կողմից նպաստում են աշակերտների կողմից թեստային գնահատման ձևերի և մեթոդների յուրացմանը, մյուս կողմից՝ հնարավորություն է տալիս մասնագետներին կատարելու թեստաբանական հետազոտություններ և ձևավորելու թեստային առաջադրանքների բազա⁸:

Արտաքին ընթացիկ գնահատում է իրականացվում ընտրված դպրոցների 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարաններում: Տվյալ դպրոցի սովորողների գիտելիքները ստուգվում են երեք տարիների ընթացքում, արդյունքում պարզ է դառնում յուրաքանչյուր աշակերտի առաջընթացը կամ հետընթացը: Դիշտ է, դասամատյանում դրվում է արտաքին ընթացիկ գնահատումից ստացված գնահատականը, բայց այն դեռ որևէ լուրջ կշիռ չունի:

2016 թվականից ավագ դպրոցի սովորողները պետական ավարտական քննությունները կարող են հանձնել առաջին կիսամյակը ավարտելուց հետո՝ դեկտեմբերին կամ ուսումնական գործընթացի ավարտին՝ հունիսին: Ավագ դպրոցի պետական ավարտական քննությունները երեքն են՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն»: Ավագ դպրոցը կոչված է ապահովելու ինքնուրույն կյանքի համար սովորողների պատրաստվածությանը՝ հանդիսանալով միակ շեմը դեպի մասնագիտական կրթություն: Իրականացնելով հոսքային ուսուցում՝ այն հասարակության գիտակցությունից աստիճանաբար պետք է դուրս մղեր կրկնուսույցների մոտ պարապելու գաղափարը: Ավագ դպրոցը դեռ չի իրականացրել իր առջև դրված խնդիրները:

⁷ՀՀ օրենքը կրթության մասին, գլուխ 2, հոդված 18, կետ 6:

⁸Սկրտչյան Մ., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը, Երևան 2011, էջ 122:

Ավագ դպրոցը ավարտելուց հետո սովորողները կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում շարունակելու նպատակով հանձնում են միասնական, կենտրոնացված և ներքուհական քննություններ: Միասնական քննությունները կազմակերպում և գնահատում է Գնահատման և թեստավորման կենտրոնը: ԳԹԿ-ն ապահովում է ընդունելության քննությունների գնահատման օբյեկտիվությունը, դիմորդների համար ստեղծում է նպաստավոր պայմաններ, դիմորդները քննությունները հանձնում են իրենց դպրոցին մոտ բնակավայրում, տվյալ ուսումնական տարում դիմորդները միևնույն քննաշրջանում ավարտական և ընդունելության քննություններ չեն հանձնում, դիմորդի միասնական քննության Ա մասը ԳԹԿ-ն ուղարկում է դպրոց որպես ավարտական քննության արդյունք, բոլոր դիմորդները տվյալ առարկայի քննությունը հանձնում են միևնույն օրը, միևնույն ժամանակ, միևնույն առաջադրանքով: Գնահատման և թեստավորման կենտրոնը հուսալի, արդար և հավաստի ձևով դիմորդներին բաշխում է ըստ իրենց ընտրած մասնագիտությունների:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ հանրակրթության ոլորտում տեղի ունեցած բազմաթիվ փոփոխությունները՝ ներքին գնահատման համակարգի ներդրումը, առարկայական նոր դասագրքերի ստեղծումը, ծրագրերի և չափորոշիչների մշակումը, ուսուցիչների վերապատրաստումը և տարակարգերի շնորհումը, տնօրենների հավաստագրումը, տեսչական ստուգումները, արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները, ազգային, միջազգային ստուգատեսների իրականացումը բավարար չեն կրթության որակի խթանման համար:

Միակ բանը, որ Խորհրդային Միության փլուզումից հետո էլ չի փոխվել, ուսուցման խմբային եղանակն է: Արդեն մի քանի հարյուրամյակի պատմություն ունի ուսուցման խմբային եղանակը: Այն իր զարգացման ընթացքում կայացել է երկու հիմնական տարատեսակներով՝ դաս-դասարանային և դասախոսություն-սեմինարային: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտ ձևը: Այս պատճառով է, որ ուսումնական պարապմունքները իրականացվում են ընդհանուր ճակատով: Աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Խմբային պարապմունքների յուրջ պրոբլեմներից մեկն այն է, ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Դաս-դասարանային համակարգը վաղուց սպառել է իրեն, այլևս չի ծառայում հանրակրթության նպատակներին և պետական քաղաքականության սկզբունքներին, համաձայն որի՝ հանրակրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը: Խմբային եղանակով անհնար է ուսուցման գործընթացում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածությունը ապահովել: Հիմնականում դասապրոցեսի մեջ ընդգրկվում են ակտիվ, արագ մտածող, բարձր առաջադիմությամբ

սովորողները: Գանդաղ մտածող և պասիվ սովորողները հետընթաց են ապրում:

20-րդ դարը մարդկությանը ներկայացրեց համընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի ապահովման պահանջ: Փաստորեն, կրթությունը վերախմաստավորվեց որպես հանրակրթություն, որը շոշափում է համընդհանուր ուսումնադաստիարակչական մակարդակի հարցը և ենթադրում հասարակության յուրաքանչյուր անդամի որակին առնչվող հարցադրում: Այստեղ գիտելիքը՝ որպես կրթության բովանդակության հիմնական միավոր, և «գիտական աշխարհայացք» հասկացությունը խիստ անբավարար են հանրակրթության նպատակների և խնդիրների սահմանման և ձևակերպման համար: Առաջին պլան են մղվում արժեքային համակարգը, գործունեական կարողությունները և այլ որականիշներ: Ընդ որում՝ խոսքը վերաբերում է հասարակության և՛ ընդհանուր, և՛ յուրաքանչյուր անդամի որակին⁹:

Արդյո՞ք հնարավոր է 20-րդ դարի պահանջները բավարարած ուսուցման խմբային եղանակով բավարարել տեղեկատվական տեխնոլոգիաներով հագեցած 21-րդ դարի պահանջները: Ըստ էության, ուսումնական հաստատությունները անընդհատ բախվում են նոր հիմնախնդիրների, որոնց լուծումը ենթադրում է սովորողին սուկ գիտելիք փոխանցող հաստատության վերափոխումը սովորողի հետ գիտելիք ձևավորող հաստատության: Փորձենք պարզել՝ ի՞նչ է անհրաժեշտ ժամանակակից մարդուն և ի՞նչ է հարկավոր սովորեցնել, որպեսզի նա արագ փոփոխվող և զարգացող աշխարհում կարողանա իր տեղը գտնել աշխատաշուկայում: Փաստ է, որ տարատեսակ բարեփոխումներն արդյունավետ չէղան, հետևաբար, կարծում ենք, պետք է խնդիրն այլ տեղ փնտրել, արմատական փոփոխություն իրականացնել և խթանել ոչ դաս-դասարանային համակարգերի ձևավորումն ու զարգացումը:

⁹Մկրտչյան Մ., Հանրակրթության կազմակերպման հիմնահարցերը, Եր., 2006, էջ 11:

Զարուհի ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՀ կրթության պետական տեսչության

վերլուծության և գնահատման բաժնի պետ

Կրթական գործընթացի գնահատման աստիճանակարգային մեթոդը

Հանրակրթության զարգացման ներկա փուլում կրթության որակի բարելավման համար հրատապ խնդիր է ուսումնական հաստատությունների կրթական գործունեության գնահատումը: Համաձայն ՀՀ կառավարության 27.03.2014 թ.-ի N442-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» 430-րդ կետի՝ «Հայաստանում կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն առաջընթացի, մարդկային կապիտալի վերարտադրության ու զարգացման նախապայմաններից մեկը, ուստի այս ոլորտի զարգացումը երկրի զարգացման գերակայություններից մեկն է: Առաջնային խնդիրներ են կրթական համակարգի բոլոր մակարդակներում կրթության որակի և արդյունավետության բարձրացումը, դրանց համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին, մատչելի, հասանելի կրթության ապահովումը բնակչության բոլոր խավերի համար: Այդ նպատակներին հասնելու նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում»: ՀՀ կրթության համակարգում կրթության որակի բարձրացման, կրթական ծրագրերի յուրացման, պետական կրթական չափորոշիչների պահանջների ապահովմանն աջակցելու նպատակով ՀՀ ԿԳՆ կրթության պետական տեսչության կողմից՝ համաձայն տարեկան աշխատանքային ծրագրերի, ՀՀ ուսումնական հաստատություններում սահմանված կարգով իրականացվում են կրթական գործընթացի ուսումնասիրություններ:

ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 19.08.2011թ. N 968-Ա/Ք հրամանով հաստատված ձևաթղթերի համաձայն ուսումնասիրվում են.

- դպրոցների տնօրենների և նրանց տեղակալների պաշտոնային պարտականությունների կատարումը,

- կրթության որակը, սովորողների մնացորդային գիտելիքները,
- դպրոցի կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների, առարկայական մասնախմբերի գործունեությունը,
- ուսումնական միջավայրը:

Մանկավարժական աշխատողների, սովորողների վերաբերյալ բազմաբնույթ տվյալները ուսումնասիրվում են ըստ բնութագրիչների, կատարվում են դասալսումներ ներգրավված մասնագետների կողմից: VII–XI դասարաններում տրվում են գրավոր աշխատանքներ «Մաթեմատիկա» և «Հայոց լեզու» առարկաներից: «Մաթեմատիկա» առարկայից՝ 4-ից 5-ական առաջադրանքներ, «Հայոց լեզու» առարկայից՝ թելադրություն (նախորդ դասարանի անցած նյութին համապատասխան): Արդյունքները վերլուծելիս անհրաժեշտություն է առաջանում գործ ունենալ միմյանց հետ փոխկապակցված թվային տվյալների հետ, գնահատել ոչ միայն ուսումնական հաստատության թույլ և ուժեղ կողմերը այլ հաստատությունների շարքում, այլև վեր հանել առկա խնդիրները, կատարել եզրահանգումներ: Մաթեմատիկական վիճակագրության մեթոդների կիրառումը, դեղուկտիվ մտածողությունը, տրամաբանությունը մեծ թվով ուսումնասիրությունների և դրանց արդյունքում ձևավորված թվային տվյալների բազմազանության առկայության դեպքում հնարավորություն չեն տալիս ստանալու ճշգրիտ գնահատականներ, ինչով էլ պայմանավորված է վերոնշյալ ուսումնասիրությունների արդյունքների վերլուծության և գնահատման նոր մեթոդաբանություն կիրառելու անհրաժեշտությունը:

Այս աշխատանքում կներկայացնենք վերլուծության և գնահատման մեր կողմից առաջարկվող մեթոդը, որի համար հիմք է հանդիսացել ամերիկացի մաթեմատիկոս Թոմաս Սաաթիի կողմից մշակված «Հիերարխիկ վերլուծության մեթոդը» (այսուհետև՝ ՀՎՄ): 1970 թվականի սկզբին ամերիկացի մաթեմատիկոս Թ. Սաաթիի մշակեց որոշումների ընդունմանը աջակցելու մեթոդը, որը կոչվեց «Analytic hierarchy process» (Հիերարխիկ վերլուծության մեթոդ): Մինչ աշխատանքի հրատարակումը (1980 թ.) հեղինակը «Տեխնիկական կիրենետիկա» ամսագրում (N1, 1979 թ.) հանդես եկավ մեթոդի վերաբերյալ հոդվածով: Ամեն տարի ԱՄՆ-ում իրականացվում են վերոնշյալ մեթոդի կիրառություններին նվիրված միջազգային գիտաժողովներ՝ International Symposium on Analytic Hierarchy Process (Միջազգային սիմպոզիում նվիրված վերլուծական հիերարխիկ գործընթացին): ՀՎՄ-ն ողջ աշխարհում կիրառվում է մի շարք իրավիճակներում որոշումներ ընդունելու համար. միջազգային մակարդակի կառավարչական խնդիրներից մինչև բիզնեսի, արդյունաբերության, առողջապահության,

կրթության ոլորտային պրոբլեմներ լուծելիս: Այս մեթոդը մեծ կիրառություն ունի պրակտիկայում և ակտիվորեն զարգացվում է աշխարհի գիտնականների կողմից:

Ստորև կներկայացնենք կրթության ոլորտում ՀՎՄ-ի կիրառման նպատակները, սկզբունքները, չափանիշները, չափանիշների կշիռները, դրանց հաշվարկման մեթոդաբանությունը: Կրթության ոլորտում ՀՎՄ-ի կիրառման նպատակները բխում են «ՀՀ կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների կատարման անհրաժեշտությունից: Դրանք են.

- ՀՀ կրթության համակարգում կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների կիրառման ապահովմանը նպաստելը,
- ՀՀ կրթության համակարգում կրթության որակի բարձրացման, կրթական ծրագրերի յուրացման, պետական կրթական չափորոշիչների պահանջների ապահովմանն աջակցելը,
- ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով կրթական քաղաքականության իրականացման և կրթական ծառայությունների արդյունավետության գնահատման ու հետադարձ կապի ապահովումը,
- կրթության որակի և չափորոշիչների բարելավման օրինակելի փորձի բացահայտման և դրա տարածման վերաբերյալ առաջարկությունների տրամադրման ապահովումը,
- ուսումնական հաստատություններում կրթական ծառայությունների մատուցման ուղղությամբ ստուգումների և ուսումնասիրությունների միջոցով բացահայտված խախտումների, սխալների, թերությունների վերացման աշխատանքներում մեթոդական օգնության կազմակերպումը:

Պարզագույն հիերարխիան բաղկացած է երեք մակարդակից՝ նպատակ, չափանիշներ, այլընտրանքներ: Մինչ վերլուծությունն իրականացնելը նախ սահմանվում է նպատակը, ընտրվում են չափանիշները: Մեր դեպքում վերլուծության նպատակը իրականացված ուսումնասիրությունների արդյունքների համաձայն ուսումնական հաստատությունների գնահատումը, լավագույն ուսումնական հաստատության որոշումն ու առաջավոր փորձի տարածումն է:

Վերլուծության չափանիշներն են՝ «Կառավարման խորհուրդ», «Տնօրեն», «Տնօրենի տեղակալներ», «Մանկավարժական խորհուրդ», «Ծնողական խորհուրդ», «Աշակերտական խորհուրդ», «Մեթոդական միավորումներ», «Ուսումնական (ֆիզիկական) միջա-

վայր>>, <<Դպրոցավարություն>>, <<Ուսուցում>> (<<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> առարկաների դասալսումների արդյունքներ), <<Հայոց լեզու>> առարկայի թելադրություն, <<Մաթեմատիկա>> առարկայի գրավոր աշխատանք, <<Արձանագրություն>>:

Այլընտրանքներն են ուսումնասիրված ուսումնական հաստատությունները:


Ուսումնասիրությունների ընթացքում հաստատություններից յուրաքանչյուրում թվարկված չափանիշներից առաջին 9-ի գնահատման հիմքերն են ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 19.08.2011 թ. N 968-Ս/Ք հրամանով հաստատված կրթական գործընթացի ուսումնասիրության ձևաթղթերի համապատասխան հավելվածները: Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինները, որոնք ձևավորված են կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու համար, գնահատվում են դպրոցի կանոնադրությամբ վերապահված լիազորությունների և պարտականությունների կատարման շրջանակներում: Տնօրենի և տնօրենի տեղակալների գնահատման հիմքը ՀՀ օրենսդրությամբ, պաշտոնի նկարագրով սահմանված և դպրոցի կանոնադրությամբ վերապահված լիազորությունների և պարտականությունների կատարումն է: <<Դպրոցավարություն>> չափանիշով գնահատվում է ուսումնական հաստատության կողմից ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի կատարումը, դասամատյանների, սովորողների, աշխատողների հրամանագրման հրամանագրքերի, սովորողների շարժի մատյանի, ատեստատների և վկայականների բաշխման մատյանների վարման կարգերի պահպանումը և այլն: <<Ուսուցում>> չափանիշը գնահատվում է ձևաթղթերի համապատասխան հավելվածի <<Մաթեմատիկա>>, <<Հայոց լեզու և հայ գրականություն>> առարկաների ուսուցիչների միջին գնահատականներով:

Ուսումնասիրվող ուսումնական հաստատություններում ներգրավված մասնագետների կողմից 7-11-րդ դասարաններում իրականացվում են դասալսումներ <<Հայոց լեզու>>, <<Մաթեմատիկա>> առարկաներից, որոնց արդյունքները լրացվում են դասալսման ձևաթերթերում: Դասալսման ձևաթերթերի միջոցով գնահատվում է ոչ միայն դասի արդյունավետությունը, սովորողների կողմից գիտելիքների յուրացումը, այլև ուսուցչի բազմակողմանի պատրաստվածությունը: Ներգրավված մասնագետները ամփոփում են դասալսման ձևաթերթերի արդյունքները՝ հիմք ընդունելով նախորդ ուստարում տվյալ առարկան դասավանդող ուսուցչի կողմից առարկայական ծրագրերի կատարումը, ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը, ժամանակակից

մանկավարժական մեթոդների, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների իմացությունն ու դրանց կիրառումը դասի ընթացքում, ինչպես նաև դասի արդյունավետության միջին գնահատականը դասալսումների արդյունքում:

<<Հայոց լեզու>> առարկայի թելադրություն, <<Մաթեմատիկա>> առարկայի գրավոր աշխատանք չափանիշները գնահատվում են տվյալ ուսումնական հաստատության գրավոր աշխատանքին մասնակցած սովորողների գնահատականների միջինով (<<Հայոց լեզու>> առարկայի թելադրության և <<Մաթեմատիկա>> առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականները դիտարկվում են որպես տարբեր չափանիշներ): <<Արձանագրություն>> չափանիշը ուսումնական հաստատություններում գնահատվում է այսպես. եթե ուսումնասիրության ընթացքում ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ չեն արձանագրվել, ապա ըստ այս չափանիշի ուսումնական հաստատությունը գնահատվում է 10 միավոր: Ուսալյանին, առարկայական ծրագրերին վերաբերող խախտումները 10 միավորի մեջ կազմում են 4-ական միավոր, ուսուցիչների մասնագիտական որակավորման անհամապատասխանությունները՝ 1 միավոր, այլ խախտումները՝ ևս մեկ միավոր:

Դիցուք, Ա-ն և Բ-ն ուսումնասիրված ուսումնական հաստատություններն են: Գծապատկերում արտահայտված է կրթական գործընթացի ուսումնասիրության աստիճանակարգային մոդելը:



Թվային տվյալների մշակման գործընթացը բաղկացած է երեք կարևոր փուլերից: Առաջին փուլում ստեղծվում է թվային սանդղակ, համաձայն որի՝ չափանիշներից յուրաքանչյուրին վերագրվում են կշիռներ: Երկրորդ փուլում համեմատվում են ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ըստ վերոնշյալ չափանիշների, երրորդ փուլում համադրելով առաջին և երկրորդ փուլերի արդյունքները՝ ստանում ենք ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրի գնահատականը:

Թվային սանդղակը որոշվում է այսպես. կազմում ենք քառակուսային մատրից (աղյուսակ, որի տողերի թիվը հավասար է սյունների թվին), որի առաջին հորիզոնական և առաջին ուղղահայաց տողերում գրում ենք չափանիշները միևնույն հաջորդականությամբ: Մատրիցը լրացնում ենք՝ համեմատելով չափանիշներից մեկը մյուսներից յուրաքանչյուրի հետ՝ ըստ կարևորության: a_{ij} -ով նշանակենք մատրիցի i -րդ տողի և j -րդ սյան հատման կետում գրվող թվային տվյալը: Դիցուք, համեմատում ենք i -րդ և j -րդ չափանիշները: Եթե

- i -րդ և j -րդ չափանիշները հավասար կարևորություն ունեն, ապա $a_{ij}=1$,
- i -րդ չափանիշը աննշան կարևոր է j -րդ չափանիշից, ապա $a_{ij}=3$,
- i -րդ չափանիշը կարևոր է j -րդ չափանիշից, ապա $a_{ij}=5$,
- i -րդ չափանիշը էապես կարևոր է j -րդ չափանիշից, ապա $a_{ij}=7$,
- i -րդ չափանիշը բացարձակ կարևոր է j -րդ չափանիշից, ապա $a_{ij}=9$,

Չափանիշների համեմատության ընթացքում, նշված դեպքերից աննշան տարբերությունների դեպքում, a_{ij} -ին կարելի է վերագրել նաև միջանկյալ՝ 2, 4, 6, 8 թվային արժեքները: Բնականաբար i -րդ չափանիշը իր հետ համեմատելիս՝ $a_{ii}=1$ և, հետևաբար, մատրիցի գլխավոր անկյունագծի (աղյուսակի վերին ձախ անկյունից ստորին աջ անկյունը միացնող անկյունագիծը) տարրերը հավասար կլինեն 1-ի: Հասկանալի է, որ j -րդ տողի և i -րդ սյունակի հատման կետում գտնվող տարրը հավասար կլինի a_{ij} -ի հակադարձին՝ $a_{ji}=1/a_{ij}$:

Ընտրված չափանիշների դեպքում ստացվում է հետևյալ մատրիցը.

Աղյուսակ 1

Չափանիշներ	«Հայոց լեզու» ուսուցում	«Մաթեմատիկա» ուսուցում	«Հայոց լեզու» քննադատություն	«Մաթեմատիկա» գրավոր աշխատանք	Դպրոցավարությունն	Ուսումնական միջավայր	Տնօրեն	Տնօրենի տեղակալներ	Կառավարման խորհուրդը	Մանկավարժական խորհուրդը	Ծնողական խորհուրդ	Աշակերտական խորհուրդ	Մեթոդական միավորումներ	Արձանագրություն
«Հայոց լեզու» ուսուցում	1	1	0,33	0,33	5	7	2	3	5	4	7	7	2	6
«Մաթեմատիկա» ուսուցում	1	1	0,33	0,33	5	7	2	3	5	4	7	7	2	6
«Հայոց լեզու» թեկադրություն	3	3	1	1	7	9	4	5	7	5	8	8	4	7
«Մաթեմատիկա» գրավոր աշխատանք	3	3	1	1	7	9	4	5	7	5	8	8	4	7
Դպրոցավարություն	0,2	0,2	0,14	0,14	1	4	0,5	0,5	2	0,5	5	5	0,5	2
Ուսումնական միջավայր	0,14	0,14	0,11	0,11	0,25	1	0,2	0,14	0,33	0,33	0,5	0,5	0,33	0,5
Տնօրեն	0,5	0,5	0,15	0,15	2	5	1	2	2	2	5	5	2	3
Տնօրենի տեղակալներ	0,33	0,33	0,2	0,2	2	7	0,5	1	3	2	5	5	2	2
Կառավարման խորհուրդ	0,2	0,2	0,14	0,14	0,5	3	0,5	0,33	1	0,33	5	5	0,5	2
Մանկավարժական խորհուրդ	0,25	0,25	0,2	0,2	2	3	0,5	0,5	3	1	5	5	0,5	2
Ծնողական խորհուրդ	0,14	0,14	0,13	0,13	0,2	2	0,2	0,2	0,2	0,2	1	1	0,2	0,5
Աշակերտական խորհուրդ	0,14	0,14	0,13	0,13	0,2	2	0,2	0,2	0,2	0,2	1	1	0,2	0,5
Մեթոդական միավորումներ	0,5	0,5	0,25	0,25	2	3	0,5	0,5	2	2	5	5	1	3
Արձանագրություն	0,17	0,17	0,14	0,14	0,5	2	0,33	0,5	0,5	0,5	2	2	0,33	1

Հաջորդ քայլով անհրաժեշտ է որոշել թվային սանդղակը, համաձայն որի՝ չափանիշներից յուրաքանչյուրին կվերագրվեն կշիռներ: Դա կատարում ենք հետևյալ եղանակով: Գումարում ենք աղյուսակի յուրաքանչյուր տողի տարրերը, ապա ստացված 1 սյունից բաղկացած աղյուսակը նորմավորում տարրերից յուրաքանչյուրը բաժանելով ստացված աղյուսակի տարրերի գումարին: Ստացված արդյունքների գումարը հավասար է մեկի: Ստացված նորմավորված աղյուսակի

առաջին տարրը համարում ենք առաջին չափանիշի համապատասխան կշիռը, երկրորդ տարրը՝ երկրորդին համապատասխան կշիռը և այլն: Այսպիսով թվային սանդղակը որոշված է.

Աղյուսակ 2

«Հայոց լեզու» ուսուցում	«Մաթեմատիկա» ուսուցում	«Հայոց լեզու» թելադրություն	«Մաթեմատիկա» գրավոր աշխատանք	Դպրոցավարություն	Ոսումնական միջավայր	Տնօրեն	Տնօրենի տեղակալներ	Կատարման խորհուրդը	Մանկավարժական խորհուրդ	Ծնողական խորհուրդ	Աշակերտական խորհուրդ	Մեթոդական միավորումներ	Արձանագրություն
0,12	0,12	0,17	0,17	0,051	0,011	0,072	0,072	0,045	0,055	0,015	0,015	0,06	0,024

Արդյո՞ք ստացված արդյունքները իրատեսական են, կարելի՞ է դրանք կիրառել հետագա հետազոտության համար: ՀՎՄ-ում առաջարկված ձևով ստուգվում է դրանց կիրառելի լինելը: Աղյուսակ 1-ում տրված մատրիցը աջից բազմապատկում ենք ստացված սանդղակի հետ (սանդղակը համարելով մեկ այունից բաղկացած մատրից): Բազմապատկման արդյունքում ստանում ենք (եթե ընթերցողը չի տիրապետում երկու մատրիցների բազմապատկման կանոնին) մի այունից բաղկացած մատրից, որի յուրաքանչյուր տարրը աղյուսակ 1-ի մատրիցի համապատասխան տողի և աղյուսակ 2-ի համապատասխան տարրերի արտադրյալների գումարն է.

Աղյուսակ 3

«Հայոց լեզու» ուսուցում	«Մաթեմատիկա» ուսուցում	«Հայոց լեզու» թելադրություն	«Մաթեմատիկա» գրավոր աշխատանք	Դպրոցավարություն	Ոսումնական միջավայր	Տնօրեն	Տնօրենի տեղակալներ	Կատարման խորհուրդը	Մանկավարժական խորհուրդ	Ծնողական խորհուրդ	Աշակերտական խորհուրդ	Մեթոդական միավորումներ	Արձանագրություն
1,96	1,96	3,4	3,4	0,61	0,2	1,12	1	0,51	0,75	0,21	0,21	0,89	0,35

Բաժանելով աղյուսակ 3-ի տարրերը աղյուսակ 2-ի համապատասխան տարրերին՝ ստանում ենք հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 4

«Հայոց լեզու» ուսուցում	«Մաթեմատիկա» ուսուցում	«Հայոց լեզու» թելադրություն	«Մաթեմատիկա» գրավոր աշխատանք	Դպրոցավարություն	Ուսումնական միջավայր	Տնօրեն	Տնօրենի տեղակալներ	Կառավարման խորհուրդ	Մանկավարժական խորհուրդ	Ծնողական խորհուրդ	Աշակերտական խորհուրդ	Մեթոդական միավորումներ	Արձանագրություն
16.407	16.407	19.996	19.996	11.886	18.483	15.54	13.817	11.368	13.618	14.373	14.373	14.837	14.403

Ստացված աղյուսակի տարրերի գումարի և չափանիշների քանակի հարաբերությունը կոչվում է մատրիցի մաքսիմալ արժեք՝ $\lambda_{\max}=215,498/14\approx 15,393$: Համապատասխանության ինդեքսը (N) հաշվվում է $N=(\lambda_{\max}-n)/(n-1)$ բանաձևով, որտեղ n-ը մատրիցի չափն է (տողերի կամ սյուների քանակը): Մեր դեպքում $N=(15,393-14)/13\approx 0,1072$: Համապատասխանության ինդեքսը համեմատվում է պատահականորեն ընտրված միևնույն կարգի (նույն թվով տողեր կամ սյուներ ունեցող) մատրիցների միջին համապատասխանության ինդեքսի հետ: Օրրիջի ազգային լաբորատորիայի (ԱՄՆ-ի էներգետիկայի նախարարության ազգային լաբորատորիա) գիտնականների կողմից մշակվել են 1-ից 15 չափանիշ մատրիցների միջին համապատասխանության ինդեքսները (պատահականորեն ընտրված 500-ական մատրիցների ուսումնասիրության արդյունքում): Ստորև ներկայացնում ենք նշված միջին ինդեքսների աղյուսակը 1-ից 15 չափանիշ մատրիցների համար.

Աղյուսակ 5

Մատրիցի կարգը	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Միջին համապատասխանության ինդեքսը	0	0	0,58	0,9	1,12	1,24	1,32	1,41	1,45	1,49	1,51	1,48	1,56	1,57	1,59

Համեմատություն կատարելու համար վերցնում ենք մեր կողմից կազմված մատրիցի համապատասխանության ինդեքսի և աղյուսակ 5-ի համապատասխան կարգի մատրիցի միջին համապատասխանության

ինդեքսի հարաբերությունը, որը կոչվում է համապատասխանության հարաբերություն (H): Ըստ Մաաթիի թվային սանդղակով արտահայտված կշիռները ընդունելի են, եթե կազմված մատրիցին համապատասխան համապատասխանության հարաբերությունը փոքր կամ հավասար է 0,1-ի: Մեր դեպքում համապատասխանության հարաբերությունը ստացվել է $H=0,1072: 1,57 \approx 0,068$, այսինքն՝ աղյուսակ 2-ի թվային սանդղակով արտահայտված կշիռները ընդունելի են:

Ինչպես նշել ենք վերևում՝ երկրորդ փուլում համեմատվում են ուսումնական հաստատություններում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ըստ ընտրված չափանիշներից յուրաքանչյուրի: Կազմում ենք քառակուսային մատրից, որի առաջին հորիզոնական և առաջին ուղղահայաց տողերում գրում ենք ուսումնասիրված ուսումնական հաստատությունները միևնույն հաջորդականությամբ: Մատրիցի կարգը կախված կլինի ուսումնասիրված ուսումնական հաստատությունների թվից:

Համեմատենք ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի թիվ 7, Գավառի թիվ 8 միջնակարգ և Գավառի թիվ 1, Սևանի թիվ 3 հիմնական դպրոցների արդյունքները ըստ «Տնօրեն» չափանիշի: Ըստ ուսումնասիրության ձևաթղթերի «Տնօրեն» հավելվածի՝ ուսումնական հաստատության տնօրենը գնահատվում է «գերազանց»՝ 52-55, «շատ լավ»՝ 42-51, «լավ»՝ 29-41, «բավարար»՝ 17-28, «անբավարար»՝ մինչև 17 միավորների դեպքում: Մատրիցը լրացնում ենք՝ համեմատելով ուսումնական հաստատությունների տնօրենների գնահատականները այսպես. մատրիցի «Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոց» տողի և «Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոց» սյան հատման կետում գրում ենք Գավառի թիվ, թիվ 7, 8 միջնակարգ դպրոցներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված (ըստ «Տնօրեն» հավելվածի) գնահատականների հարաբերությունը (քանի անգամ է «լավ» նշված դպրոցներից առաջինի ուսումնասիրության արդյունքները մյուսի համեմատությամբ): Ուսումնասիրությունների արդյունքում Գավառի թիվ 7, Գավառի թիվ 8 միջնակարգ և Գավառի թիվ 1, Սևանի թիվ 3 հիմնական դպրոցներն ըստ «Տնօրեն» հավելվածի գնահատվել են համապատասխանաբար՝ 45, 44, 44, 52 միավոր:

Աղյուսակ 6

<<Տնօրեն>>	Գավառի թ. 7 մ/դ	Գավառի թ. 1 հ/դ	Սևանի թ. 3 հ/դ	Գավառի թ. 8 մ/դ
Գավառի թ. 7 մ/դ	45/45=1	45/44≈1,02	45/52≈0,87	45/44≈1,02
Գավառի թ. 1 հ/դ	44/45≈0,98	44/44=1	44/52≈0,85	44/44=1
Սևանի թ. 3 հ/դ	52/45≈1,16	52/44≈1,18	52/52=1	52/44≈1,18
Գավառի թ. 8 մ/դ	44/45≈0,98	44/44=1	44/52≈0,85	44/44=1

Հաջորդ քայլով, օգտվելով աղյուսակ 6-ից, որոշենք թվային սանդղակը համաձայն որի ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրին կվերագրվեն միավորներ ըստ <<Տնօրեն>> չափանիշի: Գումարում ենք աղյուսակի յուրաքանչյուր տողի տարրերը, ապա ստացված 1 սյունից բաղկացած աղյուսակը նորմավորում՝ տարրերից յուրաքանչյուրը բաժանելով ստացված աղյուսակի տարրերի գումարին: Ստացված արդյունքների գումարը հավասար է մեկի: Նորմավորված աղյուսակի առաջին տարրը համարում ենք առաջին ուսումնական հաստատության համապատասխան միավորը, երկրորդ տարրը՝ երկրորդին համապատասխան միավորը և այլն: Այսպիսով թվային սանդղակը ըստ <<Տնօրեն>> չափանիշի հետևյալն է.

Աղյուսակ 7

Ուսումնական հաստատությունը	Ըստ <<Տնօրեն>> չափանիշի ուսումնական հաստատության միավորները
Գավառի թ. 7 մ/դ	0,243
Գավառի թ. 1 հ/դ	0,238
Սևանի թ. 3 հ/դ	0,281
Գավառի թ. 8 մ/դ	0,238

Այս նույն գործողությունը իրականացնելու ենք ըստ ընտրված չափանիշներից յուրաքանչյուրի: Կատանանք մի մատրից (4x14 կարգի՝ բաղկացած է 4 տողից և 14 սյունից), որի սյուններից յուրաքանչյուրում նույն ուսումնական հաստատություններին վերագրված միավորներն են՝ ըստ ընտրված չափանիշների.

Աղյուսակ 8

Ուսումնական հաստատությունը	<<Հ. լեզու>> ուսուցում	0,254	0,254	0,246	0,246
	<<Մաթեմատիկա>> ուսուցում	0,301	0,24	0,233	0,226
	<<Հայոց լեզու>> թեկադրություն	0,23	0,214	0,354	0,202
	<<Մաթեմատիկա>> գրավոր աշխատանք	0,243	0,243	0,265	0,249
	Դպրոցավարություն	0,255	0,241	0,241	0,263
	Ուսումնական միջավայր	0,173	0,305	0,217	0,305
	Տնօրեն	0,243	0,238	0,281	0,238
	Տնօրենի տեղակալներ	0,248	0,232	0,267	0,253
	Կառավարման խորհուրդ	0,274	0,204	0,261	0,261
	Մանկավարժական խորհուրդ	0,265	0,226	0,26	0,249
	Ծնողական խորհուրդ	0,259	0,199	0,247	0,295
	Աշակերտական խորհուրդ	0,267	0,228	0,238	0,267
	Մեթոդական միավորումներ	0,287	0,218	0,277	0,218
	Արձանագրություն	0,27	0,216	0,27	0,244

Աղյուսակ 8-ը հնարավորություն է տալիս տեսնելու ուսումնական հաստատությունների գնահատականների համեմատական ըստ չափանիշներից յուրաքանչյուրի: Ուսումնական հաստատություններից յուրաքանչյուրի ընդհանուր գնահատականը որոշելու համար, մատրիցների բազմապատկման կանոնի համաձայն, աղյուսակ 8-ի մատրիցը բազմապատկում ենք աղյուսակ 2-ի մատրիցի հետ՝ դիտարկելով վերջինս որպես սյուն:

$$\begin{pmatrix} 0,254 & 0,301 & 0,23 & 0,243 & 0,255 & 0,173 & 0,243 & 0,248 & 0,274 & 0,265 & 0,259 & 0,267 & 0,287 & 0,27 \\ 0,254 & 0,24 & 0,214 & 0,243 & 0,241 & 0,305 & 0,238 & 0,232 & 0,204 & 0,226 & 0,199 & 0,228 & 0,218 & 0,216 \\ 0,246 & 0,233 & 0,354 & 0,265 & 0,241 & 0,217 & 0,281 & 0,267 & 0,261 & 0,26 & 0,247 & 0,238 & 0,277 & 0,27 \\ 0,246 & 0,226 & 0,202 & 0,249 & 0,263 & 0,305 & 0,238 & 0,253 & 0,261 & 0,249 & 0,295 & 0,267 & 0,218 & 0,244 \end{pmatrix} \times \begin{pmatrix} 0,12 \\ 0,12 \\ 0,17 \\ 0,17 \\ 0,051 \\ 0,011 \\ 0,072 \\ 0,072 \\ 0,045 \\ 0,055 \\ 0,015 \\ 0,015 \\ 0,06 \\ 0,024 \end{pmatrix} = \begin{pmatrix} 0,256 \\ 0,233 \\ 0,273 \\ 0,238 \end{pmatrix}$$

Այսպիսով, ըստ ուսումնական հաստատությունների ստացանք հետևյալ պատկերը.

Ուսումնական հաստատությունը	Ուսումնական հաստատության գնահատականը
Գավառի թիվ 7 մ/դ	0,256
Գավառի թիվ 1 հ/դ	0,233
Սևանի թիվ 3 հ/դ	0,273
Գավառի թիվ 8 մ/դ	0,238

Այսինքն, ըստ կրթական գործունեության ուսումնասիրությունների արդյունքների, վերլուծության ամենաբարձր արդյունքները գրանցվել են Սևանի թիվ 3 հիմնական դպրոցում, ամենացածր արդյունքները՝ Գավառի թիվ 1 հիմնական դպրոցում:

Համաձայն «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 9-րդ մասերի և ՀՀ կրթության պետական տեսչության 2015թ. աշխատանքային ծրագրի 4-րդ կետի ՀՀ Գեղարքունիքի մարզի թվով 44 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել են կրթական գործունեության ուսումնասիրություններ: Դպրոցներից 32-ը միջնակարգ են, 12-ը՝ հիմնական: Ուսումնասիրության ընթացքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ կազմվել է ընդհանուր թվով 19 արձանագրություն: Հայտնաբերված խախտումների հետևանքները վերացնելու նպատակով ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից դպրոցների տնօրեններին և կառավարման խորհուրդներին

նախագահներին տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Ըստ <<Տնօրեն>> հավելվածի բնութագրիչների՝ <<գերագանց>> են գնահատվել թվով 9 (21%) դպրոցներ, <<շատ լավ>>՝ 15 (34%), <<լավ>>՝ 20 (45%), ամենացածր ցուցանիշը գրանցվել է Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ամենաբարձրը (հավասար) Վարդենիկի թիվ 2 հիմնական, Լճաշենի, Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցներում: Ինչպես նշել էինք վերևում՝ ըստ ուսումնասիրության ձևաթղթերի <<Տնօրեն>> հավելվածի ուսումնական հաստատության տնօրենը գնահատվում է <<գերագանց>>՝ 52-55, <<շատ լավ>>՝ 42-51, <<լավ>>՝ 29-41, <<բավարար>>՝ 17-28, <<անբավարար>>՝ մինչև 17 միավորների դեպքում: Ուսումնասիրված դպրոցների տնօրենների միջին գնահատականը 43 է, տիպիկ գնահատականը (ավելի շատ կրկնվող) 52 է:

«Կառավարման խորհուրդ» հավելվածի բնութագրիչների գնահատման համաձայն, <<գերագանց>> չի գնահատվել կառավարման խորհուրդներից ոչ մեկը: <<Շատ լավ>> գնահատվել են թվով 17 (39%), <<լավ>>՝ 22 (50%), <<բավարար>>՝ 5 (11%) կառավարման խորհուրդներ: Ամենաբարձր արդյունքը (հավասար) գրանցվել է Մեծ Մասրիկի, Գեղհովիտի թիվ 2, Լճաշենի միջնակարգ դպրոցներում, ամենացածր արդյունքը՝ Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Ըստ ուսումնասիրության ձևաթղթերի՝ <<Կառավարման խորհուրդ>> հավելվածի ուսումնական հաստատության կառավարման խորհուրդը գնահատվում է <<գերագանց>>՝ 46-48, <<շատ լավ>>՝ 35-45, <<լավ>>՝ 25-34, <<բավարար>>՝ 14-24, <<անբավարար>>՝ մինչև 14 միավորների դեպքում: Ուսումնասիրված դպրոցների կառավարման խորհուրդների միջին գնահատականը 32 է, տիպիկ գնահատականը՝ 22:

<<Տնօրենի տեղակալներ>> հավելվածի բնութագրիչների գնահատման համաձայն, <<շատ լավ>> գնահատվել են թվով 15 (34%), <<լավ>>՝ 25 (57%), <<բավարար>>՝ 4 (9%) դպրոցներ: Ուսումնասիրության ձևաթղթերի <<Տնօրենի տեղակալներ>> հավելվածի համաձայն, ուսումնական հաստատության տնօրենի տեղակալները գնահատվում են <<գերագանց>>՝ 111-117, <<շատ լավ>>՝ 95-110, <<լավ>>՝ 75-94, <<բավարար>>՝ 50-74, <<անբավարար>>՝ մինչև 50 միավորների դեպքում: Ըստ ուսումնասիրված դպրոցների տնօրենի տեղակալների միջին գնահատականը 87 է, տիպիկ գնահատականը՝ 95: Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Սևանի թիվ 3 հիմնական դպրոցում, իսկ ամենացածր արդյունքը՝ Վաղաշենի միջնակարգ դպրոցում:

<<Մանկավարժական խորհուրդ>> հավելվածի բնութագրիչների գնահատման համաձայն՝ <<շատ լավ>> են գնահատվել թվով 21 (48%), <<լավ>>՝ 22 (50%), <<բավարար>>՝ 1 (2%) դպրոցներ: Ուսումնա-

սիրության ձևաթղթերի «Մանկավարժական խորհուրդ» հավելվածի համաձայն, ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը գնահատվում է «զերազանց»՝ 55-57, «շատ լավ»՝ 43-54, «լավ»՝ 31-42, «բավարար»՝ 19-30, «անբավարար»՝ մինչև 19 միավորների դեպքում: Ըստ ուսումնասիրված դպրոցների՝ մանկավարժական խորհուրդների միջին գնահատականը 41 է, տիպիկ գնահատականը՝ 43: Ամենաբարձր արդյունքը գրանցվել է Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ամենացածր արդյունքը՝ Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցում:

«Մեթոդական միավորումներ» հավելվածի բնութագրիչների գնահատման համաձայն, «զերազանց» գնահատվել են 3 (7%) , «շատ լավ»՝ 25 (57%), «լավ»՝ 15 (34%), «բավարար»՝ 1 (2%) դպրոցներ: Ուսումնական հաստատության մեթոդական միավորումները գնահատվում են «զերազանց»՝ 28-30, «շատ լավ»՝ 21-27, «լավ»՝ 14-20, «բավարար»՝ 10-13, «անբավարար»՝ մինչև 10 միավորների դեպքում: Ամենացածր ցուցանիշը գրանցվել է Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցում, ամենաբարձր ցուցանիշը՝ Լճաշենի միջնակարգ դպրոցում: Ըստ ուսումնասիրված դպրոցների՝ մեթոդական միավորումների միջին գնահատականը 22 է, տիպիկ գնահատականը՝ 20:

Ծնողական խորհրդի աշխատանքը գնահատվել է «զերազանց»՝ Գավառի թիվ 8 միջնակարգ դպրոցում, «շատ լավ» թվով 15 (34%), «լավ»՝ 25 (57%), «բավարար»՝ 3 (7%) դպրոցներում, որոնցից ամենացածր ցուցանիշն ունի Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցը: «Ծնողական խորհուրդ» հավելվածի համաձայն, ուսումնական հաստատության ծնողական խորհուրդը գնահատվում է «զերազանց»՝ 49-51, «շատ լավ»՝ 37-48, «լավ»՝ 25-36, «բավարար»՝ 17-24, «անբավարար»՝ մինչև 17 միավորների դեպքում:

Աշակերտական խորհրդի աշխատանքը «զերազանց» գնահատվել է թվով 2 (5%), «շատ լավ»՝ 23 (52%), «լավ»՝ 14 (32%), «բավարար»՝ 3 (7%) դպրոցներում: «Աշակերտական խորհուրդ» հավելվածի համաձայն, ուսումնական հաստատության աշակերտական խորհուրդը գնահատվում է «զերազանց»՝ 31-33, «շատ լավ»՝ 24-30, «լավ»՝ 16-23, «բավարար»՝ 11-15, «անբավարար»՝ մինչև 11 միավորների դեպքում:

«Դպրոցավարություն» հավելվածի բնութագրիչների գնահատման համաձայն, «զերազանց» գնահատվել են թվով 38 (81%), «շատ լավ»՝ 4 (17%), «լավ»՝ 2(2%) դպրոցներ: Ուսումնական հաստատությունում «Դպրոցավարությունը» գնահատվում է «զերազանց»՝ 53-61, «շատ լավ»՝ 41-52, «լավ»՝ 30-40, «բավարար»՝ 20-29, «անբավարար»՝ մինչև 20 միավորների դեպքում:

<<Ուսումնական միջավայր>> հավելվածի բնութագրիչների գնահատման արդյունքում <<շատ լավ>> գնահատվել են թվով 5 (11%), <<լավ>>՝ 17 (39%), <<բավարար>>՝ 20 (45%) դպրոցներ, <<անբավարար>>՝ 2 (5%) դպրոցներ: Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը գնահատվում է <<գերազանց>>՝ 63-68, <<շատ լավ>>՝ 49-62, <<լավ>>՝ 34-48, <<բավարար>>՝ 16-33, <<անբավարար>>՝ մինչև 16 միավորների դեպքում: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գավառի թիվ 4 հիմնական դպրոցում, իսկ ամենացածրը՝ Երանոսի թիվ 2 միջնակարգ դպրոցում:

<<Հայոց լեզու>> առարկայի ուսուցումը (ուսուցիչները) <<շատ լավ>> է գնահատվել թվով 11 (25%), <<լավ>>՝ 31 (70%), <<բավարար>>՝ 2 (5%) դպրոցներում: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գավառի թիվ 7 միջնակարգ և Գավառի թիվ 1 հիմնական դպրոցներում (հավասար), ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ծովինարի և Կարճաղբյուրի միջնակարգ դպրոցներում: <<Մաթեմատիկա>> առարկայի ուսուցումը ևս <<շատ լավ>> է գնահատվել թվով 11, <<լավ>>՝ 31, <<բավարար>>՝ 2 դպրոցներում: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Գավառի թիվ 7 միջնակարգ դպրոցում, իսկ ամենացածր ցուցանիշը՝ Ծովինարի միջնակարգ դպրոցում: Ուսումնական հաստատության ուսուցիչը գնահատվում է <<գերազանց>>՝ 4,5-5, <<շատ լավ>>՝ 3,5-4,4, <<լավ>>՝ 2,5-3,4, <<բավարար>>՝ 1,5-2,4, <<անբավարար>>՝ մինչև 1,4 միավորների դեպքում:

<<Հայոց լեզու>> առարկայի թելադրության միջին գնահատականը, ըստ ուսումնասիրված դպրոցների, կազմել է 4,7 միավոր: Ամենացածր միջին գնահատականը թելադրությունից գրանցվել է Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ 2,8 միավոր, ամենաբարձր արդյունքը՝ Վարդենիսի թիվ 2 հիմնական դպրոցում՝ 6,7 միավոր (10 միավորային համակարգում): <<Մաթեմատիկա>> առարկայի գրավոր աշխատանքի միջին գնահատականը, ըստ ուսումնասիրված դպրոցների, կազմել է 4,3 միավոր: Միջին գնահատականը չի գերազանցում 4 միավորը թվով 16 դպրոցներում: Ամենացածր միջին գնահատականը գրավոր աշխատանքից գրանցվել է Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցում՝ 2,3 միավոր, ամենաբարձր արդյունքը՝ Լճաշենի միջնակարգ դպրոցում՝ 6,3 միավոր:

Կրթական գործընթացի ուսումնասիրությունների արդյունքները վերլուծվել են ՀՎՄ-ով: Արդյունքում, ըստ բոլոր չափանիշների, առաջին հնգյակում են Լճաշենի, Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ, Սևանի թիվ 3, Վարդենիսի թիվ 2 հիմնական, Գանձակի թիվ 1 միջնակարգ դպրոցները, իսկ վերջին հնգյակում՝ Արծվանիստի, Ծովակի, Երանոսի թիվ 2, Ծովասարի, Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցները: Լճաշենի և

Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցներում իրականացված ուսումնասիրությունների արդյունքներն այսպիսին են՝

Ուսումնական հաստատությունը	«Հայոց լեզու» ուսուցում	«Մաթեմատիկա» ուսուցում	«Հայոց լեզու» քելադություն	«Մաթեմատիկա» գրավոր աշխատանք	Դպրոցավարու քյուն	Ուսումնական միջավայր	Տնօրեն	Տնօրենի տեղակալներ	Կառավարման խորհուրդը	Մանկավարժական խորհուրդ	Ծնողական խորհուրդ	Աշակերտական խորհուրդ	Մեթոդական միավորումներ
Լճաշենի մ/դ	3,3 «լավ»	3,3 «լավ»	5,9 «բավարար»	6,3 «բավարար»	58 «գերազանց»	28 «բավարար»	53 «գերազանց»	97 «շատ լավ»	42 «շատ լավ»	50 «շատ լավ»	46 «շատ լավ»	24 «շատ լավ»	30 «գերազանց»
Վերին Գետաշենի թիվ 2 մ/դ	2,6 «լավ»	3,3 «լավ»	2,8 «անբավարար»	2,3 «անբավարար»	40 «լավ»	13 «անբավարար»	33 «լավ»	73 «բավարար»	14 «բավարար»	35 «լավ»	24 «բավարար»	16 «լավ»	13 «բավարար»

Կարծում ենք՝ ՀՎՄ-ի կիրառությունը հնարավորություն կտա իրական պատկերացում ունենալ ուսումնական հաստատություններում կրթության որակի մասին, բացահայտելու կրթական գործընթացի կազմակերպման թերություններն ու առավելությունները, ինչպես նաև համեմատելու տարբեր հաստատությունների արդյունքներն ըստ ուսումնասիրությունների չափանիշներից յուրաքանչյուրի:

Գայանե ՍՐԱՊՅԱՆ

Երևանի Ավ. Իսահակյանի անվան թիվ 16 ավագ դպրոցի
հայոց լեզվի և հայ գրականության ուսուցչուհի

Ավագ դպրոցում հայ գրականության ուսուցման նպատակներն ու խնդիրները

Ինչ է գրականությունը

Գրականությունը հասարակության հոգևոր կյանքի կարևոր բնագավառ է: Այն ծագել է գրի, այբուբենի առաջացումից հետո (շատ լեզուներում՝ օգտագործվող **լիտերատուրա** եզրը հենց կապվում է լատիներեն **լիտեր՝ գիր** բառարմատի հետ): Գեղարվեստական գրականությունը, ինչպես և արվեստի մյուս տեսակները, իրականության ճանաչման, արտացոլման ձևերից է, որն իրականացվում է գեղարվեստական-պատկերավոր եղանակով:

Գեղարվեստական գրականությունը պայմանավորված է խոսքի արվեստ լինելու հանգամանքով: Այն կարող է կյանքն արտացոլել ավելի լայն ու բազմակողմանի, քան որևէ այլ արվեստ, որովհետև գեղարվեստական խոսքին մատչելի է այն ամենը, ինչը մատչելի է մարդկային մտածողությանը և լեզվին: Չկա մարդկային հարաբերությունների և հոգեբանության այնպիսի անկյուն, ուր գրողը խոսքի օգնությամբ չկարողանա թափանցել: Գրականությունը կյանքը պատկերում է շարժման, զարգացման մեջ և այդ ամենը ցուցադրում է պատմական կոնկրետությամբ: Գործողության, կյանքի և մարդկային բնավորությունների շարժման ու զարգացման պատկերումը գրականության իսկական տարերքն է: Ընթերցողը գրողի նկարագրության հիման վրա երևակայության օգնությամբ կարող է ստեղծել առարկայական շոշափելիության հասնող պատկերներ: Գրականությունը արձանագրում է ժողովրդի ունեցած ոգեղեն արժեքները: Այս պարագայում գրականության ազգային բնույթի համար էական է դառնում ժողովրդի

ոգու՝ նրա ազգային բնավորության և մտածողության, նրա կյանքի պատմական առանձնահատկությունների գեղարվեստական մարմնավորումը:

Գրականության նշանակությունը

Առանց գեղարվեստական գրականության չի կարելի պատկերացնել մարդկային քաղաքակրթությունը: Մեծ է գրականության դերը մտածողության և իմացության, աշխարհաճանաչման և հոգևոր կերտվածքի ձևավորման գործում: Գրականության նշանակությունը պետք է բնորոշվի այնպես, որ հաշվի առնվի և՛ հաճելին, և՛ օգտակարը, դրանց դաստիարակչական, բարոյակրթական, ճանաչողական նշանակությունը: Բաֆֆին գրականության մասին իր բազմաթիվ դատողությունների մեջ առաջնությունը տալիս է գրականության օգտակարությանը, նրա այն հատկությանը, որն ընդունակ է ստիպել հասարակությանը «մտածել յուր պետքերի և թերությունների վրա»: Բաֆֆին, ինչպես և մեր մյուս մեծերը, չեն շրջանցում խնդիրը, գրականության այդ երկու հիմնական հատկանիշները տեսնում են փոխադարձ համագործակցության մեջ: Այսինքն՝ մի կողմից չեն գնում դեպի «գաղափարի մերկապարանոց հաստատումը», մյուս կողմից՝ «մաքուր արվեստին»: Գեղարվեստը այն ժամանակ միայն պետք է կատարյալ համարել, երբ արվեստի գեղեցկությանը միանում են բարձր, վսեմ և համամարդկային գաղափարներ:

Հայ գրականությունը

Մեր գրականությունը ներառում է ժողովրդական զգացումների, մտքերի, ազգային բաղձանքների ու լեզվական արտահայտչամիջոցների բարձրագույն դրսևորումները: Այն իր լուսավոր մատյաններում պատասխանել է **ովքեր ենք մենք, որտեղից ենք գալիս և ուր ենք գնում** հարցերին: Փաստ է, որ Կորյունի, Եղիշեի, Խորենացու, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Փարպեցու և մեր այլ պատմիչների գրքերը որքան պատմություն, նույնքան էլ գրականություն են: Պետականության բացակայությունը հայ գրականությանը ստիպել է զարգանալ յուրահատուկ մի առաքելությամբ՝ տալ ժողովրդական ընդհանուր մտահոգությունների ու ազգային-քաղաքական կյանքի ոչ այնքան **գեղագիտական**, որքան **գաղափարական** պատկերը:

Անկախ այն բանից, թե ինչ է գրել հայ գրողը, անկախ նրանից, թե ում է դարձրել իր հերոսը և ինչ գաղափար ու նվիրում է շոշափել՝ իր ընդհանրության մեջ նրա համար հարցերի հարցը եղել ու մնացել է **հայրենիքի ճակատագիրը**:

Հայրենիքը հայ գրականության գլխավոր հերոսն է

Ամեն բանից վեր և ամեն բանից առաջ հայրենիքն ու նրա ճակատագիրը հայ գրականության ամենաբնորոշ առանձնահատկությունն է: Հայ գրականության առաջին նշանավոր երկերը բանահյուսական ստեղծագործությունների (առասպել, վիպերգ, էպոս) գրառման կամ մշակման արդյունք են: Աշխարհի քիչ ժողովուրդներ ունեն էպոս, հատկապես այնպիսին, ինչպիսին «Մասունցի Դավիթն» է: Մեր էպոսում արծարծված են ոչ թե ավերման, պատերազմի ու արշավանքների գաղափարներ, այլ կառուցման, արդարության, սեփական հողն ու երկիրը պաշտպանելու, անձնագոհության ու բարության վեհ պատգամներ:

Հայ գրողը հնչեցրել է ապրելու և հարանելու իր հավատը, որն այնքան համահունչ է եղել իր ժողովրդի կյանքի ընթացքին՝ միշտ դեպի վեր, դեպի մեր ազգային գոյության բարձրագույն խորհրդանիշ հանդիսացող Ազատն Մասիսն ի վեր:

Հայ գրականության ուսուցման նպատակներն ու հիմնախնդիրները

Ավագ դպրոցի ուսուցիչների համար մեթոդական ձեռնարկում հստակ նշված են հայ գրականության ուսուցման նպատակներն ու խնդիրները (էջ 49):

Հանրակրթական ավագ դպրոցի սովորողը պետք է ընդհանուր գաղափար կազմի՝

- հայ գրականության զարգացման փուլերի վերաբերյալ,
- հայ գրողների կյանքի և ստեղծագործության ընդհանուր պատկերի վերաբերյալ,
- գրողի և իր ապրած ժամանակաշրջանի փոխհարաբերության վերաբերյալ,
- գրական հիմնական ուղղությունների և մեթոդների վերաբերյալ,
- հայ գրականության համաշխարհային արժեքի, ազգային հոգեկերտվածքի ձևավորման մեջ նրա բացառիկ դերի ու նշանակության վերաբերյալ:

Հանրակրթական ավագ դպրոցի սովորողը պետք է կարողանա՝

- կարդալ, համարժեքորեն ընկալել գրական ստեղծագործությունը,
- վերլուծել, մեկնաբանել ստեղծագործությունը,
- ընկալել երկի կառուցվածքը,
- ներկայացնել ստեղծագործության հիմնական գաղափարը,

- ներկայացնել ստեղծագործության հերոսներին, վերլուծել կերպարները,
- տեսնել կերպարների արարաքների հոգեբանական շարժառիթները,
- արտահայտել սեփական վերաբերմուքը ստեղծագործության գաղափարական ու գեղարվեստական արժեքների վերաբերյալ,
- զուգահեռներ անցկացնել հեղինակների կյանքի, ապրած ժամանակաշրջանի և նրանց ստեղծագործությունների գաղափարական բովանդակության միջև,
- սեփական կենսափորձից ելնելով՝ համեմատել իր և ստեղծագործության մեջ արտահայտված հույզերն ու ապրումները,
- տեսնել ստեղծագործության մեջ արտահայտված գաղափարների արդիական հնչեղությունը, անցյալի և ժամանակակից կյանքի ներքին կապը:

Հանրակրթական ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների հայ գրականության առարկայական ծրագրում ընդգրկված է հայ հին և միջնադարյան գրականությունից սկսած մինչև 20-րդ դարի գրականությունը՝ ներառյալ սփյուռքահայ և օտարագիր հայ գրողների ստեղծագործությունները: Անշուշտ, դժվար է այս հսկայականավալ գրականությունն առաջադրված պահանջով իմանալն ապահովելը, որն էլ երբեմն սովորողի և սովորեցնողի միջև առաջացնում է անվստահություն, ճգնաժամային իրավիճակներ, ծագում են «Չեմ հասցնում», «Չեմ կարող» տիպի կասկածներ: Մակայն չնոռանանք, որ բոլոր տարիքներում էլ առկա են ճգնաժամային իրավիճակներ:

Գրականությունն իր ծավալով և պահանջով ոչ թե նոր տազնապների առիթ պետք է ստեղծի, այլ պետք է տազնապներից, անհնարին իրավիճակներից դուրս գալու միջոց դառնա: Անշուշտ, դրա հնարավորությունը գրականությունն ունի: Խիստ կարևոր է մատուցվող նյութի ընտրությունը և մատուցման ձևը, մինչդեռ ավագ դպրոցում մատուցվող նյութը, բովանդակությունը հաճախ կրկնվում են, հաղորդման, հարցման, գնահատման ձևերն էլ, մեթոդներն էլ նույնն են, ինչ նախորդ դասարաններում:

Մոռանալով շատ կանոթ մի հանգամանք, այն, որ փոխվել է ավագ դպրոցում սովորողի տարիքը, հետաքրքրությունն ու պահանջը, և այդ ամենի հետ հաշվի չնստելով՝ մենք նրան հեռացնում ենք ինչպես գրականությունից, այնպես էլ մեզանից: Մեր բանասիրական ծավալուն ծրագրի պահանջներով անվստահություն ենք սերմանում սովորողների մեջ և զարմանալի չէ, որ հաճախ լսում ենք «Ինձ գրականությունը պետք

չէ. ես այդ ուղղությամբ չեմ գնալու>> և նմանօրինակ այլ արտահայտություններ:

Ինչ պետք է անել ավագ դպրոցում

Կարծում եմ, որ իրավիճակը փոխելու համար անհրաժեշտ է՝

- թեթևացնել ծրագիրը,
- ծրագրում ընդգրկել այնպիսի նյութեր, որոնք էլ ավելի արդիական են և համարդկային արժեք ունեն,
- սովորողին տալ հեղինակներին, ստեղծագործություններն ընտրելու հնարավորություն: Տարեսկզբին կարելի է ներկայացնել գրականության ցանկ, որից սովորողը կընտրի իր ուսումնասիրելիք հեղինակներին և նրանց ստեղծագործությունները, որպեսզի այս կամ այն հարցի մասին հետազոտական աշխատանքներ գրի, ինչպես նաև բանավոր քննությանը նախապատրաստվի,
- գիտելիքի ստուգումը պետք է լինի նրա ընտրած նյութի սահմաններում, բացի այդ՝ նաև անձանոթ նյութի վերլուծությամբ (բանավոր), որը կապահովի ինքնուրույն, սեփական կարծիքն արտահայտվելու հնարավորությունը, այլ ոչ թե այն, թե այս կամ այն հարցի մասին ինչ են ասել գրականագետները (ինչը մեծ տեղ է գտել դասագրքերում),
- հետազոտական աշխատանքների ստուգումն ու գնահատումը կարելի է կատարել տարվա ընթացքում՝ մինչև ավարտական քննությունները:

Եթե ցանկանում ենք նորովի մոտենալ ուսուցմանը՝ ելնելով ժամանակի պահանջից, պետք է վերանայենք դեռևս խորհրդային տարիներից մնացած ավանդույթը՝ խոսել գրականության մասին, բնութագրել հերոսներին, նրանց արարքը գրագանագետների կարծիքով, կարդալ կարդալու համար, բայց երբևիցե չյուրացնել և չկիրառել կարդացածը անտեսելով գրականության հիմնական նպատակը:

Սովորողը պետք է կարողանա կարդալ, հասկանալ և վերլուծել այն ամենը, ինչ կարդում է, հետո ըստ դրա ապրել: Եթե իր ընտրած հեղինակը տալիս է այդ հնարավորությունը, ուրեմն գրականությունը կդառնա ցանկալի և պարտադիր կյանքի շատ հարցերում կողմնորոշվելու համար: Գիրքն ունի հոգեբանություն, ոգի է տալիս իր ընթերցողին, նրան մղում է թռիչքների, օժտում բարձր գաղափարներ ընկալելու կարողությամբ: Դպրոցը պետք է օգնի աշակերտին, որպեսզի կարդացած լավ գիրքը դառնա իր մտքերի շարունակությունը, իր հասունացումն ու ապրումը, իր կենսափորձը:

ՎԵՐԼՈՒԾՈՒ- ԹՅՈՒՆ



Վերլուծությունը կատարել է
ԳԹԿ հետազոտությունների և վերլուծությունների բաժինը

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
գլխավոր մասնագետ

Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ
գլխավոր մասնագետ

Նարե ՍԱՐԳՍՅԱՆ
առաջատար մասնագետ

Մարիամ ԳՐԻԳՈՐՅԱՆ
առաջին կարգի մասնագետ

2016 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վերլուծություն

Նախաբան

Սույն վերլուծությունը վերաբերում է 2016 թ. պետական միասնական և կենտրոնացված քննություններին: Վերլուծության մեջ ներառված չեն զուտ ներքուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (օրինակ՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները:

Պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթին մասնակցող դիմորդների հաշվառման բազաներում ընդունելության ներքուհական քննություններ պահանջող մասնագիտություններին վերաբերող տվյալներ կան այն դեպքում, եթե տվյալ դիմորդը բուհի ընդունելության դիմում-հայտի մասնագիտությունների մասում նշել է զուտ ներքուհական քննություն պահանջող որևէ մասնագիտություն և իր

նշած այլ մասնագիտությունների համար առնվազն մեկ առարկայից հանձնել է միասնական քննություն:

- Վերլուծությունը կատարվել է մի քանի ուղղություններով.
- Կատարվել է ընդհանուր արդյունքների վերլուծություն (ինչպես պետական միասնական, այնպես էլ կենտրոնացված քննությունների), համեմատություններ նախորդ տարիների պետական միասնական քննությունների արդյունքների հետ:
- Վերլուծության են ենթարկվել պետական միասնական քննությունների (այսուհետև՝ միասնական քննություններ) արդյունքներն ըստ խմբերի (ըստ մարզերի, ըստ բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ սեռերի):
- Ըստ թեստերի և թեստային առաջադրանքների կառուցվածքի և որակական բնութագրիչների հետազոտվել են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքները: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվել է առարկայական մասնագետներին:
- Ներկայացվել են 2016 թ. բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկություններ՝ ըստ բուհերի ամենապահանջված ամենաքիչ պահանջված մասնագիտությունների:

1. Ընդհանուր տեղեկություններ

1.1 2016 թ. պետական միասնական քննությունների կազմակերպումը

Գնահատման և թեստավորման կենտրոնում (այսուհետև՝ ԳԹԿ) քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ից և ավարտվում մարտի 15-ին (համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»): Մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով ԳԹԿ-ից դպրոցներ ուղարկված տվյալները և նոր դիմում-հայտերը ապրիլի 10-15-ը ուղարկվում են ԳԹԿ: Բուհերում դիմորդների հայտագրումը կատարվում է տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը: Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար

ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: ՀՀ երկքաղաքացիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված կամ մինչև հուլիսի 31-ը զորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը:

Միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

2016 թ. հունիսի 3-24-ը և հուլիսի 2-8-ը ՀՀ տարածքում տեղաբաշխված 30 և ԼՂՀ 5 քննական կենտրոններում միասնական քննություններ են անցկացվել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն), «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից, որոնց մասնակցելու համար հայտագրվել են ՀՀ, ԼՂՀ և արտերկրի 12063 դիմորդներ (ՀՀ-ում՝ 11199, ԼՂՀ-ում՝ 864 դիմորդ): Քննություններն անցկացվել են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլին (հունիսի 3-24-ը) հայտագրվել են ՀՀ և ԼՂՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2016 թ. և նախորդ տարիների շրջանավարտները՝ 11344 դիմորդ: Լրացուցիչ փուլին (հուլիսի 2-8-ը) հայտագրվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2015-2016 թթ. զորացրվածները, արտերկրի շրջանավարտները, միասնական քննությունների հիմնական փուլին հայտագրված և քննությանը հարգելի պատճառով չմասնակցած, ինչպես նաև հիվանդության պատճառով հիմնական փուլի միասնական քննությունն ընդհատած և լրացուցիչ փուլին մասնակցելու թույլտվություն ստացած դիմորդները: Այս փուլի քննություններին մասնակցության հայտ է ներկայացրել 1053 դիմորդ (ՀՀ-ից՝ 952, արտերկրից՝ 48, ԼՂՀ-ից՝ 53): Միասնական քննությունների լրացուցիչ փուլում հայտագրվածների մի մասը հայտագրված է եղել նաև հիմնական փուլում, սակայն չի ներկայացրել քննության և տվյալ քննության համար կրկին հայտագրվել է լրացուցիչ փուլում, մի մասը հիմնական փուլի քննություններին մասնակցելուց հետո այլ առարկայի

քննություն հանձնելու համար է հայտագրվել, մի մասն էլ ընդհանրապես հայտագրված չի եղել հիմնական փուլում: Այդ պատճառով 2 փուլերի հայտագրվածների ընդհանուր թիվը մեծ է հայտագրված անձանց թվից:

ՀՀ-ում 2016 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին մասնակցելու համար հայտագրված դիմորդներից 10808-ը (10766-ը՝ ՀՀ-ից, 42-ը՝ արտերկրից) և ԼՂՀ դիմորդներից 864-ը եղել են հանրակրթական ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա, իսկ մնացածները՝ նախորդ տարիների շրջանավարտներ:

Միասնական քննություններին հայտագրված, սակայն որևէ քննության չներկայացած դիմորդները 337-ն են:

Բուհերում հայտագրված դիմորդների թիվը 11325 է: Միասնական քննություններին մասնակցելու համար հայտագրված դիմորդների թվից այն պակաս է 738-ով: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ այդ դիմորդները դիմել են բուհերի ընդունելության մրցույթի ցանկում չընդգրկված բուհեր: Բուհերում հայտագրված 11325 դիմորդներից 11259-ը դիմել է պետական, 66-ը՝ ոչ պետական բուհեր:

1.2 2016 թ. պետական միասնական քննությունների ժամանակացույցը

Աղյուսակ 1. 2016 թ. միասնական քննությունների ժամանակացույցը

Քննությունը	Քննության տևողությունը (ժամ)	Քննության օրը	
		հիմնական փուլ	լրացուցիչ փուլ
Համաշխարհային պատմություն Կենսաբանություն Աշխարհագրություն	3	03.06.2016 թ.	06.07.2016 թ.
Հայոց լեզու և հայ գրականություն	3	07.06.2016 թ.	03.07.2016 թ.
Ֆիզիկա	3	10.06.2016 թ.	04.07.2016 թ.
Օտար լեզու	2.5	14.06.2016 թ.	05.07.2016 թ.
Մաթեմատիկա	3	17.06.2016 թ.	07.07.2016 թ.
Հայոց պատմություն Քիմիա	3	21.06.2016 թ.	08.07.2016 թ.
Ռուսաց լեզու	2.5	24.06.2016 թ.	02.07.2016 թ.

Հիմնական փուլի բոլոր քննություններն անցկացվել են թեստերի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ տարբերակներով, լրացուցիչ փուլի քննությունները՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ տարբերակներով, ընդ որում, թեստ 3-ը կազմվել է թեստ 1-ի, թեստ 4-ը՝ թեստ 2-ի, թեստ 6-ը, 7-ը, 8-ը՝ թեստ 5-ի առաջադրանքների և/կամ ընտրովի պատասխանով առաջա-

դրանքների դիստրակտորների տեղափոխությամբ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն լեզուներից որևէ մեկը: Պարսկերեն լեզվի միասնական քննություն հանձնելու համար 2016 թ. հայտ չի ներկայացվել:

1.3 2016 թ. պետական միասնական քննությունների լուսաբանումը և իրազեկումը

Համաձայն ԳԹԿ գործունեության պլանի՝ ԳԹԿ-ն հունվարի 20-ից ԶԼՄ-ներում պարբերաբար հրապարակել է հայտարարություններ, որոնցում նշվել են քննության դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, դիմում-հայտերն ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանումները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվել և պարբերաբար թարմացվել են միասնական քննություններին և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժինը միասնական քննություններին մասնակցելու դիմում-հայտ լրացրած դիմորդների տվյալները էլեկտրոնային եղանակով ստանալու նպատակով այս տարի նույնպես հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային օպերատորների համար կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ:

ԶԼՄ-ներով լուսաբանվել են 2016 թ. միասնական քննությունների հետ կապված մանրամասները, այդ թվում՝ քննությունների նախապատրաստական փուլում ուղեցույցների մշակման և տրամադրման, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրման, թեստերի տպագրման գործընթացները: Քննությունների անցկացման գործընթացը (քննության ընթացքը, բողոքարկումը, տվյալների տրամադրումը, մեկնաբանումը) եղել է լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում:

Հարցազրույցների և ասուլիսների միջոցով պարբերաբար լուսաբանվել է քննական ողջ գործընթացը:

1.4 Դիմորդների մասնակցությունը 2016 թ. պետական միասնական քննություններին

Աղյուսակ 2-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2016 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին

հայտագրված, քննության ներկայացած, բացակայած, հիվանդության պատճառով քննությունն ընդհատած և քննությունից հեռացված դիմորդների թվերը:

Աղյուսակ 2. Դիմորդների մասնակցությունը 2016 թ. միասնական քննություններին


Քննական առարկաներ	Հայտագրված դիմորդներ	Քննությանը ներկայացած դիմորդներ	Բացակա դիմորդներ	Հիվանդության պատճառով քննությունը ընդհատած դիմորդներ	Քննությունից հեռացված դիմորդներ
Հայոց լեզու և հայ գրականություն	6565	6336	229	4	
Մաթեմատիկա	5659	5400	259	14	2
Անգլերեն	5047	4833	213	13	2
Ֆիզիկա	2017	1947	69	3	1
Հայոց պատմություն	1528	1440	87	5	1
Կենսաբանություն	1480	1449	31	2	
Քիմիա	1225	1183	42	5	1
Ռուսաց լեզու	730	652	78	2	
Աշխարհագրություն	370	356	14	1	
Գերմաներեն	196	192	4		
Ֆրանսերեն	179	173	6		
Համաշխարհային պատմություն	137	134	3		
Իսպաներեն	10	10			
Իտալերեն	3	3			

Աղյուսակի տվյալներից հետևում է, որ յուրաքանչյուր քննությունից բացակայածների թիվը հիմնականում չի գերազանցել 5%-ը: Բացառություն են կազմել «Հայոց պատմություն» և «Ռուսաց լեզու» առարկաների քննություններին չներկայացած դիմորդները, որոնք կազմել են հայտագրված դիմորդների, համապատասխանաբար, 5.7 և 10.7 տոկոսը: Բոլոր քննությունների հանրագումարում բացակայել է դիմորդների 4.1 %-ը, հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 49 դիմորդ, 7 դիմորդ հեռացվել է քննությունից:

1.5 2016 թ. և նախորդ տարիների պետական միասնական քննությունների մասնակիցների թվի համեմատությունը

Դիագրամ 1-ում ըստ տարեթվերի ներկայացված են 2008-2016 թթ. միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը: Դիագրամից երևում է, որ ընդհանուր առմամբ նվազման միտում է դիտվում՝ սկսած 2009 թվականից: 2011 թ. միասնական քննությունների դիմորդների ընդհանուր թիվը մոտ 7 անգամ պակաս է նախորդ և հաջորդ տարիների դիմորդների թվից, քանի որ հանրակրթական ուսումնական հաստատությունները 2010-2011 ուսումնական տարում շրջանավարտ չեն ունեցել: Ընդհանուր նվազման ֆոնին 2012 թ. հայտագրվածների թիվը 219-ով գերազանցում է 2010 թ. ցուցանիշը, իսկ վերջին տարիներին արձանագրված նվազման միտումն աստիճանաբար մեղմացել է. 2014 թ. համեմատությամբ 2015 թ. հայտագրվածների թիվը նվազել է 467-ով (3.6%-ով), իսկ 2015-ի համեմատությամբ 2016-ին՝ 455-ով (3.6%-ով):

Դիագրամ 1. Միասնական քննություններին հայտագրվածների թիվը ըստ տարիների




Տարեցտարի դիմորդների թվի նվազմանը հիմնականում նպաստում են՝

- ՀՀ-ում գործող օտարերկրյա բուհերի և դրանցում սովորել ցանկացողների թվի ավելացումը,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ընդունվողների թվի ավելացումը,
- 1990-ական թվականներին բնակչության ծնելիության մակարդակի նվազումը,
- արտագաղթը:


Դիագրամ 2-ում ներկայացված է տարբեր տարիների միասնական քննությունների մասնակիցների թվի համեմատությունը «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաներից, դիագրամ 3-ում՝ բնագիտական առարկաներից, դիագրամ 4-ում՝ օտար լեզուներից:

Միասնական քննությունների մասնակիցների թիվը ըստ տարիների


Դիագրամ 2



Դիագրամ 3



Դիագրամ 4



2. Վիճակագրական տվյալներ 2016 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքների վերաբերյալ

Աղյուսակ 3-ում ըստ քննական առարկաների ներկայացված են 2016 թ. միասնական քննությունների մասնակիցների թիվը, առավելագույն, նվազագույն և միջին միավորները, ինչպես նաև մասնակիցների թիվը և տոկոսը ըստ գնահատման 20 միավորանոց սանդղակի 0-7.25, 7.5-13.25, 13.5-16.75, 17-18.75 և 19-20 միջակայքերի:

Միջին միավորը բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:

Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է: Այն ցույց է տալիս, թե ստացված արդյունքները որքանով են շեղված միջին միավորից: Ոչ մեծ ստանդարտ շեղումը վկայում է միջին միավորի շուրջը արդյունքների կուտակվածության և, ըստ այդմ՝ միջին միավորի հուսալիության մասին:

Մասնակիցների թվից կախված է միջին միավորի հուսալիությունը: Մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը:

2.1 Միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Աղյուսակ 3. 2016 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները

Քննական առարկաները	Քննության մասնակիցների թիվը	Առավելագույն միավորը	Եվագագույն միավորը	Միջին միավորը	0 – 7,25 միավոր հավաքած մասնակիցներ		7,5 – 13,25 միավոր հավաքած մասնակիցներ		13,5 – 16,75 միավոր հավաքած մասնակիցներ		17,0 – 18,75 միավոր հավաքած մասնակիցներ		19,0-20,0 միավոր հավաքած մասնակիցներ	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայր լեզու և հայ գրականություն	6336	20	1	13.7	597	9.4	2218	35.0	1711	27.0	1105	17.4	705	11.1
Մաթեմատիկա	5400	20	1	11.6	808	15.0	2800	51.9	1086	20.1	481	8.9	225	4.2
Անգլերեն	4833	20	2	14.1	467	9.7	1546	32.0	1104	22.8	803	16.6	913	18.9
Ֆիզիկա	1947	20	0	11.4	470	24.1	765	39.3	372	19.1	190	9.8	150	7.7
Կենսաբանություն	1449	20	1.5	12.9	285	19.7	435	30.0	284	19.6	209	14.4	236	16.3
Հայոց պատմություն	1440	20	2	13.3	173	12.0	535	37.2	311	21.6	246	17.1	175	12.2
Քիմիա	1183	20	0	12.9	193	16.3	430	36.3	186	15.7	150	12.7	224	18.9
Ռուսաց լեզու	652	20	1.75	9.8	216	33.1	291	44.6	100	15.3	35	5.4	10	1.5
Աշխարհագրություն	356	20	4	13.5	40	11.2	125	35.1	94	26.4	60	16.9	37	10.4
Գերմաներեն	192	20	3.5	15.3	16	8.3	40	20.8	43	22.4	47	24.5	46	24.0
Ֆրանսերեն	173	20	4	15.9	5	2.9	36	20.8	38	22.0	54	31.2	40	23.1
Համաշխարհային պատմություն	134	20	1.75	14.4	12	9.0	47	35.1	21	15.7	27	20.1	27	20.1
Իսպաներեն	10	19	7.75	16.2			2	20.0	2	20.0	3	30.0	3	30.0
Իտալերեն	3	17.75	10.75	15.1			1	33.25	1	33.25	1	33.25		

2.2. Միասնական քննությունների անցկացման կարգի և արդյունքների բողոքարկումը

Համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի», պետական միասնական քննության բողոք-դիմումները բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում ներկայացվում են ԳԹԿ: Տեսակավորված բողոք-դիմումները ներկայացվում բողոքարկման հանձնաժողովին: Դրանք հանգամանորեն ուսումնասիրելուց հետո բողոքարկման հանձնաժողովի կողմից կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման կամ փոփոխության վերաբերյալ: Դրական լուծում ստացած բողոք-դիմումների և բողոքարկման

հանձնաժողովի կողմից կազմած արձանագրության հիման վրա միասնական քննությունների էլեկտրոնային բազայում կատարվում է համապատասխան փոփոխություն: Հիմնական փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են վերջին քննության բողոքարկման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, լրացուցիչ փուլինը՝ վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:


Աղյուսակ 4. 2016 թ. միասնական քննությունների արդյունքներին վերաբերող բողոք-դիմումների թիվը

Քննական առարկաները	Բողոք-դիմումների ընդհանուր թիվը	Դրական լուծում ստացած բողոք-դիմումների	
		թիվը	տոկոսը
Հայոց լեզու և հայ գրականություն	66	4	6.1
Մաթեմատիկա	36	5	13.9
Կենսաբանություն	27	6	22.2
Անգլերեն	31	15	48.4
Քիմիա	13	4	30.8
Հայոց պատմություն	14	2	14.3
Ֆիզիկա	14	2	14.3
Աշխարհագրություն	2		
Ռուսաց լեզու	4	2	50.0
Իսպաներեն	1	1	100.0
Համաշխարհային պատմություն	9	8	88.9
Ֆրանսերեն	3		
Գերմաներեն	1		
Ընդամենը	221	49	22.2


Աղյուսակ 4-ից երևում է, որ բողոքարկման հանձնաժողովի կողմից քննության արդյունքների հետ անհամաձայնությանը վերաբերող բողոք-դիմումների մի մասին դրական լուծում է տրվել: Աշխարհագրության, գերմաներենի և ֆրանսերենի բողոքարկումների հիման վրա քննության արդյունքի փոփոխություն չի կատարվել: Ընդհանուր առմամբ 221 դիմումներից դրական լուծում է ստացել 49-ը (22.2%-ը):

2.3. 2016 թ. և նախորդ տարիների միասնական քննությունների միջին միավորների համեմատությունը


Դիագրամ 5



Դիագրամ 6



Դիագրամ 7



2.4. 2016 թ. կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքները

Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք, ելնելով տվյալ քննական առարկայի առանձնահատկություններից, հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով: Դրանք կազմակերպվում են

տվյալ տարվա հունիսի 25-ից մինչև հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում: Կենտրոնացված քննությունների քննական կենտրոնների ցանկը մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը: Դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով, և գնահատականը դիմորդին հայտնվում է քննության օրը՝ քննասենյակում:

Աղյուսակ 5. Կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքները

Քննությունը	Հայտարարված դիմորդների թիվը	Քննության ներկայացած դիմորդների թիվը	Բացավանդի թիվը	Միջին միավորը	20 միավոր հավաքած դիմորդների		Դրական միավորի շեմը չհաղթահարած դիմորդների	
					թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Անզլերեն (բանավոր)	1003	972	31	11.4	6	0.6	55	5.7
Հայոց լեզու (բանավոր)	361	334	27	9.9	3	0.9	31	9.3
Ռուսաց լեզու (բանավոր)	113	106	7	12.4	6	5.7	7	6.6
Բանավոր հաղորդակցման միջոցներ	100	94	6	13.8	6	6.4		
Ստեղծագործական աշխատանք	97	91	6	14.2				
Ֆրանսերեն (բանավոր)	63	61	2	14.0	1	1.6		
Գերմաներեն (բանավոր)	51	50	1	15.4	1	2.0		
Իսպաներեն (բանավոր)	6	6		17.3	1	16.7		
Իտալերեն (բանավոր)	2	2		14.5				

Կենտրոնացված քննություններից բացակայել են հիմնականում նրանք, ովքեր իրենց հայտագրած միասնական քննություններից չեն հաղթահարել դրական միավորի շեմը:

«Հայոց լեզու», «Ռուսաց լեզու» և «Անզլերեն» առարկաների բանավոր քննություն հանձնած դիմորդների 5.7-9.3%-ը չի հաղթահարել դրական միավորի շեմը: Մյուս առարկաների կենտրոնացված քննություններից «անբավարար» գնահատական ստացող չի եղել:


20 միավորների ամենաբարձր տոկոսը բաժին է ընկնում իսպաներենի բանավոր քննություն հանձնած դիմորդներին (16.7%), իսկ ստեղծագործական աշխատանքի և իտալերենի կենտրոնացված քննությունների մասնակիցներից ոչ ոք 20 միավոր չի հավաքել:

Աղյուսակ 6-ում և դրան հաջորդող դիագրամ 8-ում ներկայացված են 7 լեզուներից բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները, այդ դիմորդների՝ միևնույն առարկաների միասնական քննություններից հավաքած միջին միավորները և միասնական քննությունների ընդհանուր միջին միավորները:

Աղյուսակ 6. Տվյալ առարկայից միասնական և բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները

Քննական առարկաները	Միասնական քննության ընդհանուր միջին միավորը	Բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները	
		միասնական քննությունից	բանավոր քննությունից
Հայոց լեզու և հայ գրականություն	13.7	14.6	9.7
Անգլերեն	14.1	15.7	11.4
Գերմաներեն	15.3	18.0	15.4
Ֆրանսերեն	15.9	17.0	14.0
Ռուսաց լեզու	9.8	13.0	12.4
Իսպաներեն	16.2	18.0	17.3
Իտալերեն	15.1	17.3	14.5

Դիագրամ 8. Տվյալ քննական առարկայից միասնական և բանավոր քննություն հանձնած դիմորդների միջին միավորները



3. 2016 թ. պետական միասնական քննությունների միջին միավորները ըստ խմբերի

Այս բաժնում ներկայացվում են 2016 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի, հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների և ըստ սեռերի:

3.1. Միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և միասնական քննություններին այլ երկրներից մասնակցածների

Աղյուսակ 7-ում ՀՀ մայրաքաղաքից, մարզերից և քննություններին այլ երկրներից մասնակցածների կտրվածքով ներկայացված են 2016 թ. միասնական քննությունների միջին միավորները: Հաստացված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը: Տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորին հավասար կամ դրանից բարձր միջին միավորների վանդակները գունավորված են: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, նրա միավորը աղյուսակում որպես միջին միավոր չի նշվել:

Աղյուսակ 7. Միջին միավորները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և միասնական քննություններին այլ երկրներից մասնակցածների

		ՀՀ										Լ.ՂՀ	Վրաստան	Բուստան	Ուկրաինա	
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Մոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր					Տավուշ
Հայրցվեզու և հայ գրականություն	մասնակիցների թիվը	2041	294	402	398	369	489	488	404	396	144	318	570	20	3	
	միջին միավորը	13.7	13.4	14.5	13.8	14.0	13.7	15.4	14.6	13.6	12.8	13.3	11.4	8.0	5.9	
Անգլերեն	մասնակիցների թիվը	2025	176	278	287	209	364	415	339	236	104	175	210	11	4	
	միջին միավորը	14.1	13.3	14.4	13.9	13.3	14.3	14.8	14.0	14.6	12.8	13.1	14.1	7.1	10.7	
Մաթեմատիկա	մասնակիցների թիվը	2137	199	293	314	268	353	408	395	325	132	203	357	13	3	
	միջին միավորը	12.0	11.0	11.5	11.1	11.3	11.4	12.6	11.9	11.7	10.4	11.6	10.0	9.3	13.8	
Ֆիզիկա	մասնակիցների թիվը	797	80	108	106	78	135	127	160	128	31	60	130	6	1	
	միջին միավորը	11.8	11.0	12.1	10.8	10.8	11.1	13.6	11.0	11.6	11.5	10.6	8.8	8.5	2.0*	
Հայրց պատմություն	մասնակիցների թիվը	451	62	79	70	90	113	114	98	75	37	59	183	9		
	միջին միավորը	14.1	12.6	13.1	13.4	12.7	13.5	15.6	13.6	14.3	12.8	12.9	9.9	9.4		
Գենաբանություն	մասնակիցների թիվը	536	61	90	81	87	84	101	150	79	22	60	83	10	4	1
	միջին միավորը	12.6	12.6	15.0	13.2	13.7	11.7	14.1	13.7	13.6	12.5	12.4	11.0	7.2	5.3	5.0*
Քիմիա	մասնակիցների թիվը	444	43	82	70	71	68	85	127	74	19	45	44	8	3	
	միջին միավորը	12.1	12.9	13.2	13.1	13.7	13.1	15.3	13.2	14.9	12.8	11.7	12.9	9.4	3.5	
Ռուսացվեզու	մասնակիցների թիվը	111	23	30	28	44	57	25	39	38	10	35	206	6		
	միջին միավորը	7.7	11.8	10.1	7.2	11.0	10.9	13.5	12.7	11.7	9.2	11.5	9.0	5.2		
Տրանսերեն	մասնակիցների թիվը	54	15	12	3		5	33	14	12	8	16	1			
	միջին միավորը	16.2	16.2	17.7	17.0		19.4	15.6	14.0	18.4	13.9	13.5	18.5*			

Աշխարհագրություն	մասնակիցների թիվը	76	19	25	29	33	18	19	31	22	6	54	23	1		
	միջին միավորը	12.8	12.3	14.0	15.8	13.7	14.5	11.7	15.4	16.1	15.0	12.7	10.2	6.25*		
Գերմաներեն	մասնակիցների թիվը	22	4	26	14	38	22	5	27	15	9	8		2		
	միջին միավորը	16.1	9.6	13.7	12.1	15.9	15.7	11.6	17.7	18.3	13.6	13.9		10.1		
Համաշխարհային պատմություն	մասնակիցների թիվը	19	11	3	5	8	22	5	21	8	3	17	12			
	միջին միավորը	14.3	14.3	12.1	16.2	14.9	14.6	14.8	15.3	13.7	11.7	15.0	12.0			
Իսպաներեն	մասնակիցների թիվը	10														
	միջին միավորը	16.2														
Իտալերեն	մասնակիցների թիվը	2					1									
	միջին միավորը	14.3					16.75*									

*- քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ նրա ցուցանիշը որպես միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակ 7-ից երևում է, որ կենսաբանության քննությունից ամենաբարձր միջին միավոր են հավաքել Արարատի մարզի դիմորդները, համաշխարհային պատմությունից՝ Արմավիրի, ֆրանսերենից՝ Լոռու, աշխարհագրությունից և գերմաներենից՝ Սյունիքի, իսկ հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող մյուս առարկաների միասնական քննություններից՝ Կոտայքի մարզի դիմորդները: Իսպաներենի քննության բոլոր մասնակիցները Երևանից են, իտալերենի քննության 3 մասնակիցներից 2-ը՝ Երևանից, 1-ը՝ Լոռու մարզից:

3.2. Միջին միավորները ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 8-ում ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր) ներկայացված են 2016 թ. միասնական քննությունների միջին միավորները և այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Ըստ քաղաքային բնակավայրերի բնակչության թվի առանձնացվել են խոշոր, միջին և փոքր քաղաքները: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Խոշոր քաղաքների սյունակը պարունակում է և՛ 3 խոշոր քաղաքների՝ Երևանի, Գյումրու և Վանաձորի դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը:

Գյուղական բնակավայրերի դիմորդների թիվը և միջին միավորները ներկայացվել են և՛ ընդհանուր հաշվարկով, և՛ սահմանամերձ, հեռավոր ու բարձր լեռնային գյուղերի համար առանձին:

Սյունակների գունավորած վանդակներում ըստ քննական առարկաների ներկայացված են ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորները: Հաստացված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ բնակավայրի տիպերի (ենթատիպերի):

Աղյուսակ 8. Միջին միավորները ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի

Քննական առարկաները	Քաղաքներ						Գյուղեր						Ընդհանուր միջին միավորը
	Խոշոր քաղաքներ				Միջին և փոքր քաղաքներ		այդ թվում						
	մասնակիցների թիվը	միջին միավորը	այդ թվում		մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	այդ թվում		մասնակիցների թիվը	միջին միավորը	
			մասնակիցների թիվը	միջին միավորը					Սահմանամերձ և հեռավոր գյուղեր	Բարձր լեռնային գյուղեր			
Հայոց լեզու և հայ գրականություն	2439	13.8	2041	13.7	1555	14.5	1749	13.6	116	13.1	166	12.9	13.7
Մաթեմատիկա	2527	12.1	2137	12.0	1185	11.9	1314	11.0	79	11.4	112	10.5	11.6
Անգլերեն	2436	14.3	2025	14.1	1200	14.6	971	13.0	49	12.8	100	12.4	14.1
Ֆիզիկա	949	11.8	797	11.8	412	11.5	449	11.4	28	12.1	38	10.3	11.4
Հայոց պատմություն	548	14.1	451	14.1	324	14.3	376	12.8	32	11.8	51	11.7	13.3
Կենսաբանություն	646	12.8	536	12.6	389	14.4	316	12.1	20	12.5	37	12.3	12.9
Քիմիա	541	12.5	444	12.1	184	14.9	239	12.5	17	12.8	27	13.1	12.9
Ռուսաց լեզու	165	9.2	111	7.7	139	11.3	135	10.4	12	12.0	13	9.5	9.8
Աշխարհագրություն	98	13.2	76	12.8	79	14.3	155	13.8	15	14.2	15	12.6	13.5
Տրանսլեն	61	16.0	54	16.2	53	16.8	58	14.9	3	9.2	1	10.5*	15.9
Համաշխարհային պատմություն	34	14.4	19	14.3	22	13.8	66	14.9	10	14.2	6	13.3	14.4
Գերմաներեն	24	16.4	22	16.1	41	15.6	125	15.0	13	16.6	11	17.3	15.3
Իսպաներեն	10	16.2	10	16.2									16.2
Իտալերեն	2	14.3	2	14.3			1	16.75*					15.1

*- քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ նրա ցուցանիշը որպես միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակ 8-ից երևում է, որ ընդհանուր առմամբ բարձր են հատկապես միջին և փոքր քաղաքների դիմորդների հավաքած միջին միավորները: Ինչպես 2015 թվականին, 2016-ին նույնպես բոլոր առարկաներից հավաքած միջինները, բացի համաշխարհային պատմության միջինից, գերազանցում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Բնակավայրերի ենթատիպերից հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, ֆրանսերենի, հայոց պատմության, կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության միջին միավորներով առաջատար են միջին և փոքր քաղաքները:

Կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության, ռուսաց լեզվի և իտալերենի քննություններից խոշոր քաղաքները ներկայացրած դիմորդների հավաքած միջին միավորները փոքր-ինչ զիջում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Խոշոր քաղաքներն առաջատար են մաթեմատիկայի միջին միավորով:

Ընդհանուր հաշվով գյուղաբնակ դիմորդների հավաքած միջին միավորներից միայն ֆիզիկայի, ռուսաց լեզվի, աշխարհագրության և համաշխարհային պատմության միջիններն են այդ առարկաների

քննությունների ընդհանուր միջին միավորներից բարձր: Համաշխարհային պատմության միջին միավորով առաջատար են գյուղական բնակավայրերը: Սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերն առանձին դիտարկելու դեպքում երևում է, որ ֆիզիկայից և ռուսաց լեզվից ամենաբարձր միջին միավորները հավաքել են սահմանամերձ և հեռավոր գյուղերից միասնական քննություններին մասնակցած դիմորդները, իսկ գերմաներենից՝ բարձր լեռնային գյուղերից մասնակցածները:

Աղյուսակ 9-ում ըստ սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղեր ունեցող վարչատարածքային միավորների ներկայացված են բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով դպրոցների եռյակները: Ուսումնասիրվել են 1-ից ավելի շրջանավարտ ունեցած դպրոցները: Աղյուսակում գունավորած են 50 և ավելի տոկոս բուհ ընդունվածներ արձանագրած դպրոցների տղերը:

Աղյուսակ 9. Բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով դպրոցների եռյակները ըստ սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերի

Սահմանամերձ և հեռավոր գյուղեր					Բարձր լեռնային գյուղեր				
Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանակարտաների թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը	Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանակարտաների թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը
Գեղարքունիք	Թթուշքի միջև, դպրոց	11	7	63.6	Արագածոտն	Կաքի միջև, դպրոց	6	4	66.7
	Վահանի միջև, դպրոց	20	5	25.0		Լորաշենի միջև, դպրոց	15	7	46.7
	Փամբակ-Դարանակի միջև, դպրոց	10	1	10.0		Արագածի թիվ 1 միջև, դպրոց	21	8	38.1
Սյունիք	Եղվարդի միջև, դպրոց	5	4	80.0	Գեղարքունիք	Արեգունու միջև, դպրոց	5	2	40.0
	Մամի միջև, դպրոց	6	4	66.7		Վաղաշենի միջև, դպրոց	35	14	40.0
	Ագարակի միջև, դպրոց	41	21	51.2		Սարուխանի միջև, դպրոց	14	5	35.7
Վայոց ձոր	Բարձրուտու միջև, դպրոց	6	3	50.0	Շիրակ	Միգավետի միջև, դպրոց	4	2	50.0
	Խնձորուտի միջև, դպրոց	4	2	50.0		Նահապետավանի միջև, դպրոց	11	5	45.5
	Մարտիրոսի միջև, դպրոց	10	5	50.0		Թավշուտի միջև, դպրոց	7	3	42.9
Տավուշ	Ն. Կարվիրադրուրի միջև, դպրոց	9	6	66.7	Սյունիք	Գորաքի միջև, դպրոց	9	4	44.4
	Բերդավանի միջև, դպրոց	42	24	57.1		Սամակունքի միջև, դպրոց	11	4	36.4
	Պարավարի միջև, դպրոց	20	10	50.0		Սպանդարյանի միջև, դպրոց	5	1	20.0
Գուտայք					Գուտայք	Հասիսի միջև, դպրոց	3	1	33.3
						Սալբերդի միջև, դպրոց	6	2	33.3

Աղյուսակ 10-ում ներկայացված են 10-ից պակաս շրջանավարտ

ունեցած սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերի դպրոցներից բուհ ընդունվածների թվերը: Գունավորած են 50%-ից ավելի բուհ ընդունվածներ արձանագրած դպրոցների տողերը:

Աղյուսակ 10. 2016 թ. 10-ից պակաս շրջանավարտ ունեցած սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերի դպրոցներից բուհ ընդունվածների թիվը

Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Բնակավայրի ենթատիպը	Բարձր լեռնային			Մարզը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Բնակավայրի ենթատիպը	Բարձր լեռնային		
			Շրջամտավարտների թիվը	Շնորհումվածների թիվը	Մտնուցվածների տոկոսը				Շրջամտավարտների թիվը	Շնորհումվածների թիվը	Մտնուցվածների տոկոսը
Արագածոտն	Կաքի միջն. դպրոց	բարձր լեռնային	6	4	66.7	Մյուսիք	Եղվարդի միջն. դպրոց	բ. կեն.	5	4	80.0
	Լեռնապարի միջն. դպրոց		8	3	37.5		Մավի միջն. դպրոց		6	4	66.7
	Օաղկաշենի միջն. դպրոց		8	3	37.5		Շիկահողի միջն. դպրոց		4	1	25.0
	Լուսազուտի միջն. դպրոց		6	2	33.3		Վաղատուրի միջն. դպրոց		5	1	20.0
	Ջորագլխի միջն. դպրոց		8	2	25.0		Կոռնիձորի միջն. դպրոց		8	1	12.5
	Վարդաբլուրի միջն. դպրոց		5	1	20.0		Գորաքի միջն. դպրոց		9	4	44.4
	Նիզավանի միջն. դպրոց		5	1	20.0		Սպանդարյանի միջն. դպրոց		5	1	20.0
	Գեղարտուի միջն. դպրոց		6	1	16.7		Վայոց ձոր		Բարձրուտ միջն. դպրոց	6	3
Գեղարքունիք	Կուտականի միջն. դպրոց	1	1	100.0	Տավուշ	Խնձորուտի միջն. դպրոց	4	2	50.0		
	Արեգունու միջն. դպրոց	5	2	40.0		Բարեկամավանի միջն. դպրոց	2	1	50.0		
	Ախարաձորի միջն. դպրոց	7	1	14.3		Ն. Կարսիբաղբուրի միջն. դպր.	9	6	66.7		
Կոտայք	Հատիսի միջն. դպրոց	3	1	33.3	Տավուշ	Բերքաբերի միջն. դպրոց	2	1	50.0		
	Մևաբերդի միջն. դպրոց	6	2	33.3		Ոսկեպարի միջն. դպրոց	7	3	42.9		
Շիրակ	Օաղկուտի միջն. դպրոց	1	1	100.0		Այգեպարի միջն. դպրոց	3	1	33.3		
	Միզավենի միջն. դպրոց	4	2	50.0		Բաղանիսի միջն. դպրոց	8	2	25.0		
	Թավշուտի միջն. դպրոց	7	3	42.9		Վազաշենի միջն. դպրոց	8	2	25.0		
	Հատիճի միջն. դպրոց	3	1	33.3		Ն. Օաղկավանի միջն. դպրոց	7	1	14.3		
	Զուլգաբլուրի միջն. դպրոց	7	1	14.3							

Աղյուսակ 11-ում ներկայացված են միասնական քննություններից 15-20 միջին միավորներ հավաքած շրջանավարտներ ունեցած սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերի դպրոցներին վերաբերող տվյալներ: Գունավորած են 18-ից բարձր միավորների վանդակները:

Աղյուսակ 11. Միասնական քննություններից 15-20 միջին միավորներ արձանագրած սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերի դպրոցները

Սահմանամերձ և հեռավոր գյուղեր					Բարձր լեռնային գյուղեր				
Վարչատարածքային միավորը	Ոստիմնական հաստատությունը	Երջանակարգների թիվը	Քննության մասնավորների թիվը	Միջին միավորը	Վարչատարածքային միավորը	Ոստիմնական հաստատությունը	Երջանակարգների թիվը	Քննության մասնավորների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն					Հայոց լեզու և հայ գրականություն				
Մյունիք	Ագարակի միջն. դպրոց	41	11	16.2	Արագածոտն	Կարի միջն. դպրոց	6	2	15.5
	Կողբի թիվ 2 միջն. դպրոց	22	3	17.7		Լորաշենի միջն. դպրոց	15	2	15.5
Տավուշ	Կողբի թիվ 1 միջն. դպրոց	25	7	15.6	Գեղարքունիք	Ծովագյուղի միջն. դպրոց	33	3	18.3
	Կալանավանի միջն. դպրոց	13	2	15.4		Մաղինայի միջն. դպրոց	24	4	16.5
Ռուսաց լեզու						Մովսեսի միջն. դպրոց	42	6	16.0
Մյունիք	Հարթաշենի միջն. դպրոց	11	2	15.1		Գեղիկավանի թիվ 1 միջն. դպրոց	33	5	15.4
						Երանոսի թիվ 1 միջն. դպրոց	42	2	15.3
Անգլերեն					Մյունիք	Սառնակունքի միջն. դպրոց	11	2	16.8
Տավուշ	Կողբի թիվ 2 միջն. դպրոց	22	3	16.2	Անգլերեն				
	Բերդավանի միջն. դպրոց	42	9	15.0	Գեղարքունիք	Մաղինայի միջն. դպրոց	24	4	16.2
Գերմաներեն					Մյունիք	Սառնակունքի միջն. դպրոց	11	3	18.3
Մյունիք	Ագարակի միջն. դպրոց	41	8	18.6	Գերմաներեն				
Մաթեմատիկա					Գեղարքունիք	Ծովագյուղի միջն. դպրոց	33	2	18.6
Տավուշ	Բերդավանի միջն. դպրոց	42	12	15.3	Հայոց պատմություն				
Աշխարհագրություն					Գեղարքունիք	Աստղածառի միջն. դպրոց	56	6	15.7
Մյունիք	Հավիթբենի միջն. դպրոց	17	2	16.9	Կենսաբանություն				
	Ագարակի միջն. դպրոց	41	3	16.1	Արագածոտն	Լորաշենի միջն. դպրոց	15	4	17.1
Տավուշ	Մարիգուլի միջն. դպրոց	12	2	15.9	Քիմիա				
Մյունիք	Հավիթբենի միջն. դպրոց	17	2	15.6	Արագածոտն	Լորաշենի միջն. դպրոց	15	3	15.9
Տավուշ	Բերդավանի միջն. դպրոց	42	3	16.7	Համաշխարհային պատմություն				
	Կողբի թիվ 1 միջն. դպրոց	25	3	16.3	Տավուշ	Կողբի թիվ 1 միջն. դպրոց	25	2	19.4

Աղյուսակ 11-ից երևում է, որ միասնական քննություններից 18-ից բարձր միջին միավորներ են հավաքել Մյունիքի մարզի Ագարակ և Սառնակունք (գերմաներենից և անգլերենից), Տավուշի մարզի Կողբ (համաշխարհային պատմություն) և Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ (հայոց լեզու և հայ գրականություն, գերմաներեն) համայնքների միջնակարգ դպրոցների շրջանավարտները: Դիտարկված ամենաբարձր միջին միավորը 19.4 է՝ համաշխարհային պատմությունից (Կողբի թիվ 1 միջնակարգ դպրոց):

3.3. Միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների

Աղյուսակ 12-ում ներկայացված են 2016 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահամալիրներ և այլն) և այդ քննությունների ընդհանուր միջին միավորները: Հաստացված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ ուսումնական հաստատության տեսակի: Տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորին հավասար կամ դրանից բարձր միջին միավորների վանդակները գունավորած են: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, նրա միավորը աղյուսակում որպես ամենաբարձր միջին միավոր չի նշվել:

Աղյուսակ 12. 2016 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների

Քննական առարկաները	Ավագ դպրոցներ		Միջնակարգ դպրոցներ		Վարժարաններ		Կրթահամալիրներ		Այլ ուսումնական հաստատություններ		Ընդհանուր միջին միավորը
	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	
Պետական ուսումնական հաստատություններ											
Հայոց լեզու և հայ գրականություն	3399	13.9	2350	13.3	389	13.9	40	14.2	23	9.4	13.7
Անգլերեն	2971	14.4	1277	13.1	388	14.6	44	15.6	8	12.0	14.1
Մաթեմատիկա	2626	11.7	1741	10.9	843	12.7	56	13.4	20	7.1	11.6
Կենսաբանություն	895	13.3	402	11.7	93	13.4	19	16.0	5	7.5	12.9
Ֆիզիկա	796	11.1	615	11.1	472	12.0	22	13.8	5	5.2	11.4
Քիմիա	771	13.1	286	12.3	82	12.1	17	16.7	2	8.6	12.9
Հայոց պատմություն	770	13.9	532	12.3	83	13.2	6	16.3	6	9.1	13.3
Ռուսաց լեզու	280	10.5	251	9.8	110	8.5			10	6.2	9.8
Աշխարհագրություն	145	13.5	188	13.3	14	15.7	3	15.7	4	10.8	13.5

Ֆրանսերեն	95	16.5	73	15.1	2	12.1	1	20.0*	1	18.75*	15.9
Գերմաներեն	47	15.1	137	15.2	2	16.6			1	20.0*	15.3
Համաշխարհային պատմություն	36	14.5	79	14.3	17	14.2					14.4
Բուսաներեն	8	16.0	1	15.5*							16.2
Բուսյերեն	2	14.3	1	16.75*							15.1
Ոչ պետական ուսումնական հաստատություններ											
Հայոց լեզու և հայ գրականություն	8	15.7			35	15.5	7	16.4	85	14.6	13.7
Անգլերեն	8	15.0			44	15.2	5	15.3	88	14.0	14.1
Մաթեմատիկա	3	15.9			40	15.1	8	11.5	63	12.7	11.6
Գենսաբանություն	2	13.1			11	17.6	4	14.2	18	13.8	12.9
Ֆիզիկա					18	17.2	3	7.2	16	13.6	11.4
Քիմիա	2	14.0			9	16.1	1	20.0*	13	13.9	12.9
Հայոց պատմություն	3	18.5			14	14.6	1	15.25*	25	14.3	13.3
Ռուսաց լեզու									1	6.0*	9.8
Աշխարհագրություն							1	14.5*	1	19.75*	13.5
Ֆրանսերեն									1	19.25*	15.9
Գերմաներեն							2	18.5	3	14.5	15.3
Համաշխարհային պատմություն									2	15.4	14.4
Բուսաներեն					1	19.0*					16.2

*- քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ըստ այդմ նրա ցուցանիշը որպես միջին միավոր չի ներկայացվում:

Աղյուսակ 12-ից երևում է, որ պետական ուսումնական հաստատությունները ներկայացրած դիմորդներից ավագ դպրոցների շրջանավարտներն են հավաքել ռուսաց լեզվից, ֆրանսերենից և համաշխարհային պատմությունից ամենաբարձր միջին միավորները: Այս դպրոցներից ներկայացած դիմորդների հավաքած գրեթե բոլոր միջին միավորները, բացի ֆիզիկայի, գերմաներենի, իսպաներենի և իտալերենի միջիններից, գերազանցում կամ հավասար են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Պետական ավագ դպրոցների ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենից է (16.5), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (10.5):

Միջնակարգ դպրոցների շրջանավարտ դիմորդների հավաքած բոլոր միջին միավորները ցածր են համապատասխան քննության ընդհանուր միջին միավորից: Ռուսաց լեզվի միջինը հավասար է ընդհանուր միջին միավորին: Ամենաբարձր միջին միավորը գերմաներենից է (15.2), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (9.8): Աշխարհագրության քննությունից ըստ ուսումնական հաստատության տեսակի դիտարկվող ամենաբարձր միջին միավորը (15.7) հավաքել են պետական վարժարաններից և կրթահամալիրներից ներկայացած դիմորդները, գերմաներենից (16.6)՝ պետական վարժարաններից ներկայացածները:

Ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորները վարժարանների դեպքում բաժին են ընկնում հայոց լեզվին և հայ գրականությանը, անգլերենին, մաթեմատիկային, ֆիզիկային, կենսաբանությանը, աշխարհագրությանը և գերմաներենին: Պետական վարժարաններից ներկայացած դիմորդների ամենաբարձր միջին միավորը գերմաներենից է (16.6): Ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորները վարժարանների դեպքում բաժին են ընկնում հայոց լեզվին և հայ գրականությանը, անգլերենին, մաթեմատիկային, ֆիզիկային, կենսաբանությանը, աշխարհագրությանը և գերմաներենին: Պետական վարժարաններից ներկայացած դիմորդների ամենաբարձր միջին միավորը գերմաներենից է (16.6), ամենացածրը՝ ռուսաց լեզվից (8.5): Իսպաներենի և իտալերենի քննություններին այս ուսումնական հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Պետական կրթահամալիրներից ներկայացած դիմորդների բոլոր միջին միավորները բարձր են համապատասխան քննությունների ընդհանուր միջիններից: Դրանք նաև ըստ ուսումնական հաստատության տեսակի դիտարկվող ամենաբարձր միջին միավորներն են: Ռուսաց լեզվի, գերմաներենի, իսպաներենի և իտալերենի քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել: Ամենաբարձր միջին միավորը քիմիայից է (16.7), ամենացածրը՝ մաթեմատիկայից (13.4):

Պետական հանրակրթական այլ ուսումնական հաստատություններից (հատուկ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և այլն) հայտագրված դիմորդների՝ բոլոր առարկաների միասնական քննություններից հավաքած միջին միավորները ցածր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ամենաբարձր միջին միավորն անգլերենից է (12.0), ամենացածրը՝ ֆիզիկայից (5.2): Համաշխարհային պատմության, իսպաներենի և իտալերենի քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Ոչ պետական ավագ դպրոցների շրջանավարտները մասնակցել են հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի, մաթեմատիկայի, կենսաբանության, քիմիայի և հայոց պատմության քննություններին, որոնցից հավաքած բոլոր միջին միավորները գերազանցում են համապատասխան ընդհանուր միջին միավորներին: Ոչ պետական ուսումնական հաստատություններից ավագ դպրոցների շրջանավարտները հավաքել են մաթեմատիկայի և հայոց պատմության ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 15.9 և 18.5): Այս դպրոցների դեպքում դիտված ամենաբարձր միջին միավորը հայոց պատմությունից է (18.5), ամենացածրը՝ կենսաբանությունից (13.1):

Ըստ ուսումնական հաստատության տեսակի կենսաբանության,

Ֆիզիկայի և քիմիայի քննություններից դիտարկված ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 17.6, 17.2 և 16.1) հավաքել են ոչ պետական վարժարանները ներկայացրած դիմորդները: Այս հաստատություններից քննության ներկայացած դիմորդների հավաքած բոլոր միջին միավորները գերազանցում են համապատասխան քննության ընդհանուր միջին միավորին: Ոչ պետական վարժարանները ներկայացրած դիմորդների ամենաբարձր միջին միավորը կենսաբանությունից է (17.6), ամենացածրը՝ հայոց պատմությունից (14.6): Ռուսաց լեզվի, ֆրանսերենի, գերմաներենի, աշխարհագրության և համաշխարհային պատմության քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններից կրթահամալիրները ներկայացրած դիմորդների՝ հայոց լեզվի և հայ գրականության, անգլերենի և գերմաներենի քննություններից հավաքած միջին միավորներն ամենաբարձրն են (համապատասխանաբար՝ 16.4, 15.3 և 18.5): Նշված առարկաների և կենսաբանության միջին միավորները բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորից: Ռուսաց լեզվի, ֆրանսերենի, համաշխարհային պատմության, իսպաներենի և իտալերենի քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել: Ամենաբարձր միջին միավորը դիտվում է գերմաներենից (18.5), ամենացածրը՝ ֆիզիկայից (7.2):

Անգլերենի և գերմաներենի քննություններից ոչ պետական հանրակրթական այլ ուսումնական հաստատություններից հայտագրված դիմորդների հավաքած միջին միավորները ցածր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Ամենաբարձր միջին միավորը համաշխարհային պատմությունից է (15.4), ամենացածրը՝ մաթեմատիկայից (12.7): Իսպաներենի և իտալերենի քննություններին այս հաստատությունների շրջանավարտները չեն մասնակցել:

Համեմատելով պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների ցուցանիշները՝ նկատում ենք, որ հիմնականում ավելի բարձր են ոչ պետականներից ներկայացած դիմորդների հավաքած միջին միավորները: Կրթահամալիրների դեպքում հայոց լեզվի և հայ գրականության ու անգլերենի միջին միավորներով առաջատար են ոչ պետական, իսկ մաթեմատիկայի, բնագիտական առարկաների և հայոց պատմության միջիններով՝ պետական կրթահամալիրները:

Հանրագումարի բերելով աղյուսակ 12-ի տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ հիմնականում բարձր են ավագ դպրոցներից, վարժարաններից, պետական կրթահամալիրներից և ոչ պետական հանրակրթական ուսումնական այլ հաստատություններից հայտագրված դիմորդների միջին միավորները: Մինչդեռ միջնակարգ դպրոցներից

հայտագրվածների հավաքած միջին միավորները զիջում են ընդհանուր միջին միավորներին:

Ռուսաց լեզվից, ֆրանսերենից, համաշխարհային պատմությունից և իտալերենից ամենաբարձր միջին միավորները (համապատասխանաբար՝ 10.5, 16.5, 14.5 և 14.3) հավաքել են պետական ավագ դպրոցներից հայտագրված դիմորդները, հայոց լեզվից և հայ գրականությունից (15.9) ու հայոց պատմությունից (18.5)՝ ոչ պետական ավագ դպրոցներից հայտագրվածները, անգլերենից (15.6), քիմիայից (16.7) և աշխարհագրությունից (15.7)՝ պետական կրթահամալիրներից (աշխարհագրությանը նաև պետական վարժարաններից) հայտագրվածները, կենսաբանությունից (17.6) և ֆիզիկայից (17.2)՝ ոչ պետական վարժարաններից հայտագրվածները, գերմաներենից (18.5)՝ ոչ պետական կրթահամալիրներից հայտագրվածները:

Աղյուսակ 13-ում ներկայացված է բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը: Ընդգրկվել են 2016 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած հաստատությունները:

Աղյուսակ 13. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տասնյակը

Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Վարչատարածքային միավորը	Շրջանավարտների թիվը	Բուհ ընդունվածների	
			թիվը	տոկոսը
Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ դպրոց	Երևան	135	113	83.7
Վանաձորի մաթեմ. և բնագիտ. առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց	Լոռի	29	24	82.8
ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	Երևան	188	155	82.4
«Տոտոն» վարժարան	Շիրակ	123	101	82.1
ՃՇՀԱՀ հիմնադրամի Մ.Աբեղյանի անվան ավագ դպրոց	Երևան	220	170	77.3
Բերդի վարժարան	Տավուշ	22	17	77.3
Կապանի թիվ 2 ավագ դպրոց	Սյունիք	115	88	76.5
Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոց		31	23	74.2
ՎՊՄՀ-ի հենակետային վարժարան	Լոռի	117	86	73.5
Արթիկի թիվ 7 ավագ դպրոց	Շիրակ	56	40	71.4

Ըստ աղյուսակ 13-ի տվյալների բուհ ընդունված շրջանավարտների տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը Երևանի պետական համալսարանին առընթեր Ա. Շահինյանի

անվան ֆիզիկամաթեմատիկական դպրոցն է, որի 135 շրջանավարտներից 113-ը (83.7%) ընդունվել են ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված բուհեր:

Հնարավոր է, որ այն շրջանավարտները, որոնք ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, ընդունվել են այդ ցանկում չընդգրկված մեկ այլ բուհ, այլ պետության կամ ՀՀ-ում գործող օտարերկրյա բուհ որևէ բուհ:

Աղյուսակ 14-ում ներկայացված են բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների: Այստեղ ևս ընդգրկվել են 2016 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած հաստատությունները:


Աղյուսակ 14. Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների			Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների		
		թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը			թիվը	Բուհ ընդունվածների թիվը	Բուհ ընդունվածների տոկոսը
Երևան	Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ դպրոց	135	113	83.7	Կոտայք	Հրազդանի թիվ 1 ավագ դպրոց	78	54	69.2
	ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	188	155	82.4		Քասախի թիվ 1 միջն. դպրոց	18	12	66.7
	Թիվ 198 ավագ դպրոց	98	67	68.4		Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	93	59	63.4
	ՃՀՀԱՀ հիմնադր. ավագ դպրոց	220	170	77.3		Չարենցավանի ավագ դպրոց	131	81	61.8
	Թիվ 190 ավագ դպրոց	173	114	65.9		Նոր Հաճնի ավագ դպրոց	54	33	61.1
Արագածոտն	Թալինի ավագ դպրոց	51	31	60.8	Գեղարքա	«Տոտոն» վարժարան	123	101	82.1
	Հավթաշենի միջն. դպրոց	10	6	60.0		Արթիկի թիվ 7 ավագ դպրոց	56	40	71.4
	Մալաթի ավագ դպրոց	74	41	55.4		«Հայրուսակ» համ. «Շիրակացի» մ. դպրոց	14	10	71.4
	Աշտիկի միջն. դպրոց	15	8	53.3		Գրուրու թիվ 3 ավագ դպրոց	56	37	66.1
	Աշտարակի ավագ դպրոց	151	78	51.7		ԳՊՄԻ ավագ դպրոց	22	13	59.1
Արարատ	Նորաշենի միջն. դպրոց	31	22	71.0	Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ դպրոց	115	88	76.5
	Միսի միջն. դպրոց	15	10	66.7		Քաջարանի թիվ 2 միջն. դպրոց	31	23	74.2
	Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	70	44	62.9		Գորիսի թիվ 4 ավագ դպրոց	114	72	63.2
	Արտաշատի ավագ դպրոց	99	60	60.6		Միսիսի ավագ դպրոց	145	88	60.7
	Արարատի ավագ դպրոց	69	40	58.0		Կապանի թիվ 10 միջն. դպրոց	17	10	58.8

Արևավիթ	Արևավիթի թիվ 4 ավագ դպրոց	117	70	59.8	Վալոյոց ձոր	Արեւիկի միջև. դպրոց	13	9	69.2
	Լորակերտի միջև. դպրոց	28	16	57.1		Եղեգնաձորի ավագ դպրոց	84	48	57.1
	Բալբակաշատի միջև. դպրոց	16	9	56.3		Վայքի ավագ դպրոց	26	14	53.8
	Արևավիթի թիվ 1 ավագ դպրոց	79	44	55.7		Մարտիրոսի միջև. դպրոց	10	5	50.0
	Աղավնատան միջև. դպրոց	20	10	50.0		Ձերմուկի կրթահամալիր	48	22	45.8
Գեղարքունիք	Սևանի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոց	91	62	68.1	Տավուշ	Բերդի վարժարան	22	17	77.3
	Զովաբերի միջև. դպրոց	14	9	64.3		Տավուշի միջև. դպրոց	13	9	69.2
	Թթուջրի միջև. դպրոց	11	7	63.6		Խաչառանի միջև. դպրոց	16	11	68.8
	Մարտունու ավագ դպրոց	103	63	61.2		Իջևանի ավագ դպրոց	126	76	60.3
	Գավառի ավագ դպրոց	66	33	50.0		Դիլիջանի ավագ դպրոց	67	39	58.2
Լոռի	Վանաձորի մաթեմ. և բնագիտ. արարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց	29	24	82.8					
	ՎՊՄՀ-ի հենակետային վարժարան	117	86	73.5					
	Վանաձորի ՀՄՊՀ-ի մասնաճյուղի ավագ դպրոց	30	18	60.0					
	Թումանյանի միջև. դպրոց	10	6	60.0					
	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց	143	81	56.6					

Դիագրամ 9-ում և 10-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր և ամենացածր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները: Դիագրամների յուրաքանչյուր սյունը ներկայացնում է տվյալ ուսումնական հաստատության շրջանավարտների ընդհանուր թիվը (100%): Սյան մուգ երանգը բացարձակ թվով ներկայացնում է բուհ ընդունված շրջանավարտներին, բաց երանգը՝ բուհում չհայտագրված, ինչպես նաև հայտագրված, սակայն չընդունված շրջանավարտներին:


Դիագրամ 9. Բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների



■ Բուհ ընդունված շրջանավարտների թիվը

□ Գնորդված կամ չգնորդված շրջանավարտների թիվը

Դիագրամ 10. Բուհ ընդունված շրջանավարտների ամենացածր տոկոսով հանրակրթական ուսումնական հաստատությունների հնգյակները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների



Այդուսակ 15-ում ներկայացված են միասնական քննություններից 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները: 19-20 միավորների վանդակները զուգնավորած են:

Այդուսակ 15. Միասնական քննություններից 18-ից բարձր միջին միավորներ արձանագրած հանրակրթական ուսումնական հաստատությունները ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանավորանքների թիվը		
		Բնույթ ըստ մասնակիցների	Թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն				
Երևան	«Հյուսիսային համալսարանի» ավագ դպրոց	21	3	19.1
	«Օհանյան» կրթահամալիր	6	2	18.3
Արագածոտն	Լեռնարտի միջն. դպրոց	5	2	19.5
Գեղարքունիք	Շովազուղի միջն. դպրոց	33	3	18.3
Կոտայք	Բլախովիտի միջն. դպրոց	21	5	19.3
	Մայակովսկու միջն. դպրոց	8	2	19.0
	Ալուկերի միջն. դպրոց	16	2	18.9
Շիրակ	Կամարիսի միջն. դպրոց	17	3	18.3
	Ջրակիի միջն. դպրոց	7	2	18.6
	Պեմզաշենի միջն. դպրոց	26	6	18.5
Սյունիք	Մանուկբուրի միջն. դպրոց	32	6	18.3
	Կապանի թիվ 10 միջն. դպրոց	17	5	19.0
Ռուսաց լեզու				
Արագածոտն	Բյուրականի միջն. դպրոց	31	2	19.3
Անգլերեն				
Երևան	«Օհանյան» կրթահամալիր	6	2	19.6
Արագածոտն	Ն. Բազմաբերդի միջն. դպրոց	23	3	18.0
	Երնցատափի միջն. դպրոց	6	2	18.0
Արարատ	Բերդիկի միջն. դպրոց	14	2	19.6
	Դեղձուտի միջն. դպրոց	13	2	19.4
	Խաչիսի միջն. դպրոց	*	2	18.5
Արմավիր	Պողոսի միջն. դպրոց	19	2	19.5
	Առասաշենի միջն. դպրոց	17	3	19.1
	Փշատավանի միջն. դպրոց	23	2	18.4
	Արաբսի միջն. դպրոց	11	4	18.3
	Գալի միջն. դպրոց	38	9	18.0
Լոռի	Կանաձորի ՀՄՊՆ մասն. ավ. դ.	30	2	18.3
Կոտայք	Մայակովսկու միջն. դպրոց	8	3	18.5
	Քանաքեռավանի միջն. դպրոց	18	3	18.2
Սյունիք	Կապանի թիվ 10 միջն. դպրոց	17	5	18.9
	Մանակունքի միջն. դպրոց	11	3	18.3
Վայոց ձոր	Արտավանի միջն. դպրոց	7	2	18.8
Ֆրանսերեն				

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Երջանավորանքների թիվը		
		Բնույթ ըստ մասնակիցների	Թիվը	Միջին միավորը
Մաթեմատիկա				
Երևան	«Մակեդոն» օտար լեզուների մասնավոր դպրոց	15	2	19.0
Արմավիր	Առասաշենի միջն. դպրոց	17	2	19.5
	Ղուկսի միջն. դպրոց	8	2	18.0
Գեղարքունիք	Ճամբարակի թիվ 4 միջն. դպրոց	5	2	18.6
Կենսաբանություն				
Երևան	Թիվ 159 ավագ դպրոց	71	4	18.1
Արագածոտն	Մաստարայի միջն. դպրոց	24	2	18.8
Արարատ	Մայաթ-Նույաի միջն. դպրոց	25	2	19.5
	Նարեկի միջն. դպրոց	8	2	19.0
Արմավիր	«Էրնեկեան» միջն. դպրոց	19	3	19.0
Գեղարքունիք	Ջորագուղի ավագ դպրոց	*	3	18.3
Կոտայք	Քաանյի թիվ 1 միջն. դպրոց	18	2	19.0
	Չարենցավանի ավագ դպրոց	131	9	18.2
Շիրակ	Փոքր Մանթաշի միջն. դպրոց	30	2	18.9
	«Հայրուսակ» հ. «Շիրակացի» մ. դ.	14	2	18.0
Սյունիք	Կապանի թիվ 9 ավագ դպրոց	52	5	18.2
Քիմիա				
Արագածոտն	Ապարանի ավագ դպրոց	74	4	18.6
Արմավիր	«Էրնեկեան» միջն. դ.	19	2	19.6
Լոռի	Լեռնանցքի միջն. դ.	17	2	19.1
Կոտայք	Քաանյի թիվ 1 միջն. դ.	18	2	19.8
	Աբովյանի կրթահամալիր	34	2	18.9
	Հրազդանի թիվ 10 ավագ դ.	104	8	18.3
Շիրակ	Լեռնանիստի միջն. դ.	33	2	18.3
	Գյումրու թիվ 18 միջն. դ.	44	2	18.8
	«Հայրուսակ» հ. «Շիրակացի» մ. դ.	14	2	18.3
	Գյումրու թիվ 1 ավագ դ.	39	10	18.0
Ֆիզիկա				
Շիրակ	Գյումրու թիվ 1 ավագ դպրոց	39	3	19.6
Կոտայք	Արամուսի միջն. դպրոց	40	3	19.3
	Բյուրեղավանի ավագ դպրոց	39	2	18.0
Աշխարհագրություն				
Երևան	Թիվ 29 ավագ դպրոց	250	2	18.0

Երևան	Թիվ 189 ավագ դպրոց	158	5	18.3
	Թիվ 184 ավագ դպրոց	199	2	18.1
	Թիվ 46 ավագ դպրոց	117	5	18.0
Արագածոտն	Սպարանի ավագ դպրոց	74	9	18.5
Արարատ	Այնթապի թիվ 1 միջև. դպրոց	34	3	19.3
	Շարակերտի միջև. դպրոց	36	3	18.4
Լոռի	Վանաձորի թիվ 5 ավագ դպրոց	143	5	19.4
Կոտայք	Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	93	7	18.5
Վայոց ձոր	Աղւնջաձորի միջև. դպրոց	3	2	18.8
Գերմաներեն				
Երևան	«Արեգմազան» կրթահամալիր	34	2	18.5
Գեղարքունիք	Սևանի ին. Արովանի անվ. ավ. դ.	91	7	19.0
	Շուվագուտի միջև. դպրոց	33	2	18.6
Լոռի	Օձունի թիվ 1 միջև. դպրոց	29	2	18.3
Շիրակ	Գյումրու թիվ 3 ավագ դպրոց	56	2	19.1
	Լոր Կանքի միջև. դպրոց	14	2	19.1
	Փանիկի միջև. դպրոց	35	5	18.2
Սյունիք	Մեղրու թիվ 2 միջև. դպրոց	12	3	18.8
	Ագարակի միջև. դպրոց	41	8	18.6
Տավուշ	Ղաղալանի միջև. դպրոց	11	2	18.8

Արարատ	Լորաշենի միջև. դպրոց	31	3	18.3
Արմավիր	Լոր Արտագերքի միջև. դպրոց	16	2	18.3
Գեղարքունիք	Լուսավունքի միջև. դպրոց	22	2	19.3
Լոռի	Օձունի թիվ 1 միջև. դպրոց	29	2	19.4
Շիրակ	Գյումրու թիվ 1 ավագ դպրոց	39	2	19.8
Տավուշ	Բերդի վարժարան	22	3	18.5
	Լոյենբերյանի ավագ դպրոց	42	2	18.1
Հայոց պատմություն				
Երևան	«Երևանի Ան. Շիրակցու ձևարան» կրթահամալիր	87	2	20.0
	«ՄՖԸ» ֆինանս. ակադեմիայի «Ինտելեկտուս» ավագ դպրոց	16	2	18.8
	«Էլիտա» հեղինակային միջև. դպր.	14	2	18.5
Արագածոտն	Թալինի ավագ դպրոց	51	2	19.1
Գեղարքունիք	Լորաստանի թիվ 1 միջև. դպրոց	36	2	18.3
Կոտայք	Արզականի միջև. դպրոց	30	3	18.2
Շիրակ	«Հայրուսակ» հ. «Շիրակացի» մ.դ.	14	3	18.7
Վայոց ձոր	Եղեգիսի միջև. դպրոց	11	2	18.0
Համաշխարհային պատմություն				
Երևան	Թիվ 189 ավագ դպրոց	158	3	19.0
Լոռի	Դաեդի միջև. դպրոց	24	2	18.4
Շիրակ	«Ճոտոն» վարժարան	123	3	18.8
	Սառնաղբյուրի միջև. դպրոց	32	2	18.8
Սյունիք	Կապանի թիվ 2 ավագ վ	115	2	19.0
Տավուշ	Կողբի թիվ 1 միջև. դպրոց	25	2	19.4
	Այաջրի միջև. դպրոց	40	3	19.2

* - տվյալ դպրոցից շրջանավարտների թվի վերաբերյալ տեղեկություն չի տրամադրվել:

Աղյուսակ 16-ում ներկայացված են 2016 թ. 2-5 շրջանավարտ ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների միասնական քննություններից հավաքած միջին միավորները: 18-ից բարձր միավորների վանդակները գունավորված են:

Աղյուսակ 16. 2-5 շրջանավարտ ունեցած հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների հավաքած միջին միավորները

Վարչատարածքային միավորը	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Շրջանավարտների թիվը	Գնևորության մասնակիցների թիվը	Միջին միավորը	Մաթեմատիկա				
					Շրջանավարտների թիվը	Գնևորության մասնակիցների թիվը	Միջին միավորը	Շրջանավարտների թիվը	Գնևորության մասնակիցների թիվը
Հայոց լեզու և հայ գրականություն					Մաթեմատիկա				
Երևան	«Կուպյան» վարժարան	5	2	15.6	Երևան	«Կուպյան» վարժարան	5	2	11.4
Արագածոտն	Լեռնաբլուրի միջև. դպրոց	5	2	19.5		«Գերմինա» կրթահամալիր	2	2	8.5
Լոռի	Քարինջի միջև. դպրոց	5	2	13.4	Գեղարքունիք	Ճամբարյանի թիվ 4 միջև. դպրոց	5	2	18.6

Շիրակ	«Պրոգրես» համալս. բազ. դպրոց	5	2	16.0
	Աղիկի միջն. դպրոց	5	2	13.9
	Կրասարի միջն. դպրոց	4	2	12.6
	Մեղրաշատի միջն. դպրոց	5	2	6.5
Սյունիք	Եղվարդի միջն. դպրոց	5	2	14.0
	Հայկաթի միջն. դպրոց	5	2	13.9
Վայոց ձոր	Աղնջաձորի միջն. դպրոց	3	2	17.9
Հայոց պատմություն				
Երևան	«Կուպալյան» վարժարան	5	2	12.8
Անգլերեն				
Երևան	«Կուպալյան» վարժարան	5	4	16.8
Շիրակ	«Պրոգրես» համալս. բազ. դպրոց	5	2	11.6
Սյունիք	Եղվարդի միջն. դպրոց	5	2	12.1
Կենսաբանություն				
Շիրակ	«Պրոգրես» համալս. բազ. դպրոց	5	2	12.6
Տրանսերեն				
Վայոց ձոր	Աղնջաձորի միջն. դպրոց	3	2	18.8

Լոռի	Քարինցի միջն. դպրոց	5	2	6.1
Շիրակ	«Պրոգրես» համալս. բազ. դպրոց	5	2	11.3
	Գետքի միջն. դպրոց	3	2	10.8
	Բալասանուրի միջն. դպրոց	5	3	9.0
	Մեղրաշատի միջն. դպրոց	5	2	4.8
Սյունիք	Արծվանիկի միջն. դպրոց	5	2	12.5
	Կապանի թիվ 4 միջն. դպրոց	4	2	8.9
	Վարդանիձորի միջն. դպրոց	3	3	7.7
	Եղվարդի միջն. դպրոց	5	2	6.6
	Վաղաահինի միջն. դպրոց	5	2	4.6
Քիմիա				
Շիրակ	«Պրոգրես» համալս. բազ. դպրոց	5	2	6.5
Ֆիզիկա				
Արագածոտն	Վարդաբլուրի միջն. դպրոց	5	2	10.1
Գեղարքունիք	Ճամբարակի թիվ 4 միջն. դպրոց	5	2	10.9
Շիրակ	Մեղրաշատ միջն. դպրոց	5	2	5.3

Աղյուսակ 16-ից երևում է, որ 18-ից բարձր միջին միավորներ են հավաքել միայն 3 հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտները: Արագածոտնի մարզի Լեռնարոտի միջնակարգ դպրոցից 2 դիմորդ հայոց լեզվի և հայ գրականության միասնական քննությունից հավաքել է 19.5 միավոր, Վայոց ձորի մարզի Աղնջաձորի միջնակարգ դպրոցից 2 դիմորդ ֆրանսերենից՝ 18.8, և Գեղարքունիքի մարզի Ճամբարակի թիվ 4 միջնակարգ դպրոցից 2 դիմորդ մաթեմատիկայից՝ 18.6:

3.4. Միջին միավորները ըստ սեռերի

Աղյուսակ 17-ում ըստ սեռերի ներկայացված է 2016 թ. միասնական քննությունների մասնակիցների թիվը և միջին միավորը: Յուրաքանչյուր սեռին համապատասխանող սյունակում գունավորած վանդակներում ներկայացված են միասնական քննությունների համապատասխան ընդհանուր միջին միավորին հավասար կամ դրան գերազանցող միջին միավորները:

Հաստացված շրջանակի մեջ առնված թվերը ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորը ըստ սեռերի:

Աղյուսակ 17. 2016 թ. միասնական քննությունների միջին միավորները ըստ սեռերի

Քննական առարկաներ	Ընդհանուր		Աղջիկներ		Տղաներ	
	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը	մասնակիցների թիվը	միջին միավորը
Հայոց լեզու և հայ գրականություն	6336	13.7	4771	14.1	1565	12.5
Մաթեմատիկա	5400	11.6	2023	12.0	3377	11.4
Անգլերեն	4833	14.1	3300	14.5	1533	13.1
Ֆիզիկա	1947	11.4	417	12.4	1530	11.1
Կենսաբանություն	1449	12.9	871	12.9	578	13.0
Հայոց պատմություն	1440	13.3	843	13.5	597	13.0
Քիմիա	1183	12.9	681	12.8	502	13.1
Ռուսաց լեզու	652	9.8	376	11.1	276	8.0
Աշխարհագրություն	356	13.5	212	13.9	144	12.8
Գերմաներեն	192	15.3	145	15.9	47	13.2
Ֆրանսերեն	173	15.9	141	16.0	32	15.7
Համաշխարհային պատմություն	134	14.4	70	14.5	64	14.1
Իսպաներեն	10	16.2	8	17.4	2	11.6
Իտալերեն	3	15.1	3	15.1		

Աղյուսակ 17-ից երևում է, որ բացի քիմիայից, մնացած բոլոր քննությունների միջին միավորները աղջիկների դեպքում հավասար կամ բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Իտալերենի քննության 3 մասնակիցները աղջիկներ են:

Կենսաբանության և քիմիայի քննություններից տղաների հավաքած միջին միավորները բարձր են համապատասխան ընդհանուր միջին միավորներից: Տղաները միայն կենսաբանության և քիմիայի միջին միավորներով են գերազանցում աղջիկներին:

Աղջիկների ամենաբարձր միջին միավորը իսպաներենից է (17.4), տղաներինը՝ ֆրանսերենից (15.7): Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաներից աղջիկների ամենաբարձր միջին միավորը ֆրանսերենից է (16.0):

Աղջիկների և տղաների ամենացածր միջին միավորը ռուսաց լեզվից է (համապատասխանաբար՝ 11.1 և 8.0):

4. Թեստեր և թեստային առաջադրանքներ

4.1. Թեստերի կառուցվածքը և գնահատումը

Միասնական քննությունների թեստերը կարող են կազմված լինել ընտրովի, կարճ պատասխանով առաջադրանքներից և պնդումների փնջերից: Ընտրովի պատասխանով առաջադրանքի պատասխանի 4 հնարավոր տարբերակներից (դիստրակտորներից) ճիշտ է միայն մեկը: Կարճ պատասխանով առաջադրանքները 2 տիպի են: Դրանցից մեկի դեպքում պատասխանը մեկ թիվ է կամ մի քանի թվեր, որոնց հաջորդականությունը պահպանելը պարտադիր է: Մյուս տիպի դեպքում թվային հաջորդականության պահպանումը պարտադիր չէ: Պնդումների փունջը կազմվում է 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի հնարավոր պատասխաններն են՝ «Ճիշտ է», «Միսալ է», «Չգիտեմ», և դրանցից պետք է ընտրել միայն մեկը:

2016 թ. միասնական քննությունների թեստերում կատարվել են մասնակի փոփոխություններ: Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների միասնական քննությունների թեստերի որոշ առաջադրանքներում փոխվել են թվային տվյալները: Օտար լեզուների թեստերի մի քանի ընտրովի պատասխանով առաջադրանքներ փոխարինվել են կարճ պատասխան պահանջող առաջադրանքներով:

Բոլոր թեստերի առավելագույն միավորը 80 է (50 միավոր՝ Ա, 30 միավոր՝ Բ մակարդակներից): Գնահատման 80 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է

$$U=0.25 * U_{80}$$

բանաձևով, որտեղ U -ն միավորն է 20 միավորանոց սանդղակում, U_{80} -ը՝ 80 միավորանոց սանդղակում: Դրական են համարվել 7.5 և ավելի միավորները:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանի համար ըստ գնահատման 20 միավորանոց համակարգի տրվել է 0.25 միավոր (ըստ 80 միավորանոց համակարգի՝ 1 միավոր): Պնդումների փնջերը կազմված են եղել 6 պնդումներից, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար, ըստ գնահատման 20 միավորանոց համակարգի տրվել է 0.25 միավոր, յուրաքանչյուր սխալ պատասխանի դեպքում պնդումների տվյալ փնջին տրվելիք միավորներից հանվել է 0.25 միավոր: «Չգիտեմ» պատասխանի դեպքում միավոր չի տրվել և չի հանվել: Ամբողջ փնջին միավոր չի տրվել նաև պնդումների փնջի միավորների գումարի արդյունքում ստացված

բացասական թվի կամ 0-ի դեպքում: Այլ առաջադրանքներից հավաքած միավորների վրա տվյալ փնջի միավորները չեն ազդել:

4.2. Պետական միասնական քննությունների թեստերի բարդությունը և հուսալիությունը

Աղյուսակ 18-ում ներկայացված են թեստերի բարդության և հուսալիության գործակիցները: Մասնակիցների փոքրաթիվ լինելու պատճառով իսպաներենի և իտալերենի թեստերը և մի քանի այլ առարկաների լրացուցիչ փուլի թեստերը վերլուծության չեն ենթարկվել, քանի որ 200-ից պակաս թվով մասնակիցների դեպքում ըստ որակական բնութագրիչների վերլուծության արդյունքները հավաստի չեն համարվում: Աղյուսակի մզեցված վանդակներում ներկայացված են հեշտ թեստերի բարդության գործակիցները և ընդունելի հուսալիություն ունեցող թեստերի հուսալիության գործակիցները:

Աղյուսակ 18. 2016 թ. պետական միասնական քննությունների թեստերի բարդությունը¹ և հուսալիությունը²

Քննական առարկաները	Թեստի համարը	Մասնակիցների թիվը	Քննությունը	Միջին միավորը	Բարդության գործակիցը	Հուսալիության գործակիցը	
Հայոց լեզու և հայ գրականություն	1	1520	միասն.	13.7	0.71	0.952	
			ավարտ.	14.5	0.69	0.923	
	2	1490	միասն.	14.2	0.73	0.953	
			ավարտ.	15.3	0.73	0.925	
	3	1517	միասն.	13.7	0.71	0.950	
			ավարտ.	14.5	0.70	0.918	
	4	1496	միասն.	14.0	0.72	0.952	
			ավարտ.	15.2	0.72	0.922	
	5-8	197	միասն.	9.6	0.55	0.936	
			ավարտ.	11.5	0.55	0.901	
Հայոց պատմություն	1	343	միասն.	13.6	0.69	0.956	
			ավարտ.	15.5	0.73	0.925	
	2	340	միասն.	13.6	0.69	0.959	
			ավարտ.	15.5	0.73	0.930	
	3	338	միասն.	12.8	0.66	0.958	
			ավարտ.	14.9	0.70	0.929	
	4	341	միասն.	13.5	0.69	0.962	
			ավարտ.	15.4	0.72	0.934	
	5-8	140	միասն.	12.2	0.63	0.961	
			ավարտ.	14.1	0.72	0.943	
Հառաջխարհային պատմություն	1	33	միասն.	13.8	0.69	0.965	
			ավարտ.	14.8	0.69	0.947	
	2	33	միասն.	14.3	0.71	0.969	
			ավարտ.	15.2	0.72	0.956	
	3	33	միասն.	15.0	0.75	0.962	
			ավարտ.	15.9	0.75	0.937	
	4	29	միասն.	14.8	0.74	0.969	
			ավարտ.	15.4	0.73	0.955	
	Կենսաբանություն	1	328	միասն.	13.4	0.69	0.973
				ավարտ.	16.0	0.78	0.949
2		316	միասն.	13.5	0.69	0.974	
			ավարտ.	15.9	0.77	0.950	
3		329	միասն.	13.0	0.67	0.972	
			ավարտ.	15.6	0.76	0.946	
4		317	միասն.	13.3	0.68	0.972	
			ավարտ.	15.8	0.76	0.945	
5-8		156	միասն.	9.6	0.55	0.954	
			ավարտ.	12.9	0.64	0.925	
Աշխարհագրություն	1	88	միասն.	14.2	0.72	0.947	
			ավարտ.	15.8	0.76	0.897	
	2	85	միասն.	13.8	0.71	0.959	
			ավարտ.	15.1	0.73	0.920	
	3	82	միասն.	12.9	0.66	0.948	
			ավարտ.	14.6	0.69	0.913	
	4	82	միասն.	13.8	0.70	0.949	
			ավարտ.	15.0	0.72	0.905	
	Ռուսաց լեզու	1	152	միասն.	10.4	0.52	0.947
				ավարտ.	13.2	0.60	0.916
2		150	միասն.	10.2	0.51	0.953	
			ավարտ.	12.4	0.82	0.928	
3		145	միասն.	10.0	0.50	0.957	
			ավարտ.	12.8	0.57	0.933	
4		144	միասն.	9.8	0.49	0.952	
			ավարտ.	12.1	0.78	0.923	
5-8		50	միասն.	6.8	0.34	0.907	
			ավարտ.	9.6	0.39	0.874	

Մաթեմատիկա	1	1273	միասն.	11.5	0.63	0.949	Անգլերեն	1	1151	միասն.	14.1	0.72	0.964
			ավարտ.	15.1	0.79	0.920				ավարտ.	15.6	0.76	0.939
	2	1262	միասն.	12.0	0.65	0.950		2	1153	միասն.	14.3	0.74	0.969
			ավարտ.	15.4	0.81	0.923				ավարտ.	15.5	0.77	0.947
	3	1247	միասն.	11.7	0.63	0.950		3	1140	միասն.	14.0	0.74	0.966
		ավարտ.	15.3	0.80	0.922			ավարտ.	15.5	0.79	0.944		
	4	1245	միասն.	11.8	0.64	0.952	4	1137	միասն.	14.3	0.77	0.968	
		ավարտ.	15.4	0.81	0.925			ավարտ.	15.5	0.81	0.947		
	5-8	366	միասն.	10.0	0.62	0.946	5-8	247	միասն.	11.8	0.59	0.964	
		ավարտ.	13.7	0.70	0.927			ավարտ.	13.4	0.61	0.943		
Ֆիզիկա	1	453	միասն.	11.5	0.59	0.952	Ֆրանսերեն	1	47	միասն.	16.8	0.84	0.936
			ավարտ.	13.9	0.71	0.895				ավարտ.	17.4	0.84	0.886
	2	438	միասն.	12.2	0.62	0.943		2	41	միասն.	15.8	0.79	0.963
			ավարտ.	14.8	0.77	0.905				ավարտ.	17.1	0.82	0.936
	3	439	միասն.	11.4	0.59	0.950		3	38	միասն.	15.7	0.78	0.972
		ավարտ.	13.8	0.71	0.893			ավարտ.	16.6	0.80	0.941		
	4	440	միասն.	12.1	0.59	0.950	4	39	միասն.	15.6	0.78	0.969	
		ավարտ.	14.8	0.77	0.901			ավարտ.	16.8	0.81	0.955		
	5-8	168	միասն.	7.6	0.44	0.954	Գերմաներեն	1	50	միասն.	15.7	0.78	0.953
		ավարտ.	11.4	0.55	0.933				ավարտ.	16.8	0.81	0.922	
Քիմիա	1	270	միասն.	13.3	0.65	0.958		2	44	միասն.	14.3	0.72	0.975
			ավարտ.	15.8	0.83	0.916				ավարտ.	15.7	0.74	0.959
	2	262	միասն.	13.0	0.64	0.956		3	48	միասն.	16.4	0.82	0.968
			ավարտ.	15.9	0.84	0.905			ավարտ.	17.3	0.84	0.951	
	3	265	միասն.	13.2	0.65	0.961	4	45	միասն.	14.9	0.75	0.973	
		ավարտ.	15.8	0.83	0.911			ավարտ.	16.5	0.81	0.955		
	4	264	միասն.	13.6	0.67	0.957							
		ավարտ.	16.3	0.86	0.911								
	5-8	122	միասն.	9.6	0.55	0.943							
		ավարտ.	13.5	0.68	0.905								

Աղյուսակ 18-ից երևում է, որ միասնական քննությունների թեստերի մեծ մասն ունի միջին բարդություն և մեծ հուսալիություն: Ամենափոքր բարդության գործակից (միասնական՝ 0.34, ավարտական՝ 0.39) ունեցել են ռուսաց լեզվի լրացուցիչ փուլի թեստերը: Ամենամեծ բարդության գործակից (0.86) ունեցել է քիմիայի քննության 4-րդ թեստի ավարտական մասը:

Միասնական քննությունների գրեթե բոլոր թեստերի հուսալիությունը մեծ է: Միայն ֆիզիկայի 1-ին և 3-րդ, աշխարհագրության և ֆրանսերենի 1-ին, ինչպես նաև ռուսաց լեզվի լրացուցիչ փուլի 5-8-րդ թեստերի ավարտական մասն ունեն ընդունելի հուսալիություն (0.874-0.897):

1 Բարդություն: Թեստը համարվում է շատ հեշտ, երբ բարդության գործակիցը (P) գտնվում է 0.9-1.0 սահմաններում: $0.75 \leq P \leq 0.89$ սահմաններում թեստը հեշտ է, $0.30 \leq P \leq 0.74$ սահմաններում՝ միջին բարդության, $0.20 \leq P \leq 0.29$ սահմաններում՝ բարդ, $P \leq 0.19$ դեպքում՝ շատ բարդ:

2 Հուսալիություն: Հուսալիության գործակիցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

5. Բուհերի ընդունելության մրցույթը

5.1. Ընդունելության մրցույթի կազմակերպումը

2016 թ. բուհերի ընդունելության մրցույթն անցկացվել է ԳԹԿ-ում՝ համակարգչային ծրագրերի միջոցով: Մրցույթին չեն մասնակցել զուտ ներքուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերի դիմորդները: Բացառություն են կազմում միայն ներքուհական քննություններ պահանջող մասնագիտություններով ՀԱՊՀ-ում և ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղում, ՀՊՄՀ-ում, ՃՇՀԱՀ-ում, Գյումրու մանկավարժական ինստիտուտում, Վանաձորի պետական համալսարանում և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հայտագրված դիմորդները:

Մրցույթը կազմակերպվել է երկու փուլով: Բուհերում հայտագրված 11325 դիմորդներից 11259-ը դիմել են ՀՀ պետական, 66-ը՝ ոչ պետական բուհեր: Հայտագրվածներից 337 դիմորդ իր հայտում նշած որևէ քննության չի ներկայացել, 1689 դիմորդ որևէ քննությունից չի հաղթահարել դրական միավորի շեմը, 178-ը բուհի դիմում-հայտում նշած մասնագիտությունների համար անցողիկ միավորներից պակաս միավոր ունենալու պատճառով մրցույթից դուրս է մնացել: 113 դիմորդ ատեստատ չներկայացնելու պատճառով չի մասնակցել մրցույթին:

Մրցույթի առաջին փուլին, որն ամփոփվել է հուլիսի 15-ին, համաձայն իրենց դիմում-հայտերում նշած մասնագիտությունների, մասնակցել են դրական միավորներ հավաքած բոլոր դիմորդները (11007 դիմորդ): Մրցույթի երկրորդ փուլն ամփոփվել է հուլիսի 25-ին: Այս փուլին մասնակցելու համար հայտագրվել է 318 դիմորդ:

2016 թ. բուհերում հայտագրված 11325 դիմորդների 85.1%-ը (9635 դիմորդ) ընդունվել է, 1.6%-ը (178 դիմորդ) մրցույթից դուրս է մնացել: Բուհեր ընդունված 9635 դիմորդներից 1307-ը (13.5%) ընդունվել են անվճար, 8120-ը (84.3%)՝ վճարովի հիմունքներով, 93-ը (1.0%)՝ արտոնություններով և 115-ը (1.2%)՝ Պաշտպանության նախարարության կողմից հատկացված տեղերով: Ընդունված դիմորդներից 1203-ը անապահով ընտանիքներից են: Բանակից զորացրվածների համար նախատեսված տեղերով ընդունվել է 40 դիմորդ: Անվճար հիմունքներով բոլոր ընդունվածներն ընդունվել են մրցույթի առաջին փուլում: Վճարովի հիմունքներով ընդունվածներից 7803-ը (96.1%) ընդունվել են առաջին, 317-ը (3.9%)՝ երկրորդ փուլում: Բուհ ընդունվածներից 9607-ն ընդունվել են պետական բուհեր, 28-ը՝ ոչ պետական:

Մրցույթին մասնակցելով միայն հանրակրթական ուսումնական հաստատության ավարտական կամ տարեկան գնահատականներով՝

վճարովի հիմունքներով Հայաստանի ազգային ագրարային համալսարան է ընդունվել է 680 դիմորդ:

Աղյուսակ 19-ում ներկայացված են բուհ ընդունվածների տոկոսները՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և ՀՀ-ում միասնական քննություններին մասնակցած դիմորդներ ունեցած երկրների: Ընդունվածների 99.48%-ը ներկայացնում է Հայաստանը: Ընդունված երևանցի դիմորդները կազմում են բոլոր դիմորդների 36.22%-ը:

Աղյուսակ 19. Բուհ ընդունվածների թիվը և տոկոսը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուհերում այլ երկրներից հայտագրվածների

		ՀՀ											ԼՂՀ	Վրաստան
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ		
Բուհ ընդունվածների	թիվը	3490	498	691	657	595	740	844	810	592	193	475	30	20
	տոկոսը	36.22	5.17	7.17	6.82	6.18	7.68	8.76	8.41	6.14	2.00	4.93	0.31	0.21

Աղյուսակ 20. 2016 թ. բուհերի ընդունելության մրցույթի 2-րդ փուլով ընդունվածների թիվը

Բուհը		Ընդունվածների թիվը	Բուհը	Ընդունվածների թիվը
Երևանի պետական համալսարան		81	Երևանի պետական լեզվա-հասարակագիտական համալսարան	1
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան	Երևանի կրթահամալիր	9	Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտ	1
	Գյումրու մասնաճյուղ	2	Վանաձորի պետական համալսարան	6
	Վանաձորի մասնաճյուղ	1	Գավառի պետական համալսարան	1
Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան		7	Հայաստանի ազգային ագրարային համալսարան	170
Հայկական պետական մանկավարժական համալսարան		28	Հայկական բժշկական ինստիտուտ	10
Ընդամենը				317

Աղյուսակ 20-ից հետևում է, որ 2016 թ. բուհերի ընդունելության մրցույթի երկրորդ փուլով ընդունված դիմորդների թվի կեսից ավելին ընդունվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարան: Դրան նպաստել է ավարտական կամ տարեկան գնահատականներով ՀԱԱՀ ընդունվելու հնարավորությունը:

5.2 Ամենաշատ և ամենաքիչ պահանջարկ ունեցող մասնագիտությունները

Աղյուսակ 21-ում ներկայացված են ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ամենաշատ և ամենաքիչ պահանջարկ ունեցող մասնագիտությունները: Երևանում գործող բուհերի տվյալներում ընդգրկված չեն մարզերում գործող մասնաճյուղերի տվյալները:

Աղյուսակ 21. 2016 թ. ամենաշատ պահանջված մասնագիտությունները ըստ բուհերի

Բուհը	Մասնագիտության ծածկագիրը	Մասնագիտությունը	Դիմումների թիվը 1-ին հայտով	Տեղերի թիվը	Մեկ տեղի համար դիմած դիմորդների թիվը
Անվճար ուսուցում					
ԵՊՀ	32	Կառավարում (ըստ ոլորտի)	105	2	53
	30	Հանրային կառավարում	140	3	47
	45	Միջնաշակութային հաղորդակցություն, անզլերեն	129	3	43
	31	Տնտեսագիտություն	116	3	39
	33	Ֆինանսներ (ըստ ոլորտի)	64	2	32
	44	Թարգմանչական գործ՝ անզլերեն և հայերեն լեզուներ	95	3	32
ՀՊՄՀ	165	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	63	2	32
ԵՊԱՀ	188	Միջնաշակութային հաղորդակցություն, անզլերեն լեզու	147	5	29
ՀՊՏՀ	135	Շուկայագիտություն (մարքեթինգ, ըստ ոլորտի)	171	6	29
ԵՊՀ	37	Սոցիալական աշխատանք	83	3	28


Վճարովի ուսուցում ԱՏ					
Բուհը	Մասնագիտության ծածկովը	Մասնագիտությունը	Վճարովի բուհը սերմավորող համալսարանի կողմից	Տեղերի թիվը	Մեկ տեղի համար դիմում գրությունների թիվը
ԵՊԼՀ	201	Թարգմանչական գործ իսպաներեն և հայերեն լեզուներ	228	5	46
	199	Թարգմանչական գործ իտալերեն և հայերեն լեզուներ	162	5	32
ՀՊՏՀ	136	Վիճակագրություն	938	38	25
ՀԱՊՀ (Երևանի կրթահամալիր)	89	Մեքենաշինություն և նյութերի մշակում	246	10	25
	86	Մետալուրգիա	210	9	23
	95	Ռադիոտեխնիկա	514	24	21
	87	Մեքենագիտություն	192	9	21
ՀՊՄՀ	167	Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա	416	20	21
ԵՊՀ	2	Մեխանիկա	294	15	20
ՀԱՊՀ (Երևանի կրթ.)	90	Տեխնոլոգիական մեքենաներ և սարքավորումներ	183	10	18

Աղյուսակ 21-ի տվյալներից հետևում է, որ մասնագիտություններից անվճար ուսուցման հիմունքներով ամենամեծ պահանջարկ ունի Երևանի պետական համալսարանի «կառավարում (ըստ ոլորտի)» մասնագիտությունը (1 տեղի համար դիմել է 53 դիմորդ), իսկ վճարովի հիմունքներով՝ Երևանի պետական լեզվաբանական համալսարանի «Թարգմանչական գործ իսպաներեն և հայերեն լեզուներ» մասնագիտությունը (1 տեղի համար դիմել է 46 դիմորդ):

2016 թ. դիմորդներն ամենաքիչը ընտրել են «Ռուսաց լեզու և գրականություն», «Շինարարություն», «Քաղաքային տնտեսություն», «Էլեկտրոնիկա», «Երկրաբանություն» և «Եկեղեցաբանություն» մասնագիտությունները:

Դիագրամ 11-ում ներկայացրած է 2014-2016 թթ. մի քանի պահանջված մասնագիտությունների անցողիկ միավորների դինամիկան՝ ըստ բուհերի: Անցողիկ միավորների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները տեղադրված են Գնահատման և թեստավորման կենտրոնի atc.am կայքում:

Դիագրամ 11. Բարձր պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների անցողիկ միավորները 2014-2016 թթ.



Դիագրամից երևում է, որ նշված մասնագիտությունների անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները հիմնականում կուտակված են 53-60 միջակայքում: ԵՊԲՀ անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները 37-40 միջակայքում են, որովհետև նշված մասնագիտությունների համար նախատեսված է երկու մրցութային քննություն:

Ինչպես երևում է դիագրամից, անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները 2014-2016 թթ. ակնհայտ աճման կամ նվազման միտում չունեն: Առանձնանում են ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» մասնագիտության անցողիկ միավորը (նշված ժամանակահատվածում նվազել է 1.75 միավորով) և ԵՊԲՀ-ի «Բուժական գործինը»՝ (աճել է 0.5 միավորով):

Այլ պատկեր է վճարովի հիմունքներով ընդունելության անցողիկ միավորների դեպքում: ԵՊՀ-ի «Իրավագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Հանրային կառավարում», «Քաղաքագիտություն», «Տնտեսագիտություն», ՀՊՏՀ-ի «Շուկայագիտություն», «Վիճակագրություն», ԵՊԼՀ-ի «Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, գերմաներեն» մասնագիտությունների անցողիկ միավորները վերջին երեք տարիներին այս կամ այն չափով նվազել են: Այս տեսանկյունից աչքի են ընկնում ԵՊՀ-ի «Տնտեսագիտություն» և ՀՊՏՀ-ի «Վիճակագրություն» մասնագիտությունները, որոնց վճարովի հիմունքներով

ընդունելության անցողիկ միավորները 2014-2016 թթ. նվազել են, համապատասխանաբար, 13 և 10 միավորով:

Նշված ժամանակահատվածում բարձրացել են ԵՊՀ-ի «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» (7 միավորով), «Միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն» (2.25 միավորով) և ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» (3.5 միավորով) մասնագիտությունների անցողիկ միավորները:


Աղյուսակ 22-ում ներկայացված են Երևանում գործող պետական բուհեր և ՀՀ այլ բուհեր դիմած և ընդունված դիմորդների թվերը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և բուհերում այլ երկրներից հայտագրվածների: Դիմորդների թիվը ներկայացված է ըստ դիմում-հայտում նշված առաջին հայտի, ընդունվածներինը՝ նաև ըստ մյուս հայտերի:

Աղյուսակ 22. Երևանի պետական բուհեր և ՀՀ այլ բուհեր դիմած և ընդունված դիմորդների թիվը ըստ ՀՀ մարզերի և բուհերում այլ երկրներից հայտագրվածների

Բուհեր		ՀՀ										ԼՂՀ	Վրաստան	Ընդամենը	
		Երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Մոտավք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր				Տավուշ
ԵՊՀ	հայտագրվածների թիվը	1419	220	247	206	229	158	326	205	181	73	106	7	15	3392
	ընդունվածների թիվը	1215	191	216	186	199	137	300	181	167	64	91	6	9	2962
ՀՊՏՀ	հայտագրվածների թիվը	485	36	92	93	69	52	125	41	70	26	36	2	4	1131
	ընդունվածների թիվը	375	27	78	79	50	47	114	33	62	19	34		2	920
ԵՊԲՀ	հայտագրվածների թիվը	409	39	81	62	62	60	75	113	63	17	40	8	8	1037
	ընդունվածների թիվը	272	25	59	45	44	40	59	81	53	12	26	3	1	720
ՀՊՄՀ	հայտագրվածների թիվը	228	116	129	142	93	44	124	24	60	33	39	5	4	1041
	ընդունվածների թիվը	163	94	107	124	83	34	109	27	51	27	40	4	2	865
ՀԱՊՀ	հայտագրվածների թիվը	507	53	92	73	59	29	86	34	42	21	24	1	3	1024
	ընդունվածների թիվը	448	48	84	72	55	28	78	38	35	18	22	1	4	931
ՀԱԱՀ	հայտագրվածների թիվը	516	64	76	91	43	15	98	38	25	16	35	3	1	1019
	ընդունվածների թիվը	465	62	73	85	42	17	86	38	20	14	34	2	1	939
ԵՊԼՀ	հայտագրվածների թիվը	220	21	48	46	27	25	61	30	34	5	16	4		537
	ընդունվածների թիվը	207	18	44	41	27	26	63	28	32	3	17	4		510
ՃՇՀԱՀ	հայտագրվածների թիվը	320	27	27	19	36	12	37	9	25	15	14	1		542
	ընդունվածների թիվը	287	25	21	16	33	9	26	9	22	15	13	1		477
Այլ բուհեր	հայտագրվածների թիվը	78	12	6	11	78	497	8	438	195	38	227	12	2	1602
	ընդունվածների թիվը	58	8	9	9	62	402	9	375	150	21	198	9	1	1311
Ընդամենը	հայտագրվածների թիվը	4182	588	798	743	696	892	940	932	695	244	537	43	37	11325
	ընդունվածների թիվը	3490	498	691	657	595	740	844	810	592	193	475	30	20	9635

Դիագրամ 12-ի յուրաքանչյուր սյունը ցույց է տալիս, թե տվյալ մարզը կամ երկիրը ներկայացրած դիմորդների քանի տոկոսը առաջին հայտով որ բուհ է դիմել: Հայտագրված դիմորդների թիվը ներկայացված է ըստ դիմում-հայտում նշված առաջին հայտի, ընդունվածներինը (դիագրամ 13)՝ նաև ըստ մյուս հայտերի:

Դիագրամ 12. Հայտագրված դիմորդների տոկոսը



ԵՊՀ - Երևանի պետական համալսարան

ՀՊՏՀ - Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

ԵՊՔՀ - Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

ՀՊՄՀ - Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

ՀԱՊՀ - Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Երևանի կրթահամալիր)


ՀԱԱՀ - Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ԵՊԼՀ - Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

ՃՀՀԱՀ - Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան

Այլ բուհեր – պետական և ոչ պետական մնացած բոլոր բուհերը, ինչպես նաև պետական բուհերի մասնաճյուղերը

Դիագրամ 13. Ընդունվածների տոկոսը



Դիագրամներից երևում է, որ ՀՀ վարչատարածքային միավորներից և այլ երկրներից բուհեր ընդունվածների տոկոսը որոշ բուհերի դեպքում ավելի բարձր է, քան նույն բուհում հայտագրված դիմորդների տոկոսը: Դրա պատճառը, ինչպես նշվեց վերևում, այն է, որ բուհ դիմածների տոկոսը հաշվարկված է ըստ առաջին հայտի, մինչդեռ ընդունվածներն ընդունվել են նաև ըստ մյուս հայտերի:

Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում գործող որոշ բուհերի և խոշոր բուհերի մասնաճյուղերի առկայությամբ պայմանավորված՝ «այլ բուհեր» դիմած և ընդունված դիմորդների տոկոսը բավական բարձր է: Դրանով մասամբ բեռնաթափվում են մայրաքաղաքում գործող բուհերը և լուծվում են սովորողների որոշ սոցիալական խնդիրներ: Ստորև ներկայացվում են այդ բուհերը՝ հայտագրված դիմորդների և ընդունվածների թվերով:

Աղյուսակ 23. ՀՀ մարզերում գործող և 2016 թ. ընդունելության մրցույթում ընդգրկված պետական բուհեր և բուհերի մասնաճյուղեր ընդունվածների թիվը

Մարզը	Բուհի անվանումը	Հայտագրվածների թիվը	Ընդունվածների թիվը
Քեդաքրունիք	Գավառի պետական համալսարան	68	57
Լոռի	ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղ	89	61
	Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան	413	346
Շիրակ	ՀԱՊՀ Գյումրու մասնաճյուղ	96	73
	ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ	73	68
	Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ	276	238
Սյունիք	ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ	62	54
	Գորիսի պետական համալսարան	130	94
Վայոց ձոր	ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ	39	21
Տավուշ	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ	214	182
Ընդամենը		1460	1194

Աղյուսակ 23-ից երևում է, որ նշված բուհեր և բուհերի մասնաճյուղեր ընդունվել է 1194 դիմորդ: Դա կազմում է 2016 թ. ՀՀ բուհեր ընդունվածների ընդհանուր թվի 12.4%-ը:

Աղյուսակ 24-ում ներկայացված են ՀՀ մի քանի ոչ պետական բուհերում հայտագրված դիմորդների և ընդունվածների թվերը:

Աղյուսակ 24. ՀՀ ոչ պետական բուհեր ընդունվածների թիվը

Բուհի անվանումը	Հայտագրվածների թիվը	Ընդունվածների թիվը
Երևանի «Հայբուսակ» համալսարան	10	6
Եվրասիա միջազգային համալսարան	3	
Հայկական բժշկական ինստիտուտ	39	33
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա հիմնադրամ	10	10
Վարդենիսի մանկավարժական ինստիտուտ	2	
Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան համալսարան	1	
Հայկական բաց համալսարան	1	
Ընդամենը	66	49

Ամփոփում

2016 թ. միասնական քննությունների արդյունքների վերլուծություն-նից հետևում է, որ քննությունների մասնակիցների թիվը նախորդ տարիների համեմատությամբ նվազել է: Մակայն վերջին տարիներին դանդաղել է նվազման տեմպը: Նախորդ տարվա համեմատությամբ 2016 թ. հայտագրվածների թիվը (12063) պակասել է 455-ով (3.6%-ով):

Միասնական քննությունների հիմնական փուլում հայտագրվել է 11344, լրացուցիչ փուլում՝ 1053 դիմորդ, որոնց մի մասը հայտագրված է եղել նաև հիմնական փուլում: ՀՀ դիմորդներից 11672-ը և ԼՂՀ-ից 864-ը 2016 թ. շրջանավարտներ են:

Բուհերի ընդունելության մրցույթի առաջին փուլում հայտագրվել է 11007 դիմորդ, երկրորդ փուլում՝ 318-ը: Հայտագրված 11325 դիմորդներից 11259-ը դիմել է պետական բուհ, 66-ը՝ ոչ պետական:

Հայտագրվածներից 337-ը որևէ քննության չեն ներկայացել: 1689 դիմորդ որևէ քննությունից չի հաղթահարել դրական միավորի շեմը, 178 դիմորդ մասնակցել է մրցույթին, սակայն իր ընտրած մասնագիտությունների անցողիկ միավորներից պակաս միավոր ունենալու պատճառով չի ընդունվել, իսկ 113 դիմորդ մրցույթին չի մասնակցել դպրոցի ավարտական վկայականը չներկայացնելու պատճառով: Մրցույթին մասնակցելով միայն ավարտական կամ տարեկան գնահատականներով՝ վճարովի հիմունքներով ընդունվել է 680 դիմորդ:

Բուհ ընդունված 9635 դիմորդներից 1307-ն ընդունվել է անվճար հիմունքներով (մրցույթի 1-ին փուլում), 8120-ը՝ վճարովի (7805-ը՝ մրցույթի 1-ին փուլում, 315-ը՝ 2-րդ փուլում), 115-ը՝ ՊՆ կողմից հատկացված տեղերով և 93-ը՝ արտոնություններով: Ընդունվածներից 1203-ը անապահով ընտանիքներից են: 40 դիմորդ ընդունվել է բանակից զորացրվածների համար նախատեսված տեղերով: Բուհ ընդունվածներից 9585-ը (99.5%-ը) ՀՀ-ից են, ընդ որում, 3490-ը (36.2%-ը)՝ Երևանից:

Միասնական քննություններից բացակայությունները հիմնականում չեն գերազանցել մասնակիցների թվի 5%-ը: Հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 49 դիմորդ, 7 դիմորդ հեռացվել է քննությունից:

Մաթեմատիկայի, բնագիտական առարկաների, հայոց պատմության և ռուսաց լեզվի միասնական քննությունների մասնակիցների 10%-ից ավելին չի հաղթահարել դրական միավորի շեմը, իսկ մնացած քննություններից այդ ցուցանիշը չի գերազանցում 10%-ը:

Համեմատելով «2015 թ. պետական միասնական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծության» տվյալների հետ, կարելի

է նկատել, որ նախորդ տարվա համեմատությամբ 2016 թ. աճել է հայոց լեզվի և հայ գրականության (0.6%-ով), ռուսաց լեզվի (0.8%-ով) և աշխարհագրության (1.3%-ով) միասնական քննություններից «անբավարար» գնահատական ստացած դիմորդների թիվը: Մնացած քննությունների դեպքում այն հիմնականում նվազել է 0.4-4.5%-ով: Իսպաներենի և իտալերենի քննություններից 2016 թ. «անբավարար» գնահատական ստացած դիմորդ չկա:

2016 թ. միասնական քննությունների միջին միավորները տատանվել են 9.8-ից (ռուսաց լեզու) մինչև 16.2 (իսպաներեն), իսկ 2015-ին՝ 10.0-ից (ռուսաց լեզու) մինչև 18.8 (իտալերեն) սահմաններում:

Միասնական քննությունների արդյունքների բողոքարկման 221 դիմումներից դրական լուծում է ստացել 49-ը (22.2%-ը): Նախորդ տարի 197-ից 38-ն է դրական լուծում ստացել (19.3%-ը):

2015 և 2016 թթ. միասնական քննությունների արդյունքների վերլուծությունների «Թեստերի բարդությունը և հուսալիությունը» աղյուսակների համեմատությունից երևում է, որ նախորդ տարվա համեմատությամբ 2016 թ. ավելի հեշտ հաղթահարելի են եղել համաշխարհային պատմության, մաթեմատիկայի, ֆիզիկայի, կենսաբանության և օտար լեզուների հիմնական փուլի, ինչպես նաև հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի, բնագիտական առարկաների և օտար լեզվի քննությունների լրացուցիչ փուլի թեստերը: Ավելի դժվար հաղթահարելի են եղել ռուսաց լեզվի քննության լրացուցիչ փուլի թեստերը:

Միասնական քննությունների ընդհանուր միջին միավորների համեմատությունից (ըստ տարիների) երևում է, որ նախորդ տարվա համեմատությամբ չեն բարձրացել միայն հայոց լեզվի և հայ գրականության, մաթեմատիկայի, աշխարհագրության, անգլերենի և ռուսաց լեզվի քննությունների միջին միավորները:

Կենտրոնացված քննությունների միջին միավորները տատանվել են 9.9-ից (հայոց լեզու) մինչև 17.3 (իսպաներեն) սահմաններում: 2015 թ. միջին միավորները 10.8-ից (հայոց լեզու) մինչև 15.5 (գերմաներեն) էին, իսկ իտալերենի բանավոր քննություն հանձնած միակ դիմորդը 20 միավոր էր հավաքել:

ՀՀ վարչատարածքային միավորներից բարձր միջին միավորներով առաջատարը Կոտայքի մարզն է: Պատրաստվածության բարձրացման ուղղությամբ աշխատանք կատարելու կարիք կա հատկապես Տավուշի և Վայոց ձորի մարզերում:

Ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի կատարած ուսումնասիրությունից հետևում է, որ բարձր միջին միավորներով առաջատար են միջին և փոքր քաղաքները, իսկ գյուղական բնակավայրերն աչքի են ընկել

ֆիզիկայի, ռուսաց լեզվի (սահմանամերձ և հեռավոր գյուղեր), գերմաներենի (բարձր լեռնային գյուղեր) և համաշխարհային պատմության բարձր միջին միավորներով: Բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոս արձանագրած սահմանամերձ և հեռավոր գյուղերի դպրոցներից ընդունվածների մեծ թվով աչքի են ընկնում Սյունիքի մարզի Ագարակի և Տավուշի մարզի Բերդավանի միջնակարգ դպրոցները, իսկ բարձր լեռնային գյուղերից՝ Գեղարքունիքի մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոցը:

Սահմանամերձ, հեռավոր և բարձր լեռնային գյուղերից միասնական քննություններին մասնակցած դիմորդների հավաքած միջին միավորների վերլուծությունից երևում է, որ 18-ից բարձր միջին միավորներ ունեն Գեղարքունիքի մարզի Ծովագյուղի (հայոց լեզվից և հայ գրականությունից ու գերմաներենից), Սյունիքի մարզի Ագարակի և Սառնակունքի (համապատասխանաբար գերմաներենից և անգլերենից), Տավուշի մարզի Կողբի թիվ 1 (համաշխարհային պատմությունից) միջնակարգ դպրոցների շրջանավարտները:

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի կատարված վերլուծությունից երևում է, որ 2016 թ. միասնական քննություններից բարձր միջին միավորներ են հավաքել առավելապես կրթահամալիրների, ավագ դպրոցների և ոչ պետական վարժարանների շրջանավարտները: Կրթության որակի բարձրացման ուղղությամբ աշխատանք կատարելու անհրաժեշտություն կա հատկապես միջնակարգ դպրոցներում և պետական վարժարաններում: Նկատենք, որ ավագ դպրոցները և կրթահամալիրները հիմնականում տեղաբաշխված են քաղաքներում, միջնակարգ դպրոցները՝ գյուղերում:

2016 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովածների լավագույն տասնյակում տեղ են գտել 71-84% արձանագրածները (2-ական դպրոց Երևանից, Շիրակի և Լոռու մարզերից և մեկական՝ Տավուշի և Սյունիքի մարզերից): Այդ տասնյակում առաջատարը ԵՊՀ առընթեր Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական հատուկ դպրոցն է:

Պետական բուհերում անվճար մեկ տեղի համար 1-ին հայտով դիմած դիմորդների թվով առաջատար է ԵՊՀ-ն՝ «Կառավարում» մասնագիտությամբ (մեկ տեղի համար դիմել է 53 դիմորդ): Վճարովի մասնագիտությունների մեկ տեղի համար վճարովի բոլոր հայտերով դիմած դիմորդների թվով առաջատար բուհը ԵՊՀ-ն է՝ «Թարգմանչական գործ՝ իսպաներեն և հայերեն լեզուներ» մասնագիտությամբ (բոլոր վճարովի հայտերում միասին հաշված՝ մեկ տեղի համար դիմել է 46 դիմորդ):

Մեծ պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների 2014-2016 թթ. անցողիկ միավորների ուսումնասիրությունից երևում է, որ անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները հիմնականում ակնհայտ աճման կամ նվազման միտում չունեն: Վճարովի հիմունքներով ընդունելության անցողիկ միավորների դեպքում առավելապես դիտարկվել է այս կամ այն չափով նվազում: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ ԵՊՀ-ի «Տնտեսագիտություն» և ՀՊՏՀ-ի «Վիճակագրություն» մասնագիտությունների անցողիկ միավորները 2014-2016 թթ. նվազել են համապատասխանաբար, 13 և 10 միավորով:

Նշված ժամանակահատվածում բարձրացել են ԵՊՀ-ի «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» (7 միավորով), «Միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն» (2.25 միավորով) և ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» (3.5 միավորով) մասնագիտությունների վճարովի հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները:

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ հետազոտությունների և վերլուծությունների բաժնի
գլխավոր մասնագետ

**2015-2016 ուստարում ՀՀ հանրակրթական ուսումնական
հաստատությունների
11-րդ դասարաններում <<Հայոց լեզու>> և
<<Հանրահաշիվ>> առարկաները դասավանդող
ուսուցիչների հարցման արդյունքների վերլուծություն**

Ընդհանուր ակնարկ

2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում հայոց լեզվից և հանրահաշիվից անցկացված արտաքին գնահատմանը զուգընթաց այդ դասարաններում նշված առարկաները դասավանդող ուսուցիչների շրջանում անցկացվել է հարցում, որին մասնակցել է արտաքին գնահատման ցանկում ընդգրկված հանրակրթական ուսումնական 66 հաստատություններից 57-ում հայոց լեզու դասավանդող 220 և 53 հաստատություններում հանրահաշիվ դասավանդող 180 ուսուցիչ (ընդհանուր թվով՝ 400):

Հարցման նպատակը եղել է հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաները դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության ուսումնասիրությունը, հարցված ուսուցիչների կարևորած մի քանի գործոնների (իբր աշխատանքից ուսուցչի բավարարված լինելը, ուսուցիչների կողմից աշակերտներից ակնկալված գիտելիքների մակարդակը, առարկայի դասավանդման համար հատկացված շաբաթական ժամաքանակը, դասարանների խտությունը) և ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա դրանց ազդեցության վեր-հանումը:

Ուսուցչի հարցաթերթիկը կազմված է եղել 10 հարցից, որոնք ներկայացված են ստորև:

1. Ձեր մարզը, դպրոցը:
2. Ձեր դասավանդած առարկան:
3. Ստորև տրված աղյուսակում գրել 11-րդ դասարանում Ձեր դասավանդած՝
 - ա) դասարանը,
 - բ) հոսքը,
 - գ) աշակերտների թիվը:
4. Ձեր սեռը:
5. Մանկավարժական ստաժը:
6. Շարքաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում Ձեր դասավանդած առարկայի ուսուցմանը: (Տարբեր հոսքերում դասավանդելու պարագայում նշել յուրաքանչյուր հոսքի դասաժամերի քանակը):
7. Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը:

Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝

- բավականին բարելավվել է,
- քիչ է բարելավվել,
- չի փոխվել,
- նվազել է:

8. Լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ քանի՞ դասաժամի անհրաժեշտություն եք զգում:
9. Որքանո՞վ եք համամիտ ստորև նշված մտքերի հետ:
 1. Աշխատավարձը բավարար է:
 2. Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ:
 3. Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են:
 4. Դպրոցը բավարարում է սովորողների և նրանց ծնողների կրթական պահանջները:

Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝

- միանգամայն համամիտ եմ,
- գրեթե համամիտ եմ,
- շատ քիչ եմ համամիտ,
- բոլորովին համամիտ չեմ:

10. Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրել են Ձեր ակնկալիքները:

Այս հարցի հնարավոր պատասխաններն են՝

- Հիմնականում արդարացրել են:
- Մասամբ են արդարացրել:
- Չեն կարողացել արդարացնել:
- Դժվարանում եմ պատասխանել:

Հարցման արդյունքները ենթարկվել են ընդհանուր վիճակագրական և գործոնային վերլուծության: Հարցման և արտաքին գնահատման արդյունքների հիման վրա կատարվել է հարցվածների դասավանդած 11-րդ դասարաններում սովորողների առաջադիմության կանխատեսում:

Հարցաթերթիկի մանրամասն վերլուծությունը գետեղված է Գնահատման և թեստավորման կենտրոնի **atc.am** կայքի «Վերլուծություններ» բաժնում:

Սույն հոդվածում ներկայացվել են հարցման մասնակից ուսուցիչների կարևորած և նրանց աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնները:

Ընդհանուր վիճակագրական վերլուծություն

Հարցման 400 մասնակիցներից 220-ը հայոց լեզվի ուսուցիչներ են, 180-ը՝ հանրահաշվի: Հայոց լեզվի ուսուցիչների 98.2%-ը և հանրահաշվի ուսուցիչների 87.2%-ը կազմել են կանայք: Հայոց լեզվի 220 ուսուցիչների դասավանդած 11-րդ դասարաններում, որոնցում ուսուցիչների հարցմանը զուգընթաց հայոց լեզվից անցկացվել է արտաքին գնահատում, սովորողների ընդհանուր թիվը կազմել է 3239 աշակերտ: Հանրահաշվի 180 ուսուցիչների դասավանդած և հանրահաշվի արտաքին գնահատմանը մասնակցած 11-րդ դասարանցիների թիվը կազմել է 3062 աշակերտ:

Հարցվածների 24.25%-ը դասավանդում է մայրաքաղաքի, 75.75%-ը՝ մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում:

Խոշոր քաղաքների հանրակրթական հաստատություններում դասավանդում է հարցված ուսուցիչների 41%-ը, միջին մեծության քաղաքների ուսումնական հաստատություններում 31%-ը, փոքր քաղաքներում՝ 22.25%-ը, գյուղերում՝ 4.25%-ը, բարձր լեռնային գյուղերում՝ 1.5%-ը: Նրանց 64.9%-ը դասավանդում է 37 ավագ դպրոցների, 22.8%-ը՝ 13 վարժարանների, 12.3%-ը՝ ոչ պետական 7 ուսումնական

հաստատությունների բնագիտական, հումանիտար, ընդհանուր, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում: Ավագ դպրոցներից հարցմանը մասնակցել է հարցվածների 72.3%-ը, վարժարաններից՝ 23.3%-ը, ոչ պետական ուսումնական հաստատություններից՝ 4.4%-ը: Բնագիտական հոսքում դասավանդող ուսուցիչները կազմում են հարցվածների 22.8%-ը, հումանիտարում՝ 39.5%-ը, ընդհանուրում՝ 8.5%-ը, տնտեսագիտականում՝ 20.3%-ը, ֆիզիկամաթեմատիկականում՝ 7.9%-ը:

Հայոց լեզվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորը եղել է 6.6, ներքին գնահատման միջինը՝ 6.8, հանրահաշվինը, համապատասխանաբար՝ 4.1 և 6.5:

Վերլուծություն ըստ հարցված ուսուցիչների կարևորած և նրանց աշխատանքի արդյունավետության վրա ազդող գործոնների

Գործոնների վերլուծության էությունը: Գործոնների վերլուծությամբ վեր են հանվում դիտարկվող փոփոխականների միջև առկա գծային վիճակագրական կորելյացիաների համար պատասխանատու «ծպտյալ» փոփոխականները:

Գործոնների վերլուծությունը բազմաչափ է: Դրա միջոցով դիտարկումների հետ կապված առկա մեծաթիվ փոփոխականները բերվում են ավելի փոքրաթիվ անկախ փոփոխականների, որոնք կոչվում են **գործոններ**: Ընդ որում, յուրաքանչյուր գործոն միավորում է միմյանց հետ խիստ փոխկապակցված փոփոխականները: Տարբեր գործոններում միավորված փոփոխականները միմյանց հետ թույլ փոխկապակցվածություն են ունենում:

Այսպիսով, գործոնների վերլուծության նպատակն է այնպիսի համակարգված գործոնների վերհանումը, որոնք առավել լիարժեքորեն կբացատրեն առկա փոփոխականների միջև դիտարկվող կապերը:

Հարցման մասնակիցների կարևորած գործոնները:

Ուսուցիչների հարցման արդյունքները ենթարկվել են գործոնային վերլուծության, որի հիման վրա ի հայտ են եկել 4 գործոններ, որոնք հիմնականում անմիջական դիտարկմամբ չեն երևում, սակայն այս կամ այն չափով կարևորվում են հարցված ուսուցիչների կողմից և ազդում են ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա:

① **Առաջին գործոնի** հետ սերտորեն կապված են 5-րդ հարցը («Մանկավարժական ստաժը») և 9-րդ հարցի 1-ին («Աշխատավարձը բավարար է»), 3-րդ («Սովորողների և ծնողների հետ հարաբերությունները լավ են») և 4-րդ («Դպրոցը բավարարում է սովորողների և նրանց

ծնողների կրթական պահանջները») ենթահարցերը, որոնք թերևս բնութագրում են իր **աշխատանքից ուսուցչի բավարարված լինելը**:

② **Երկրորդ գործոնի** հետ կապված են 7-րդ («Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը») և 10-րդ հարցերը («Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները»), 9-րդ հարցի 2-րդ ենթահարցը («Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ»), որոնք կարող են բնութագրել աշակերտներից ուսուցչի ակնկալված գիտելիքների ընդհանուր մակարդակը: Այս գործոնը համառոտ անվանենք **«ակնկալիքներ»**:

③ **Երրորդ գործոնի հետ** սերտորեն կապված են 3-րդ հարցի 2-րդ ենթահարցը («Հոսքը»), 6-րդ («Տրամադրված շաբաթական դասաժամերի թիվը») և 8-րդ («Ակնկալվող լրացուցիչ դասաժամերի թիվը») հարցերը, որոնք բնութագրում են ըստ հոսքերի տրամադրված շաբաթական ժամաքանակի կարևորությունը: Երրորդ գործոնը համառոտ անվանենք **«ժամաքանակ»**:

④ **Չորրորդ գործոնը** ներկայացված է 2-րդ հարցով («Ձեր դասավանդած առարկան») և 3-րդ հարցի 3-րդ ենթահարցով («Աշակերտների թիվը»), որոնք միասին կարող են բնութագրել առարկայի դասավանդման արդյունավետության կախվածությունը դասարանում սովորող աշակերտների թվից: Չորրորդ գործոնն անվանենք **«դասարանների խտություն»**:

Վերջին գործոնի հետ կապված՝ հիշենք, որ դասարանում սովորող աշակերտների թիվը 20-ից ավելին լինելու դեպքում հայոց լեզվի դասաժամին դասարանը բաժանվում է 2 խմբի:

Այսպիսով, վերը նշված 4 գործոններն են՝

- 1) **աշխատանքից բավարարված լինելը**,
- 2) **ակնկալիքները**,
- 3) **ժամաքանակը**,
- 4) **դասարանների խտությունը**:

Վերլուծությունը հնարավորություն է տալիս դատողություններ անելու հարցված ուսուցիչների աշխատանքի արդյունավետության վրա այս կամ այն չափով ազդող և նրանց կարևորած այս գործոնների կարևորության աստիճանի մասին, որը դասակարգվել է հետևյալ կերպ՝

- կարևորություն չի տրվում,
- թույլ կարևորվածություն,
- միջին կարևորվածություն,
- խիստ կարևորվածություն:

Այդուսակ 1-ում ըստ կարևորվածության աստիճանի ներկայացված են հարցված ուսուցիչների կարևորած գործոնները: Ընդհանուր միջին միավորին հավասար կամ գերազանցող միջին միավորների վաղակները գունավորած են:


Այդուսակ 1. Հարցված ուսուցիչների կողմից կարևորվող հիմնական գործոնները ըստ կարևորության աստիճանի

Գործոնը	Գործոնի կարևորվածության աստիճանը	Հայոց լեզու				Հանրահաշիվ			
		Ուսուցիչների սոկոսը	Աշակերտներ			Ուսուցիչների սոկոսը	Աշակերտներ		
			սոկոսը	միջին միավորը	ստանդարտ շեղումը		սոկոսը	միջին միավորը	ստանդարտ շեղումը
1 Աշխատանքից բավարարված լինելը	Կարևորության չի տրվում	24.1	25.3	6.5	2.047	26.1	25.9	3.9	1.717
	Թույլ կարևորվածություն	23.6	30.3	6.7	1.891	21.1	18.2	4.4	1.889
	Միջին կարևորվածություն	25.9	21.9	6.5	2.020	29.5	30.6	4.3	1.974
	Խիստ կարևորվածություն	26.4	22.5	6.5	1.880	23.3	25.3	4.1	1.994
	Ընդամենը	100	100	6.6	1.960	100	100	4.1	1.909
2 Ակնկալիքները	Կարևորության չի տրվում	30.9	30.7	6.6	1.952	17.8	13.6	4.9	2.175
	Թույլ կարևորվածություն	26.4	25.3	6.8	1.932	23.3	23.1	4.1	1.906
	Միջին կարևորվածություն	23.6	22.3	6.5	1.965	26.7	28.2	4.2	1.810
	Խիստ կարևորվածություն	19.1	21.7	6.3	1.961	32.2	35.1	3.9	1.800
	Ընդամենը	100	100	6.6	1.960	100	100	4.1	1.909
3 Ժամաքանակը	Կարևորության չի տրվում	19.1	18.6	6.4	2.005	32.2	31.7	3.3	1.508
	Թույլ կարևորվածություն	28.2	30.1	6.8	1.881	21.1	22.1	4.0	1.801
	Միջին կարևորվածություն	26.8	24.4	6.2	1.910	22.8	19.3	4.3	1.955
	Խիստ կարևորվածություն	25.9	26.9	6.9	1.986	23.9	26.9	5.2	1.852
	Ընդամենը	100	100	6.6	1.960	100	100	4.1	1.909
4 Դասարանների խտությունը	Կարևորության չի տրվում	45.0	54.5	6.4	1.977	0.6	1.6	2.7	1.062
	Թույլ կարևորվածություն	39.6	35.0	6.7	1.937	7.2	14.5	4.2	1.856
	Միջին կարևորվածություն	13.6	8.6	6.8	1.835	38.9	42.5	4.2	1.946
	Խիստ կարևորվածություն	1.8	1.9	7.0	2.143	53.3	41.4	4.2	1.892
	Ընդամենը	100	100	6.6	1.960	100	100	4.1	1.909


Դիագրամ 1-ում ներկայացված են հարցված ուսուցիչների կարևորած գործոնները ըստ կարևորության աստիճանի, դիագրամ 2-ում՝ այդ ուսուցիչների աշակերտների միջին արդյունքները ըստ նույն

գործոնների: Յուրաքանչյուր գործոնի կարևորության աստիճանին համապատասխան ներկայացված է այն կարևորած ուսուցիչների տոկոսը:

Դիագրամ 1



Դիագրամ 2




Աղյուսակ 1-ից և դիագրամ 1-ից երևում է, որ առաջին երկու գործոնների կարևորության աստիճանը հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների դեպքում գրեթե նույն կարգի է, իսկ 3-րդ և 4-րդ գործոնների դեպքում կան որոշակի տարբերություններ, որոնք ավելի ցայտուն են արտահայտված 4-րդ գործոնի՝ դասարանների խտության դեպքում:

Դասարանների խտության գործոնը հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչները կարևորում են միանգամայն տարբեր չափով: Դիագրամ 1-ում հստակ երևում է, որ հայոց լեզվի ուսուցիչների 45%-ը այդ գործոնը չի կարևորում, 39.6%-ը քիչ է կարևորում, 13.6%-ը կարևորում է միջին չափով, և միայն 1.8%-ն է խիստ կարևորում:

Հակառակ պատկերն է հանրահաշվի ուսուցիչների դեպքում: Նրանց 53.3%-ը խիստ կարևորում է նշված գործոնը, 38.9%-ը կարևորում է միջին չափով, 7.2%-ը քիչ է կարևորում, և միայն 0.6%-ը չի կարևորում:

Դիագրամ 2-ից երևում է, որ անկախ այն հանգամանքից, որ հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչները տարբեր չափով են կարևորում դասարանների խտության գործոնը, արտաքին գնահատումից հարցման մասնակից ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորները հիմնականում մոտ են համապատասխան առարկայի միջին միավորին: Միջին միավորների վրա այդ գործոնի ազդեցության ավելի մանրամասն պատկերը տրված է դիագրամ 3-ում:

Դիագրամ 3



Դիագրամ 3-ից երևում է, որ մինչև 10 աշակերտ ունեցող դասարաններում և՛ հայոց լեզվից, և՛ հանրահաշվից դիտարկվում են առավելապես ընդհանուր միջին միավորին գերազանցող միջին միավորներ: Դասարանների խտությանը միջին և խիստ կարևորություն տվող հանրահաշվի ուսուցիչների՝ 25-ից ավելի աշակերտ ունեցող դասարաններում ընդհանուր միջին միավորից բարձր միջին արդյունքներ են դիտարկվում (5.6 և 5.2): Այդ ուսուցիչները դասավանդում են առավելապես բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում, որոնցում սովորող աշակերտների պատրաստվածության մակարդակն ավելի բարձր է, և առարկայի դասավանդման համար հատկացված ժամաքանակն ավելին է, քան մյուս հոսքերում:

Առարկայի դասավանդման համար *շաբաթական հատկացված ժամաքանակի* հետ կապված՝ դիտարկված գործոնների կարևորության չափին հետևենք ըստ հոսքերի:

Հայոց լեզվի ուսուցիչների դեպքում բնագիտական, հումանիտար և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում դասավանդողների ավելի քան 46%-ը խիստ կարևորում է աշխատանքից բավարարված լինելու գործոնը: Վերջինս շատ կարևոր է նաև ընդհանուր հոսքի ուսուցիչների 30.4%-ի և տնտեսագիտական հոսքի ուսուցիչների 59.6%-ի համար:

Ակնկալիքների գործոնը մեծ կարևորություն ունի բնագիտական, տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հայոց լեզու դասավանդողների 44-47%-ի, հումանիտար և ընդհանուր հոսքերում դասավանդողների 39%-ի համար:

Ժամաքանակի գործոնը կարևոր է տնտեսագիտական հոսքում դասավանդող հայոց լեզվի ուսուցիչների 98%-ի, ֆիզիկամաթեմատիկական հոսքի բոլոր ուսուցիչների, ընդհանուր հոսքի ուսուցիչների 57%-ի, հումանիտար հոսքի ուսուցիչների 42%-ի համար: Բնագիտական հոսքի ուսուցիչների 95%-ը այն քիչ է կարևորում կամ ընդհանրապես չի կարևորում:

Դասարանների խտության գործոնին մեծ կարևորություն է տալիս բնագիտական և հումանիտար հոսքերում հայոց լեզու դասավանդող ուսուցիչների շուրջ 20%-ը, ընդհանուր և տնտեսագիտական հոսքերում դասավանդողների 9%-ը, իսկ ֆիզիկամաթեմատիկական հոսքի ուսուցիչների մի մասը քիչ է կարևորում այս գործոնը, մի մասն էլ չի կարևորում:

Հանրահաշիվի ուսուցիչների դեպքում աշխատանքից բավարարված լինելու գործոնը մեծապես կարևորում է բնագիտական հոսքում դասավանդողների 41.1%-ը, հումանիտար, ընդհանուր և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում դասավանդողների 50-57%-ը և տնտեսագիտական հոսքի ուսուցիչների 65%-ը:

Ակնկալիքների գործոնը կարևորում է ֆիզիկամաթեմատիկական հոսքում հանրահաշիվ դասավանդողների 21.1%-ը, հումանիտար, ընդհանուր և տնտեսագիտական հոսքերում դասավանդողների 63-66.2%-ը և բնագիտական հոսքի ուսուցիչների 71.1%-ը:

Ժամաքանակի գործոնը շատ կարևոր է տնտեսագիտական հոսքում հանրահաշիվ դասավանդող գրեթե բոլոր ուսուցիչների, ֆիզիկամաթեմատիկական հոսքի բոլոր ուսուցիչների, հումանիտար, ընդհանուր և բնագիտական հոսքերի ուսուցիչների 76.3-89.3%-ի համար:

Դասարանների խտության գործոնը մեծ կարևորություն ունի բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հանրահաշիվ դասավանդող բոլոր ուսուցիչների, տնտեսագիտական հոսքի ուսուցիչների 82.4%-ի, հումանիտար հոսքի ուսուցիչների 78.6%-ի և ընդհանուր հոսքի ուսուցիչների 66.6%-ի համար:

Հետևելով վերը շարադրվածին՝ կարելի է եզրակացնել, որ ժամաքանակի և դասարանների խտության գործոնները շատ ավելի կարևոր են մաթեմատիկայի, քան հայոց լեզվի ուսուցիչների համար: Ընդ որում, ժամաքանակի գործոնը շատ կարևոր է մաթեմատիկայի ուսուցիչների մեծ մասի համար, իսկ հայոց լեզվի ուսուցիչների դեպքում այն խիստ կարևորվում է տնտեսագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հայոց լեզու դասավանդող գրեթե բոլոր ուսուցիչների, ընդհանուր և հումանիտար հոսքերում դասավանդողների շուրջ 50%-ի կողմից:

Դասարանների խտության գործոնը խիստ կարևոր է բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական հոսքերում հանրահաշիվ դասավանդող բոլոր ուսուցիչների և մյուս հոսքերում դասավանդողներից 66.6-82.4%-ի համար: Հայոց լեզվի ուսուցիչների դեպքում տոկոսները շատ ցածր են: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ դասարանի աշակերտների թիվը 20-ից ավելին լինելու դեպքում հայոց լեզվի դասաժամին դասարանը բաժանվում է 2 խմբի, և, ըստ էության, հայոց լեզվի ուսուցիչների դեպքում 4-րդ գործոնը գրեթե չի գործում:

Հարցաթերթիկի մի քանի հարցերի պատասխանների միջև դիտարկված կապերը: Առաջադիմության կանխատեսում

Այս բաժնում առանձին անդրադարձ է կատարվել առարկայի դասավանդման համար տրամադրված և ակնկալվող շաբաթական ժամաքանակին վերաբերող հարցերի միջև, ակնկալվող ժամաքանակի, ուսուցիչների աշխատանքային ստաժի և հոսքի միջև նախորդ տարվա համեմատությամբ ուսման մակարդակի փոփոխությանը և նախորդ տարում ակնկալիքների արդարացմանը վերաբերող հարցերի միջև դիտարկված կապերին: Առարկայի դասավանդման համար տրամադրված շաբաթական ժամաքանակի հետ կապված՝ կատարվել է աշակերտների առաջադիմության *վիճակագրական կանխատեսում*:

Միմյանց կապելով ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա ազդող 3-րդ գործոնի տակ խմբավորված *«Շաբաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում 2եր դասավանդած առարկայի ուսուցմանը»* (հարցաթերթիկի 6-րդ հարց) և *«Լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ քանի՞ դասաժամի անհրաժեշտություն էք գտում»* (8-րդ հարց) հարցերի պատասխանները՝ ստացվել է հետևյալ պատկերը:


Այն դեպքում, երբ ուսուցչի հարցաթերթիկի 6-րդ հարցին («Շաբաթական քանի՞ դասաժամ է տրամադրվում 11-րդ դասարանում 2եր դասավանդած առարկայի ուսուցմանը»), *հայոց լեզվի* 220 ուսուցիչների 10.9%-ը պատասխանել է 2, 9.1%-ը՝ 3, 13.6%-ը՝ 4, 12.7%-ը՝ 5, 15%-ը՝ 6, 15.9%-ը՝ 7, 5.5%-ը՝ 8 ժամ և 17.3%-ը որևէ պատասխան չի նշել, հայոց լեզվի արտաքին գնահատման միջին միավորից բարձր միջին միավորներ դիտարկվել են հայոց լեզուն շաբաթական 3 և ավելի դասաժամով դասավանդող ուսուցիչների աշակերտների մոտ: Այն ուսուցիչները, որոնք գտնում են, որ հատկացված շաբաթական դասաժամերի ավելացման անհրաժեշտություն չկա, կազմում են հայոց լեզվի ուսուցիչների 61.4%-ը, 10%-ը նշել է, որ կա ևս 1 ժամի անհրաժեշտություն, 18.2%-ը՝ 2, 10.4%-ը՝ 3-6 ժամի:

Այն դեպքում, երբ վերոհիշյալ հարցին *հանրահաշվի* 180 ուսուցիչների 2.8%-ը պատասխանել է 2, 29.4%-ը՝ 3, 8.3%-ը՝ 4, 12.8%-ը՝ 5, 0.6 %-ը՝ 6, 1.1%-ը՝ 7, 27.2%-ը՝ 8, 5%-ը՝ 9 ժամ և 12.8%-ը որևէ պատասխան չի նշել, հանրահաշվի արտաքին գնահատման միջին միավորին գերազանցող միջին միավորներ են հավաքել առավելապես հանրահաշիվը շաբաթական 5 և ավելի դասաժամով դասավանդող և

լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չտեսնող ուսուցիչների աշակերտները: Հանրահաշվի այն ուսուցիչները, որոնք գտնում են, որ հատկացված դասաժամերի ավելացման անհրաժեշտություն չկա, կազմում են հարցված ուսուցիչների 62.8%-ը: Հարցվածների 0.6%-ը նշել է, որ ցանկալի է ևս 1 ժամով ավելացումը, 26.7%-ը՝ 2, 6.1%-ը՝ 3 և 3.8%-ը՝ 4 կամ 5 ժամով: Լրացուցիչ դասաժամերի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչների աշակերտների միջին միավորները հիմնականում ցածր են ընդհանուր միջին միավորից (4.1-ից): Այս ուսուցիչներից միայն 3.3%-ի աշակերտներն են ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորներ հավաքել, ընդ որում, զգալիորեն բարձր է նրանցից 2.2%-ի աշակերտների միջին միավորը (հումանիտար, ֆիզիկամաթեմատիկական և տնտեսագիտական հոսքեր):

Դիագրամ 4-ում ներկայացված է հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչների թիվը ըստ շաբաթական հատկացված և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի: Ուղղաձիգ դասավորված յուրաքանչյուր ժամաքանակի համար գույներով ցույց է տրված ակնկալվող լրացուցիչ ժամաքանակը: Յուրաքանչյուր գույնի վրա ներկայացված է ակնկալվող տվյալ ժամաքանակը նշած ուսուցիչների թիվը: Օրինակ, շբաթական 3 դասաժամով հանրահաշիվ դասավանդող ուսուցիչներից 7-ը հատկացված ժամաքանակը բավարար է համարում և դրա ավելացում չի ակնկալում, 32-ը նշել է, որ ակնկալում է 2 ժամով ավելացում, 10-ը՝ 3 ժամով, 4-ը՝ 4 և ավելի ժամով:


Դիագրամ 4



Դիագրամում հստակ երևում է, որ հարցված ուսուցիչների մեծ մասը լրացուցիչ դասաժամի կարիք չունի: Նրանցից առավել աչքի են ընկնում շաբաթական 5, 8 և 9 ժամով հանրահաշիվ դասավանդողները (համապատասխանաբար՝ 23 (հանրահաշվի ուսուցիչների 12.8%-ը), 47 (26.1%) և 9 (5%) ուսուցիչ): Շաբաթական 3 ժամով հանրահաշիվ դասավանդող 32 ուսուցիչ (հանրահաշվի ուսուցիչների 17.8%-ը) ճիշտ է համարում շաբաթական ժամաքանակը ևս 2 ժամով ավելացնելը:


Դիագրամ 5-ում ներկայացված են հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատումից աշակերտների հավաքած միջին միավորները ըստ հատկացված շաբաթական և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի: Հորիզոնական շարքով տրված է հատկացված ժամաքանակը, որի համար գունավոր սյուններով տրված է տվյալ ժամաքանակով դասավանդողների ակնկալված լրացուցիչ ժամաքանակը: Յուրաքանչյուր սյան վրա ներկայացված է ակնկալվող տվյալ ժամաքանակը նշած ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորը:

Դիագրամ 5



Դիագրամ 6-ում ներկայացված է ուսուցիչների թիվը ըստ հոսքերի և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի: Վերջինս ներկայացված է գույներով, որոնցից յուրաքանչյուրի վրա նշված է ուսուցիչների թիվը:


Դիագրամ 6



Դիագրամ 6-ից երևում է, որ շարաթական ժամաքանակի ավելացում ակնկալող գրեթե բոլոր ուսուցիչները (158ը՝ հարցվածների 39.5%-ը) երկու առարկայի դեպքում էլ դասավանդում են հումանիտար հոսքում, և նրանց մեծ մասը (74-ը՝ այդ հոսքում դասավանդողների 46.8%-ը) գտնում է, որ լավագույն արդյունքի հասնելու համար կարելի է ավելացնել ևս 2 ժամ:

Դիագրամ 7-ում ներկայացված են միջին միավորները ըստ հոսքերի և ակնկալվող լրացուցիչ ժամաքանակի:

Դիագրամ 7



Դիագրամ 7-ից երևում է, որ անկախ ակնկալվող ժամաքանակից՝ միայն հումանիտար հոսքում է, որ հանրահաշվի միջին միավորները շատ ցածր են ընդհանուր միջին միավորից:

Վիճակագրական կանխատեսում: Շաբաթական ժամաքանակի հետ կապված՝ կատարվել է առաջադիմության **վիճակագրական կանխատեսում**, ըստ որի, բոլոր հոսքերում հարցված **հայոց լեզվի** ուսուցիչների նշած առկա շաբաթական ժամաքանակը 1 ժամով ավելացնելու դեպքում արտաքին գնահատման միջին միավորը էապես չի փոխվի: Հիշենք, որ հայոց լեզվի ուսուցիչների 61.4%-ը լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ դասաժամի ավելացման անհրաժեշտություն չի տեսնում, այսինքն, այդ ուսուցիչներին բավարարում է հատկացված ժամաքանակը: Արտաքին գնահատումից այդ ուսուցիչների աշակերտների հավաքած միջին միավորը հավասար է ընդհանուր միջինին (6.6): Ըստ կանխատեսման, եթե նույնիսկ բոլոր հարցվածներին հնարավորություն տրվի հայոց լեզուն դասավանդելու իրենց իսկ ակնկալված շաբաթական ժամաքանակով, մնացած պայմանները թողնելով անփոփոխ, արտաքին գնահատմանը մասնակցած նրանց աշակերտների ամբողջ համակազմի միջին միավորը կավելանա աննշան չափով: Փոփոխությունն ավելի նկատելի կլինի միայն հումանիտար, բնագիտական և ընդհանուր հոսքերում, որոնց աշակերտների արտաքին գնահատման կանխատեսված միջին միավորը նախկինից բարձր կլինի 0.3-ով:

Վիճակագրական կանխատեսումը ցույց է տալիս, որ եթե մաթեմատիկայի բոլոր հարցված ուսուցիչներին հնարավորություն տրվի հանրահաշիվը դասավանդելու իրենց ակնկալված շաբաթական ժամաքանակով, ապա բնագիտական հոսքում հանրահաշվի արտաքին գնահատման միջին միավորը կավելանա 0.3-ով, հումանիտար հոսքում՝ 0.2-ով, ընդհանուր հոսքում՝ 0.4-ով: Իսկ բոլոր հոսքերում առկա **հանրահաշվի** շաբաթական դասաժամերը 1-ական ժամով ավելացնելու դեպքում կբարձրանա միայն հումանիտար հոսքի աշակերտների միջին միավորը (0.6-ով): Հետևաբար, քանի որ լրացուցիչ դասաժամի ավելացման անհրաժեշտություն են տեսնում առավելապես հումանիտար հոսքում հանրահաշիվ դասավանդող ուսուցիչները, և կանխատեսումն էլ ցույց է տալիս, որ ժամաքանակը ևս 1 ժամով ավելացնելը կբարելավի այդ հոսքում սովորողների առաջադիմությունը, ուստի ենթադրվում է, որ կարելի է հնարավորության սահմաններում կա՛մ ավելացնել այդ հոսքին հատկացված մաթեմատիկայի շաբաթական ժամաքանակը, կա՛մ բեռնաթափել 11-րդ դասարանի հումանիտար հոսքի համար նախատեսված «Հանրահաշիվ» առարկայի ծրագիրը:

*** **

Դիտարկենք լավագույն արդյունքի հասնելու համար **լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չտեսնող ուսուցիչների մանկավարժական ստաժը**:

Մանկավարժական ստաժի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում: Ուսուցիչների տոկոսը հաշվարկված է լրացուցիչ դասաժամ չպահանջողների ընդհանուր թվից (248-ից), իսկ հայոց լեզվի և հանրահաշվի ուսուցիչներինը՝ ստաժի տվյալ խմբում լրացուցիչ դասաժամ չպահանջողների թվից:

Աղյուսակ 2. Ժամաքանակի ավելացման կարիք չունեցող ուսուցիչների տոկոսը ըստ մանկավարժական ստաժի

Մանկավարժական ստաժը (տարի)	Բոլոր հարցվածները	Հայոց լեզվի ուսուցիչներ	Հանրահաշվի ուսուցիչներ
0-5	22.2	61.8	38.2
6-10	7.3	50.0	50.0
11-15	8.9	72.7	27.3
16-20	13.7	50.0	50.0
21-25	12.9	40.6	59.4
26-30	16.5	58.5	41.5
31-35	8.5	52.4	47.6
36-40	7.3	44.4	55.6
41 և ավելի	2.8	42.9	57.1

Հարցված 400 ուսուցիչների 62%-ը լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն չի տեսնում: Նրանց մեջ մեծ թիվ են կազմում մինչև 5 և 26-30 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչները՝ հայոց լեզվի ուսուցիչների առավելությամբ:

Լրացուցիչ դասաժամ չպահանջողների 34.3%-ը դասավանդում է բնագիտական հոսքում, 31%-ը՝ տնտեսագիտականում: Բնագիտական հոսքում դասավանդողների 45.9%-ը հայոց լեզվի ուսուցիչներ են, 54.1%-ը՝ հանրահաշվի, տնտեսագիտական հոսքում համապատասխանաբար 57.1%-ը և 42.8%-ը:

Մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող **հայոց լեզվի** ուսուցիչներից շատերը (բացի Արագածոտնի և Վայոց ձորի մարզերից, որոնց ուսուցիչների ստաժը 10 տարուց ավելի է), ինչպես նաև Լոռու, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերի

26-30 տարվա ստաժ ունեցող ուսուցիչների մեծ մասը համարում են, որ հատկացված շաբաթական ժամաքանակը բավարար է լավագույն արդյունքի հասնելու համար: Այդ կարծիքին են նաև Երևանի ուսուցիչներից շատերը, Շիրակի մարզի 11-25 և 31-40 տարի ստաժ ունեցող, Լոռու մարզի 21-30, Արագածոտնի 11-15 և 26-30, Սյունիքի 11-15, 21-30 և 36-40, Արարատի 16-20 և 31-35, Գեղարքունիքի 36-40, Արմավիրի և Կոտայքի 11-15, Տավուշի 16-20, 26-30 և 36-40 տարվա ստաժով բոլոր ուսուցիչները:

Մինչև 5 տարվա մանկավարժական ստաժ ունեցող *հանրահաշվի* ուսուցիչների (բացի Արագածոտնի, Արարատի և Տավուշի մարզերից, որոնց ուսուցիչների ստաժը 5 տարուց ավելի է), ինչպես նաև Շիրակի, Լոռու, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի և Երևանի 21-25 տարվա ստաժ ունեցող ուսուցիչների մեծ մասը համարում են, որ հատկացված շաբաթական ժամաքանակը բավարար է լավագույն արդյունքի հասնելու համար: Այդպես են կարծում նաև Երևանի 6-20 և 31-35 տարի ստաժ ունեցող, Շիրակի մարզի 26-35, Արագածոտնի 16-20 և 31-35, Արարատի 6-10, Արմավիրի 16-20 և 26-30 Լոռու մարզի 16-20 և 36-40, Սյունիքի 16-25, Գեղարքունիքի 36-ից ավելի, Կոտայքի 21-25, Տավուշի 11-20 և 41-ից ավելի տարվա ստաժ ունեցող բոլոր հարցվածները:

Դիտարկենք նաև լրացուցիչ *2 դասաժամի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչների մանկավարժական ստաժը*:

Հայոց լեզու դասավանդողներից լրացուցիչ 2 ժամի կարիք ունի հիմնականում մինչև 5 տարվա, 16-20 տարվա և 26-35 տարվա մանկավարժական ստաժ ունեցող ուսուցիչների մի մասը: Հինգ տարվա ստաժ ունեցող ուսուցիչները Շիրակի, Սյունիքի, Գեղարքունիքի մարզերից և Երևանից են, 16-20 տարվանը՝ Արագածոտնի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերից և Երևանից, 26-35 տարվանը՝ Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Արմավիրի, Տավուշի մարզերից և Երևանից: Լրացուցիչ 2 դասաժամի կարիք ունի նաև 6-15, 21-25 և 41 տարուց ավելի մանկավարժական ստաժ ունեցող երևանցի ուսուցիչների, ինչպես նաև Վայոց ձորի մարզի 11-15, Կոտայքի մարզի 21-25 և Արագածոտնի մարզի 36-40 տարվա ստաժ ունեցողների մի մասը: Շիրակի, Արագածոտնի, Տավուշի և Կոտայքի մարզերից հայոց լեզվի լավագույն արդյունքի հասնելու համար լրացուցիչ դասաժամ ակնկալող

ուսուցիչները 2-ից ավելի ժամով ավելացման անհրաժեշտություն չեն տեսնում:

Հանրահաշիվ դասավանդող ուսուցիչներից լրացուցիչ 2 ժամի կարիք ունի մինչև 5 տարվա (Երևան և Կոտայքի մարզ), 16-20 տարվա (Շիրակի և Կոտայքի մարզեր) և 21-25 տարվա (Շիրակի և Արագածոտնի մարզեր) մանկավարժական ստաժ ունեցողների մի մասը: Լոռու, Սյունիքի, Արարատի, Գեղարքունիքի, Արմավիրի, Տավուշի և Վայոց ձորի մարզերից հանրահաշիվի դասավանդման համար լրացուցիչ դասաժամի անհրաժեշտություն տեսնող ուսուցիչներն ակնկալում են ևս երեք կամ ավելի ժամ: Լոռու մարզի այդ ուսուցիչներն ունեն մինչև 10 և 26-30 տարվա, Սյունիքիներ՝ 31 և ավելի, Արարատիներ և Տավուշիներ՝ 21-30, Գեղարքունիքիներ՝ մինչև 5 և 21-30, Արմավիրիներ՝ մինչև 5 և 21-25, Վայոց ձորիներ՝ 16-20 տարվա մանկավարժական ստաժ:

*** **

Հետևենք հարցաթերթիկի **7-րդ («Նախորդ տարվա համեմատությամբ ինչպե՞ս է փոխվել 11-րդ դասարանում սովորողների ուսման մակարդակը»), 9-2-րդ («Որքանո՞վ եք համամիտ «Աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ» մտքի հետ») և 10-րդ («Այս տարվա 11-րդ դասարանում սովորողները նախորդ ուսումնական տարում արդարացրե՞լ են Ձեր ակնկալիքները») հարցերի** միջև դիտարկվող կապերին: Հիշենք, որ այս հարցերը խմբավորվել և բնութագրում են ուսուցչի աշխատանքի արդյունավետության վրա ազդող 2-րդ գործոնը:

Հայոց լեզվի այն ուսուցիչները, որոնք համարում են, որ նախորդ տարվա համեմատությամբ բավականին բարելավվել է իրենց դասավանդած 11-րդ դասարանների ուսման մակարդակը և համարում են, որ իրենց աշխատանքը հետաքրքիր է և տարաբնույթ, 10-րդ հարցի պատասխաններից ընտրել են միայն «Հիմնականում արդարացրել են» և «Մասամբ են արդարացրել» պատասխանները: Հայոց լեզվի արտաքին գնահատումից այս ուսուցիչների աշակերտներից «հիմնականում արդարացրածների» հավաքած միջին միավորը 0.4-ով գերազանցում է ընդհանուր միջինին, իսկ «մասամբ արդարացրածներինը» 0.1-ով զիջում է: «Քիչ է բարելավվել» պատասխանն ընտրած ուսուցիչների 74%-ը

համարում է, որ նախորդ ուսումնական տարում աշակերտները չեն կարողացել արդարացնել իրենց ակնկալիքները: Ընդ որում, այդ ուսուցիչների գերակշիռ մասը համարում է, որ աշխատանքը միանգամայն կամ մասամբ է հետաքրքիր և տարաբնույթ: Մինչդեռ այդ ուսուցիչների աշակերտների միջին միավորը 0.5-ով ցածր է ընդհանուր միջինից: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ուսման մակարդակի փոփոխություն չնկատած գրեթե բոլոր ուսուցիչները, որոնք համարում են, որ աշխատանքը հետաքրքիր և տարաբնույթ է, նշել են, որ նախորդ ուսումնական տարում 2015-16 ուսումնական տարվա 11-րդ դասարաններում սովորող իրենց աշակերտները մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները: Հայոց լեզվի արտաքին գնահատումից այդ ուսուցիչների աշակերտները հավաքել են ընդհանուր միջինից 0.2-0.3-ով ցածր միջին միավորներ: Ուսման մակարդակի նվազում նկատած ուսուցիչները, ովքեր մեծամասամբ համամիտ են, որ աշխատանքը հետաքրքիր և տարաբնույթ է, համարում են, որ նախորդ ուսումնական տարում աշակերտները մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները: Այդ ուսուցիչների աշակերտները նույնպես արտաքին գնահատումից հավաքել են ընդհանուր միջինից ցածր միջին միավոր:

Հանրահաշվի ուսուցիչների դեպքում նույնպես 7-րդ, 10-րդ հարցերի և 9-րդ հարցի 2-րդ ենթահարցի պատասխանների միջև դիտարկվում են մոտավորապես նույն կարգի կապեր, ինչ որ հայոց լեզվի ուսուցիչների դեպքում, սակայն միջին միավորների առումով կա որոշակի տարբերություն: 7-րդ հարցի «Բավականին բարելավվել է» և «Քիչ է բարելավվել» պատասխանն ընտրած ուսուցիչները համարում են, որ աշխատանքը այս կամ այն չափով հետաքրքիր և տարաբնույթ է և նշել են, որ աշակերտները նախորդ ուսումնական տարում մասամբ են արդարացրել իրենց ակնկալիքները (հարցվածների 56%-ը): Իրենց աշակերտների միջին արդյունքների առումով նրանք գտնվում են ընդհանուր միջինին հավասար կամ բարձր դիրքում: 10-րդ հարցին պատասխանած և նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ուսման մակարդակի փոփոխություն չնկատած ուսուցիչների (հարցվածների 19%-ը) աշակերտների միջին արդյունքները ցածր են ընդհանուր միջին միավորից: Ի դեպ, այդ ուսուցիչների 74%-ն ընտրել է 10-րդ հարցի «Մասամբ են արդարացրել» պատասխանը:

Ամփոփում

2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակում հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչների աշխատանքի արդյունավետության և դրա վրա ազդող գործոնների ուսումնասիրության նպատակով անցկացված հարցման արդյունքների վերլուծությամբ վեր են հանվել 4 գործոններ, որոնք համառոտ ձևակերպվել են հետևյալ կերպ՝ «Աշխատանքից բավարարված լինելը», «Ակնկալիքները», «Ժամաքանակը», «Դասարանների խտությունը»:

Ուսուցչի հարցաթերթիկի գործոնային վերլուծությունից կարելի է 2 հետևություն անել, որ՝

- 1) հանրահաշվի դասավանդման համար տրամադրված շաբաթական ժամաքանակի ավելացման անհրաժեշտություն կա հանրակրթական ուսումնական հաստատությունների հումանիտար հոսքում,
- 2) դասարանների մեծ խտությունը խոչընդոտում է հանրահաշվի արդյունավետ դասավանդմանը:


Հարցման արդյունքները հավաստում են, որ 11-րդ դասարանում հայոց լեզվի և հանրահաշվի դասավանդման համար ըստ հոսքերի տրամադրված շաբաթական *ժամաքանակը*, ըստ հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծ մասի, հիմնականում բավարարում է դասավանդման գործընթացին: Նրանցից ֆիզիկամաթեմատիկական և ընդհանուր հոսքերում հայոց լեզու և հանրահաշիվ դասավանդողների, բնագիտական և տնտեսագիտական հոսքերի հանրահաշվի և հումանիտար հոսքի հայոց լեզվի ուսուցիչների աշակերտների միջին միավորները գերազանցում են արտաքին գնահատման համապատասխան ընդհանուր միջին միավորին:

Քանի որ հարցման մասնակիցներից լրացուցիչ դասաժամ ակնկալող ուսուցիչները հիմնականում հումանիտար հոսքում հանրահաշիվ դասավանդողներն են, իսկ հանրահաշվի արտաքին գնահատումից նրանց աշակերտների միջին արդյունքներն ամենացածրն են, ինչպես նաև հումանիտար հոսքում հանրահաշվի դասավանդման համար շաբաթական հատկացված ժամաքանակի՝ 1 դասաժամով ավելացումը տեսականորեն կանխատեսում է միջին միավորի բարձրացում (0.6 միավորով), ըստ այդմ առաջարկվում է միայն հումանիտար հոսքում մեկ դասաժամով ավելացնել հանրահաշվի դասավանդման համար հատկացվող շաբաթական դասաժամերի թիվը

կամ բեռնաթափել այդ հոսքի համար նախատեսված առարկայի ծրագիրը:

Ղասարանների խտության գործոնը խիստ կարևորում են հանրահաշվի ուսուցիչները, հատկապես հումանիտար հոսքում դասավանդողները: Վերլուծությունը հավաստում է, որ հումանիտար հոսքի 20-ից ավելի աշակերտ ունեցող դասարաններում սովորողների միջին արդյունքներն ամենացածրն են: Ըստ այդմ առաջարկվում է փորձել մաթեմատիկայի դասաժամերին դասարանում 20-ից ավելի աշակերտ ունենալու դեպքում նրանց բաժանել 2 խմբի, հետևել նրանց առաջադիմությանը և լավ արդյունքի դեպքում կիրառել հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում: Որպես հիմնավորում կարելի է ընդունել այն, որ թեև ՀՀ վարչատարածքային միավորների կտրվածքով դիտարկումը ցույց է տալիս, որ Երևանում և Շիրակի մարզում դիտարկված դասարաններում աշակերտների թիվը գրեթե չի ազդում առաջադիմության վրա, այնուամենայնիվ, մյուս մարզերում հայոց լեզվի և հանրահաշվի արտաքին գնահատման ընդհանուր միջին միավորներին գերազանցող միջին միավորներ դիտարկվում են առավելապես մինչև 20 աշակերտ ունեցող դասարաններում:

**ԻՐԱՎԱԿԱՆ –
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ**

No 1179-Ա/2

17 «11» 2016

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԵՐԵՐԻ 11-Ի N 1126-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյեմբերի 11-ի ՀՀ-2016-2017 ուսումնական տարվա գիտելիքների ստուգման, պետական ավարտական քննությունների կազմակերպման, անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը>> հաստատելու մասին N 1126-Ա/2 հրամանի հավելվածի՝

- 1) վերնագրում «ստուգման» բառից հետո լրացնել «ավարտական և» բառերը,
- 2) 1-ին կետից հանել «պետական» բառը,
- 3) 2-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

«2. Հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ դեկտեմբերի 24-30-ը և /կամ հունիսի 1-24-ը: 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում:

Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով :>>

4) 3-րդ և 13-րդ կետերում <<հունվարին>> բառը փոխարինել <<դեկտեմբերին>> բառով,

5) 8-րդ կետի 8-րդ ենթակետում <<ուսուցիչները>> բառը փոխարինել <<ուսուցիչը>> բառով,

6) 11-րդ կետում՝

ա.<<9-րդ և 12-րդ դասարաններում ավարտական և պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից:>> նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ. <<9-րդ դասարանում ավարտական և 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից>>,

բ. 1-ին ենթակետում <<պահանջների,>> բառից հետո լրացնել <<քննության>> բառը,

7) 12-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

<<5><<Բնագիտություն>> /<<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Աշխարհագրություն>> / առարկայից՝ գրավոր՝ սովորողի ընտրությամբ, քննությանը տրվում է 120 րոպե>>:



ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված՝
ՀՀ կրթության և
գիտության
նախարարի 2016 թ. նոյեմբերի 17 -ի
N__1179____ Ա/2
հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ
2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍՈՎՈՐՈՂԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ
ՍՏՈՒԳՄԱՆ, ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅԿԱՅՄԱՆ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության (այսուհետև՝ Հաստատություն) 4-րդ և 9-րդ դասարաններում անցկացվում են համապատասխանաբար՝ գիտելիքների ստուգում և ավարտական քննություններ՝ հունիսի 1-24-ը:
2. Հաստատությունների 12-րդ դասարաններում անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ **դեկտեմբերի 24-30-ը** և/կամ հունիսի 1-24-ը: 12-րդ դասարանի սովորողը դեկտեմբեր ամսին հանձնում է միայն այն առարկա(ներ)ի պետական ավարտական քննություն(ներ)ը, որ(ոնք)ը չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որ(ոնք)ը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով:

3. Դեկտեմբերին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչև **դեկտեմբերի 1-ը** գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 1-ից մինչև 10-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի գնահատման և թեստավորման կենտրոն (այսուհետև՝ ԳԹԿ):
4. Հունիս ամսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու դիմում-հայտերը հաստատության տնօրենը նույն ձևով ԳԹԿ է փոխանցում փետրվարի 1-ից մինչև մարտի 15-ը ներառյալ:
5. Քննությունները սկսվում են առավոտյան ժամը 10⁰⁰-ին: Սովորողները Հաստատություն են ներկայանում ժամը 9⁰⁰-ին:
6. Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գերազանցության մեդալի (այսուհետև՝ Մեդալ) հավակնորդ սովորողները թույլատրվում են քննության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն (այսուհետև՝ Նախարարություն) ներկայացված ցուցակի:
7. Քննությունների միջև ընկած օրերին դասավանդող ուսուցիչները սովորողների համար քննական առարկաներից կազմակերպում են խորհրդատվություններ՝ Հաստատության տնօրենի կողմից հաստատված ժամանակացույցով:
8. **4-րդ դասարանում** գիտելիքների ստուգումն անցկացվում է.
 - 1) **«Մայրենի»** առարկայից՝ թելադրություն. քննությանը տրվում է 60 րոպե
 - 2) **«Մաթեմատիկա»** առարկայից՝ գրավոր. քննությանը տրվում է 60 րոպե
 - 3) **«Ռուսաց լեզու»** առարկայից՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում:
 - 4) **<<Մայրենի լեզու և գրականություն>>** առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարաններում:
 - 5) Գիտելիքների ստուգման առաջադրանքները (առնվազն 4 տարբերակ) կազմում են Հաստատության մեթոդափակորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից:

- 6) Հաստատության տնօրենը հաստատում է առաջադրանքները, կնքում և ծրարում: Ծրարներից մեկը բացվում է գիտելիքների ստուգման օրը՝ քննասենյակում, սովորողների ներկայությամբ:
- 7) Գրավոր աշխատանքը գնահատվում է 10 միավորային համակարգով:
- 8) Գիտելիքների ստուգումն իրականացնում են դասավանդող ուսուցիչը և տնօրենի կողմից նշանակված ներկայացուցիչը:
9. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար գրավոր քննության ժամանակ կարող է տրվել լրացուցիչ 30-ից 40 րոպե՝ ապահովելով երեխայի կարիքին համապատասխան պայմաններ:
10. 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում անցկացվող **«Ռուսաց լեզու»**, **«Ռուս գրականություն»** (բանավոր, ռուսերենով ուսուցմամբ համապատասխան դասարանների համար) և **«Մայրենի լեզու և գրականություն»** (բանավոր, ազգային փոքրամասնությունների համար) առարկաների քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմում են տվյալ Հաստատության առարկայական մեթոդական միավորումները՝ Նախարարության կողմից երաշխավորված դասագրքերի և նյութերի հիման վրա:
11. **9-րդ դասարանում ավարտական և 12-րդ դասարանում պետական ավարտական քննական առարկաների առաջադրանքները կազմվում են ԳԹԿ-ի կողմից:** Առաջադրանքների նյութն ընտրվում է Նախարարության կողմից երաշխավորված և Հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից, շտեմարաններից:
 - 1) **«Ֆիզկուլտուրա»** առարկայի 9-րդ դասարանում պետական ավարտական քննությունը, 12-րդ դասարանում ամփոփիչ ստուգարքը ընդունվում են Հաստատության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից՝ հետևյալ կազմով. հանձնաժողովի նախագահ, դասավանդող (քննող) ուսուցիչ և հանձնաժողովի երկու անդամներ: Քննությունը կամ ստուգարքը անցկացվում են՝ համաձայն Նախարարության կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցների 9-րդ և 12-րդ ավարտական դասարանների **«Ֆիզկուլտուրա»** առարկայի քննությունների նորմատիվային պահանջների **քննության** գնահատումը՝ 10 միավորային համակարգով:

12. **9-րդ դասարանի** ավարտական քննություններն անցկացվում են.
 - 1) «**Հայոց լեզու և հայ գրականություն**» առարկայից՝ փոխադրություն. քննությանը տրվում է 90 րոպե:
 - 2) «**Գրականություն**» առարկայից՝ բանավոր:
 - 3) «**Հայոց պատմություն**» առարկայից՝ բանավոր:
 - 4) «**Մաթեմատիկա**» առարկայից՝ գրավոր. քննությանը տրվում է 120 րոպե:
 - 5) <<**Բնագիտություն**>> /<<**Ֆիզիկա**>>, <<**Քիմիա**>>, <<**Կենսաբանություն**>>, <<**Աշխարհագրություն**>> / առարկայից՝ գրավոր՝ սովորողի ընտրությամբ, քննությանը տրվում է 120 րոպե:
 - 6) «**Օտար լեզու**» («**Ռուսերեն**», «**Անգլերեն**», «**Ֆրանսերեն**», «**Գերմաներեն**» և այլ լեզուներ) առարկայից՝ բանավոր՝ սովորողի ընտրությամբ.
 - 7) «**Ֆիզկուլտուրա**» առարկայից՝ քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում):
 - 8) «**Ռուս գրականություն**» առարկայից՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար:
 - 9) <<**Մայրենի լեզու և գրականություն**>> առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների համար:
 - 10) **9-րդ դասարանում** անցկացվող «**Հայոց լեզու և գրականություն**» գրավոր քննության (փոխադրություն) կազմակերպման, անցկացման և գնահատման համար հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով:
 - 11) Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տնօրենը կամ նրա նշանակած ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ դասարանում առարկան դասավանդող ուսուցիչը (ստուգող ուսուցիչ) և ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ):
 - 12) Սովորողները քննասենյակում տեղավորվում են վիճակահանության միջոցով:
 - 13) Քննության ընթացքում քննասենյակում կարող են գտնվել միայն հանձնաժողովի անդամները:
 - 14) Սովորողները գրավոր աշխատանքը գրում են կապույտ գույնի միջուկով, տնօրենի կողմից կնքված և ստորագրված աշակերտական տետրում կամ առնվազն 4 թերթից բաղկացած աշակերտական տետրի էջերում: Աշխատանքը բաժանվում է երկու մասի՝ սևագրության (2-րդ մաս) և մաքրագրության (1-ին մաս): Ստուգվում է միայն մաքրագրությունը՝ կարմիր գույնի միջուկով:

- 15) Փոխադրության նյութը (տեքստը) կամ նյութի վերնագիրը (դասագրքի, ձեռնարկի էջանշումով, հրատարակման տարեթվով տվյալները և գնահատման չափանիշները) հաստատությունները քննության օրը ստանում են ԳԹԿ-ից կամ ԿԳ նախարարությունից՝ էլեկտրոնային եղանակով:
 - 16) 9-րդ դասարանում բանավոր քննությունները կազմակերպելու, անցկացնելու և գնահատելու նպատակով հաստատության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են հաստատության տնօրենը կամ նրա նշանակած ուսուցիչը (հանձնաժողովի նախագահ), տվյալ առարկայի ուսուցիչը (քննող ուսուցիչ) և ընթերական (տվյալ կամ հարակից առարկայի մասնագետ) :
 - 17) Սովորողները քննասենյակ են մտնում ցուցակում իրենց անունների հերթականությանը համապատասխան.
 - 18) Սովորողների ցուցակում սովորողն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում է քննատոմսը.
 - 19) Քննատոմսը ընտրելուց հետո սովորողը քննասենյակում ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանները, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները.
 - 20) Սովորողի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով
 - 21) Հաստատությունները **«Հայ գրականություն»**, **«Հայոց պատմություն»** և **«Օտար լեզու»** առարկաների բանավոր քննությունների հարցաշարերը կամ հարցատոմսերը ստանում են **«Կրթություն»** շաբաթաթերթից կամ ԳԹԿ կայքից: Քննական առաջադրանքների հարցաշարերը և հարցատոմսերը կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից:
 - 22) 9-րդ դասարանում **«Մաթեմատիկա»** և **«Բնագիտություն»** առարկաների քննությունների կազմակերպման, անցկացման, ստուգման և բողոքարկման ընթացակարգը տե՛ս սույն աշխատակարգի **19-59** կետերը:
13. **12-րդ դասարանում** պետական ավարտական քննություններն անցկացվում են.
- 1) **«Հայոց լեզու և հայ գրականություն»** առարկայից՝ գրավոր՝ **դեկտեմբերին** կամ **հունիսին**. քննությանը տրվում է 120 րոպե:
 - 2) **«Հայոց պատմություն»** առարկայից՝ գրավոր՝ **դեկտեմբերին կամ հունիսին**. քննությանը տրվում է 120 րոպե:

- 3) **«Մաթեմատիկա»** առարկայից՝ գրավոր՝ **դեկտեմբերին** կամ **հունիսին**. քննությանը տրվում է 120 րոպե:
- 4) **«Ռուս գրականություն»** առարկայից՝ բանավոր՝ ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար՝ **դեկտեմբերի** կամ **հունիսի քննաշրջանի ընթացքում՝ ըստ սովորողի ցանկության:**
- 5) **<<Մայրենի լեզու և գրականություն>>** առարկայից՝ բանավոր՝ ազգային փոքրամասնությունների դասարանների համար՝ **դեկտեմբերի** կամ **հունիսի քննաշրջանի ընթացքում՝ ըստ սովորողի ցանկության:**
14. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՌԻՊ):
15. Հատուկ հանրակրթական դպրոցներում գործում է սույն աշխատակարգը՝ պահպանելով ավարտական դասարանների համապատասխանությունը:
16. Քննական գրավոր աշխատանքները, մինչև դրանց ստուգման ավարտը, պահպանվում են քննական հանձնաժողովի նախագահի մոտ, ապա սահմանված կարգով արխիվացվում:
17. Մեդալի հավակնորդները քննություններին ներկայացնում են անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր, ծննդյան վկայական կամ Հաստատության տնօրենի կողմից տրված տեղեկանք՝ լուսանկարով:
18. Քննությունից բացակայած կամ ուշացած Մեդալի հավակնորդ սովորողը զրկվում է Մեդալ ստանալու իրավունքից:
19. Պետական ավարտական (12-րդ դասարան) քննությունները կազմակերպվում են ավարտական քննական կենտրոններում:
20. Քննական կենտրոն է դառնում յուրաքանչյուր Հաստատություն: Հաստատության տնօրենը կամ նրան փոխարինող անձն ի պաշտոնե տվյալ ավարտական քննական կենտրոնի ղեկավարն է:
21. Քննական կենտրոնում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը կարող է նշանակել օգնական, հերթապահներ:
22. Քննասենյակներում քննության ընթացքը կազմակերպելու համար քննական կենտրոնի ղեկավարը նշանակում է քննության ընթացքի կազմակերպիչներ, ովքեր չեն կարող լինել տվյալ քննական առարկայի մասնագետներ:
23. Մինչև 30 սովորող ունեցող քննասենյակում աշխատանքները համակարգում է 2 կազմակերպիչ: 30-ից ավելի սովորող ունեցող քննասենյակում առաջին 30 սովորողների համար՝ 2 կազմակերպիչ,

- մեկական կազմակերպիչ՝ յուրաքանչյուր հաջորդ 30-ի համար, ևս մեկ կազմակերպիչ՝ վերջին 20 և ավելի սովորողների համար:
24. Քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ, որը համակարգում է քննասենյակի կազմակերպիչների աշխատանքը:
 25. Քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը, քննությունը սկսվելուց մեկ ժամ առաջ, կատարում է կազմակերպիչների գրանցում և վիճակահանությամբ բաշխում կազմակերպիչներին՝ ըստ քննասենյակների:
 26. Սովորողների մուտքը քննասենյակ սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով:
 27. Սովորողը քննություններին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով՝ անձնագրով կամ ծննդյան վկայականով:
 28. Սովորողը մոտենում է վիճակահանության սեղանին և վիճակահանության թերթիկի միջոցով որոշում իր նստարանի համարը: Կազմակերպիչը սովորողների տվյալ խմբի ցուցակում գրում է սովորողի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, վիճակահանված նստարանի համարը: Սովորողը ցուցակում ստորագրում է իր տվյալների տողում՝ «նստարանի համարը» սյունակում:
 29. Քննասենյակում կայացած վիճակահանության արդյունքի համապատասխան՝ երկրորդ կազմակերպիչն օգնում է սովորողին՝ գտնելու իր տեղը և չի թույլատրում տեղափոխություններ կատարել:
 30. Քննությունը սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը ԳԹԿ ներկայացուցչից ստանում է քննական առաջադրանքների փաթեթները:
 31. Քննությունը սկսվելուց առնվազն կես ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը քննասենյակի պատասխանատուին տալիս է յուրաքանչյուր խմբի համար նախատեսված փաստաթղթերի փաթեթը՝ բացի առաջադրանքներից:
 32. Ավարտական քննություններին սովորողներին չի թույլատրվում քննասենյակ բերել բջջային հեռախոսներ կամ կապի այլ միջոցներ, տետրեր, դասագրքեր, ուսումնական և այլ ուղեցույց-ձեռնարկներ:
 33. Սովորողի՝ քննասենյակում տեղավորվելուց հետո, քննական կենտրոնի ղեկավարը կամ օգնականը քննասենյակ է բերում քննական առաջադրանքների ծրարները: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը ծրարները ցուցադրում է սովորողներին և ներկա այլ անձանց (ծնողներ, հավատարմագրված դիտորդներ)՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ծրարների փակ և

ամբողջական լինելու հանգամանքի վրա: Ծրար(ներ)ը բացելու համար պատասխանատուն հրավիրում է առաջին նստարան(ներ)ին նստած սովորողներից մեկին: Առաջին շարքում սովորողների բացակայության դեպքում՝ հրավիրվում է սովորող այլ շարքից: Ծրարների բացման մասին նշվում է արձանագրության մեջ:

34. Քննասենյակի պատասխանատուն (կազմակերպիչը) սովորողներին տեղեկացնում է քննասենյակում վարքի կանոնների պահպանման, ինչպես նաև բողոքարկման տեսակների մասին: Քննասենյակում քննության անցկացման կարգն ընթերցելուց և սովորողներին ցուցումներ տալուց հետո կազմակերպիչները բաժանում են առաջադրանքները: Սովորողը, առաջադրանքը ստանալուն պես, շապիկի համապատասխան մասում գրում է քննասենյակի և իր նստարանի համարը: Առաջադրանքների վերջնական բաշխումից հետո պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում է քննության սկզբը և ավարտը:
35. Քննասենյակից սովորողը կարող է դուրս գալ միայն խիստ անհրաժեշտության դեպքում, քննասենյակի պատասխանատուի թույլտվությամբ և միջանցքի հերթապահի ուղեկցությամբ:
36. Խմբի կազմակերպիչը ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական նյութերը հաշվարկում, արձանագրում է, իսկ քննության ավարտից հետո փաթեթավորում և հանձնում է քննասենյակի պատասխանատու կազմակերպչին:
37. Առաջադրանքի բովանդակության վերաբերյալ սովորողի հարցերը չեն քննարկվում:
38. Քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող առաջադրանքները փոխարինվում են նորով:
39. Քննության ընթացքում սովորողների կողմից առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի կենտրոնի ղեկավարից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել Նախարարության, մարզպետարանների, Երևանի քաղաքապետարանի և ԳԹԿ-ի ներկայացուցիչները:
40. Քննության ավարտից 20 րոպե առաջ քննասենյակի պատասխանատուն սովորողների ուշադրությունը հրավիրում է ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները համապատասխան ձևաթղթերի վրա անցկացնելու մասին:
41. Սովորողի կողմից սույն ընթացակարգի պահանջները խախտելու կամ դրանց չենթարկվելու դեպքում քննասենյակի պատասխանատուին իրավունք է վերապահվում մեկ անգամ

- նախագուշացված սովորողին, քննական կենտրոնի ղեկավարի հետ համաձայնեցնելով, հեռացնել քննասենյակից:
42. Հեռացվող սովորողից վերցվում են քննական նյութերը, պատասխանների ձևաթղթի էջի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից»: Քննասենյակի և խմբի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվող սովորողի համարը, հեռացման պատճառը:
 43. Քննության համար նախատեսված ժամանակի ավարտին սովորողը հանձնում է իր առաջադրանքը և ստորագրում իր անվան դիմաց: Եթե սովորողն ավարտել է աշխատանքը սահմանված ժամանակից շուտ, ապա նա կարող է այն հանձնել և, ստորագրելով իր անվան դիմաց, դուրս գալ քննասենյակից: Քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները սեղաններից հավաքում են քննական թեստերը:
 44. Սահմանված ժամկետում գրավոր աշխատանքը չավարտած սովորողներն այն հանձնում են անավարտ վիճակում:
 45. Պատասխանատուն առաջադրանքները քննության արձանագրության հետ հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին: Քննական կենտրոնի ղեկավարը, ներկայացված առաջադրանքները վերահաշվարկելով, լրացնում է քննական կենտրոնում անցկացված քննության վերջնական արձանագրությունը, որտեղ նշվում է քննության մասնակիցների, բացակաների, քննությունից հեռացվածների, որևէ պատճառով քննությունն ընդհատածների թիվը (եթե կան):
 46. Քննության ավարտից հետո սովորողների ցուցակները պահվում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ՝ մեկ տարի:
 47. Քննական առաջադրանքները ստուգվում են քննական կենտրոնի ղեկավարի հրամանով ստեղծված ստուգող հանձնաժողովի կողմից, քննության օրը՝ ժամը 14⁰⁰-ին, ԳԹԿ համակարգչային կայքում տեղադրված առաջադրանքների ճիշտ պատասխանների հիման վրա: Ստուգող հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե Հաստատության տնօրենն է:
 48. 9-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամների 50%-ը տվյալ առարկայի մասնագետներ են:
 49. 12-րդ դասարանում ստուգող հանձնաժողովի անդամները չեն կարող լինել տվյալ առարկայի մասնագետներ:
 50. Քննական արդյունքները գնահատելիս, քննական հանձնաժողովի անդամների միջև տարաձայնություն առաջանալու դեպքում հարցը լուծվում է հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ:

51. Քվեարկության արդյունքներում ստացված հավասար ձայների դեպքում վճռորոշ է՝
 - 1) 4-րդ դասարանում դասավանդող ուսուցչի առաջարկած գնահատականը,
 - 2) 9-րդ և 12-րդ դասարաններում՝ քննական հանձնաժողովի նախագահի առաջարկած գնահատականը,
 - 3) նշանակված գնահատականի հետ համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամ(ներ)ը արձանագրության մեջ կարող է(են) կատարել հատուկ նշում:
52. Ստուգումն իրականացվում է ԳԹԿ-ի կողմից հրապարակված «Ցուցումներ»-ի պահանջներին և չափանիշներին համապատասխան: Գրավոր աշխատանքի սևագրությունը չի ստուգվում և չի գնահատվում:
53. Քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են տվյալ քննության հաջորդ օրը՝ ժամը 14⁰⁰-ին: Քննական կենտրոնի ղեկավարը ցուցակների կրկնօրինակը փակցնում է քննական կենտրոնի մուտքի մոտ:
54. Քննական կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ դասարանների, ցուցակները վավերացվում են ստուգող հանձնաժողովի նախագահի կողմից:
55. Քննությունների կազմակերպման, անցկացման և արդյունքների գնահատման վերաբերյալ բողոքները կարող են լինել՝
 - 1) քննության անցկացման կարգի խախտման մասին
 - 2) քննության արդյունքների հետ անհամաձայնության մասին,
 - 3) թեստերի բովանդակության մասին:
56. Սույն կարգի 55-րդ կետի 1-ին ենթակետում նշված դեպքում սովորողը կարող է բողոքարկել քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը՝ բողոքը ներկայացնելով քննասենյակի պատասխանատուին, ով փոխանցում է այն կենտրոնի ղեկավարին: Կենտրոնի ղեկավարը տեղում քննարկում և պատասխանում է բողոքը ներկայացնողին:
57. Սույն կարգի 55-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում բողոքները ներկայացվում են ստուգող կամ քննող հանձնաժողովի նախագահին՝ բանավոր քննության դեպքում՝ քննության պահին կամ մինչև քննասենյակից դուրս գալը, գրավոր քննության դեպքում՝ քննության արդյունքները հրապարակելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում:

Գրավոր քննության բողոքի արդյունքները, ոչ ուշ քան դիմումը ընդունելուց հետո 24 ժամվա ընթացքում, գրավոր ներկայացվում է դիմողին:

58. Դիմում-բողոքների քննարկումից հետո կարող է որոշում ընդունվել քննության գնահատականի պահպանման կամ բարձրացման, ինչպես նաև իջեցման մասին, որը հրապարակվում է և ուղարկվում ԳԹԿ:
59. Բողոքարկման արդյունքների հետ անհամաձայնության դեպքում դիմումի հեղինակը կարող է բողոքարկել վերադասության կարգով, Նախարարություն և (կամ) դատարան:

<<Հանրակրթություն. գնահատում և
թեստավորում>>
տեղեկատվական - վերլուծական
հանդեսում հոդվածներ
տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրապարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:

Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրությունն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրապարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարանում:

Բովանդակություն

ՀԵՌԱՆԿԱՐ

Մ. ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ հանրակրթության զարգացման հեռանկարները 4

ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ հանրակրթության գնահատման համակարգը 16

Զ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Կրթական գործընթացի գնահատման
աստիճանակարգային մեթոդը 21

ՆԵՐԴՐՈՒՄ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Գ. ՍՐԱՊՅԱՆ

Ավագ դպրոցում հայ գրականության ուսուցման
նպատակներն ու խնդիրները 38

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

**Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, Ա. ՂԱԶԱՆՉՅԱՆ, Ն. ՍԱՐԳՍՅԱՆ,
Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

2016 թ. պետական միասնական քննությունների
արդյունքների վերլուծություն 44

Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2015-2016 ուստարում ՀՀ հանրակրթական ուսումնական
հաստատությունների 11-րդ դասարաններում
<<Հայոց լեզու>> և <<Հանրահաշիվ>> առարկաները
դասավանդող ուսուցիչների հարցման արդյունքների
վերլուծություն 93

ԻՐԱՎԱԿԱՆ – ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀՀ ԿԳ նախարարի 2016 թ. նոյեմբերի 11-ի N 1126-Ա/2
հրամանում փոփոխություններ և լրացում կատարելու
մասին 115

Աշխատակարգ և ժամանակացույց
2015-2016 ուսումնական տարվա
սովորողի գիտելիքների ստուգման,
ավարտական և պետական քննությունների
կազմակերպման և անցկացման 117

ՀԱՆԴԵՍՈՒՄ ՀՈՒՎԱԾՆԵՐ ՏՊԱԳՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ 128

Տպագրված է Գ-նահատման և թեստավորման կենտրոնում:
Տպաքանակը՝ 1300 օրինակ, 130 էջ:
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37
www.atc.am